The DNA-cisplatin mixture was incubated in 0,01 M $NaClO_4$ at 37^0C in the dark (pH~6). At time intervals from 1 min to 48 h, aliquots of the reaction mixture were withdrawn. Platination in the aliquots was stopped by adjusting NaCl concentration to 0,1 M. This chloride concentration stops cisplatin binding and transformation of intermediate monofunctional adducts at temperature lower 37^0C, but there is a well pronounced further development of this reaction if the temperature is higher 50^0C (not shown). Then the samples of DNA solution were diluted to concentration 0,075 mg/ml and frozen at -28^0C [3, 7, 8, 11].

For melting experiments, DNA was thawed and diluted to 0.04 mg/ml. The melting was carried out in 0.1 M NaCl, 0.005 M Na_2CO_3, 0.001M $NaClO_4$, 5.10^{-5}M EDTA, pH 10,5. In this buffer, the melting temperature of unmodified DNA is 65±0,3^0C. DNA helix-coil transition was registered by measuring the optical density at 260 nm as a function of temperature using a SF-26 spectrophotometer (LOMO, Russia) or Perkin-Elmer Lambda 800 UV/VIS (USA).

The results of the time dependences obtained under incubation and further melting of platinated DNA were exhibited as a relative change in melting temperature $\theta(t)= \delta T_m(t)/\delta T_{max}$ where $\delta T_m(t)$ is the time dependence of a change in melting temperature, i.e., $\delta T_m(t)=T_m(t)-T_m(t=0)$, and $\delta T_{max}=\delta T_m(t\geq 10\text{ h})$ is the maximal shift in melting temperature that is reached during 10 hours of incubation. The dependences θ(t) are almost the same for the Pt/nucleotide molar ratio r from interval 0,01 to 0,1. For these r values, almost all cisplatin binds to DNA during incubation [5].

In all calculations, the fractions of primary products (monoaquated and non-dissociated cisplatin), intermediate monofunctional and final bifunctional adducts are given in regard to total cisplatin in incubation medium.

Results and Discussion. *The kinetics of DNA thermal stability under platination*

In our previous study [7], we have found that alkaline medium (pH~10.5) makes the shift in the melting temperature caused by cisplatin (δT_m) much stronger relative to melting carried out at pH~7. Additionally, intermediate monofunctional adducts become stable against heating in alkaline conditions. Therefore the properties of both monofunctional and bifunctional adducts can be studied in melting experiments if registration of melting curves is carried out at pH~10.5 after various time intervals of DNA incubation with cisplatin in 0,01 M $NaClO_4$ at pH 6. A monotonous decrease of melting temperature with time ($T_m(t)$ occurs from the first minutes of incubation of DNA with cisplatin, and the maximal destabilization shift (δT_{max}) is reached during 10 hours. Later $T_m(t)$ and $\delta T_m(t)=T_m(t)-T_m(t=0)$ do

not change. The maximal destabilization corresponds to the shift δT_{max}= -12±1,5^{0}C for Pt/nucleotide molar ratio r=0,05.

In our present study, the shift $\delta T_m(t)$ is normalized to $\delta T_{max}=\delta T_m(t \geq 10$ h). For this relative shift in melting temperature $\theta(t)= \delta T_m(t)/\delta T_{max}$, all kinetic curves $\theta(t)$ are very close if $r \leq 0.1$. All dependences $\theta(t)$ are monotonous and change with time from zero to unity.

In fig. 1, the time dependence $\theta(t)= \delta T_m(t)/\delta T_{max}$ for r=0.05 is exhibited (curve 1 exp). The parameter $t_{1/2}$ determined as $\theta(t_{1/2})$=0.5 is equal to 70 min. A two-step change in $\theta(t)$ is well seen. To carry out separation of slow and quick steps, the curve 1 exp was differentiated and dissolved into the two constituents. Then the constituents of the differential curve were separately integrated to obtain corresponding constituents 1a and 1b of curve 1 exp (fig. 1). Constituent 1a is characterized with $t_{1/2a}$=1.2 min and its height is equal to 0.29. For constituent 1b, the value of $t_{1/2b}$ is 120 min and the height is 0.71.



Fig. 1. The time dependence of a relative change in DNA melting temperature caused by binding and transformation of cisplatin: $\theta(t)=\delta T_m(t)/\delta T_{max}$; $\delta T_m(t)=T_m(t)-T_m(t=0)$; $\delta T_{max}=T_m(t \geq 10$ h$)-T_m(t=0)$ is the maximal shift in melting temperature reached at $t>10$ h. The experimental curve (**1 exp**) and the curve calculated using Eqs.(3)-(14) (**1 cal**) are in good agreement. The curves **1a** and **1b** are the constituents of the experimental curve $\theta(t)$ (**1 exp**). At t<8 min, constituent **1a** reflects a relative change in melting temperature caused the formation and accumulation of monofunctional adducts formed from monoaquated cisplatin. The growth of $\theta(t)$ above constituent **1a** at t>8 min is depicted with constituent **1b** that mainly reflects accumulation of bifunctional adducts.

<u>Binding to DNA and further transformation of cisplatin.</u> In this study, the relative concentration (fraction) of initial monoaquated (*ma*) and non-dissociated (*c*) cisplatin, intermediate monofunctional (*m*) and final bifunctional adducts (b) are given in regard to the total concentration of cisplatin in incubation medium.

In cisplatin stock solution we use (concentration 1 mg/ml and pH 5, 6), the fraction of monoaquated cisplatin (θ_{ma}) is equal to 0,65 and the fraction of unaquated (non-dissociated) cisplatin (θ_c) is 0,35 (10). The value of $t_{1/2}$mma for formation of monofunctional adducts from monoaquated cisplatin evaluated in various studies is 1÷6 minutes ((1) and references therein). There are no other types of adducts that can influence DNA thermal stability during the first minutes of incubation, because parallel formation of monofunctional adducts from initially unaquated (non-dissociated) cisplatin (θc=0.35) is too slow ($t_{1/2}$mc~2h). Although inter-strand and intra-strand cross-links can be quickly formed from diaquated cisplatin, its fraction in the cisplatin stock solution is less 0.01 (10). Therefore these DNA modifications do not influence δTm(t) and θ(t) if t is low. Thus, the first step of the kinetic curve 1 exp in fig. 1 is caused by quick formation of monofunctional adducts from monoaquated cisplatin (*ma*) that arises in stock solution of

cisplatin. Corresponding constituent 1a reflects a relative change in melting temperature caused by the accumulation of monofunctional adducts formed from monoaquated cisplatin from stock solution (*mma*). This process overlaps the time interval $0<t<8$ min and $t_{1/2mma}$=1,2 min. At t>8 min, constituent 1a does not change. Additional increase in $\theta(t)$ above constituent 1a is exhibited by constituent 1b caused by all other types of adducts. This second step of curve 1 exp in fig. 1 corresponds to the two slow processes: transformation monofunctional adducts into final bifunctional ones and formation of monofunctional adducts (*mc*) from unaquated (non-dissociated) cisplatin (*c*) that accounts for 35 % in stock solution ($\theta_c(0)$=0,35).

Modeling of the time dependences of thermal stability and of the fractions of monofunctional and bifunctional adducts. As it was done before (1), let us consider cisplatin transformation as parallel successive pseudo-first-order reactions. Initially monoaquated cisplatin (ma) undergoes the following transformation during incubation with DNA:

monoaquated cisplatin (**ma**) → *monoadduct* (**mma**) → *biadduct* (**bma**) (1)

Initially undissociated cisplatin (c) transforms in the following way:

$$\textit{cisplatin}\ (\mathbf{c}) \xrightarrow{k_{mc}} \textit{monoadduct}\ (\mathbf{mc}) \xrightarrow{k_b} \textit{biadduct}\ (\mathbf{bc}) \qquad (2)$$

The first stage in Eq.(1) is quick (1÷6 min) and the second one is slow (~2 h) (1). In Equations (2), both stages are slow (~2 h). Equations (1)-(2) are simplified by omission of short-lived intermediates of very low relative concentration. Those are monoaquated cisplatin originated from non-dissociated cisplatin (Equations (2)) and aquated monofunctional adducts (Equations (1), (2)).

The time dependences of the fractions of all compounds involved in reactions given with Equations (1), (2) are the following:

$$\theta_c(t)= \theta_c(0)\cdot \exp(-k_{mma}\cdot t) \qquad (3)$$

$$\theta_{ma}(t)=\theta_{ma}(0)\cdot \exp(-k_{mc}\cdot t) \qquad (4)$$

$$\theta_{mc}(t)=\theta_c(0)\cdot \frac{k_{mc}}{k_{mc}+k_b}\cdot [\exp(-t\cdot k_{mc}) - \exp(-t\cdot k_b)] \qquad (5)$$

$$\theta_{mma}(\mathrm{t})=\theta_{ma}(0)\cdot \frac{k_{mma}}{k_{mma}+k_b}\cdot [\exp(-t\cdot k_{mma}) - \exp(-t\cdot k_b)] \qquad (6)$$

$$\theta_{bc}(\mathrm{t})=\theta_c(0)\cdot [1-\frac{k_b}{k_b-k_{mc}}\cdot \exp(-t\cdot k_{mc})+\frac{k_{cm}}{k_b-k_{mc}}\cdot \exp(-t\cdot k_b)] \qquad (7)$$

$$\theta_{bma}(\mathrm{t})=\theta_{ma}(0)\cdot [1-\frac{k_b}{k_b-k_{mma}}\cdot \exp(-t\cdot k_{mma})+\frac{k_{mma}}{k_b-k_{mc}}\cdot \exp(-t\cdot k_b)] \qquad (8)$$

In conditions of the cisplatin stock solution (1 mg/ml, pH 5.6), the sum of primary total fraction of non-dissociated $\theta_c(0)$ and monoaquated $\theta_{ma}(0)$ cisplatin is equal to unity:

$$\theta_c(0)+\theta_{ma}(0)=1 \qquad (9)$$

The fraction of total unbound cisplatin ($\theta_{cis_tot}(t)$) is the sum of monoaquated and non-dissociated cisplatin:

$$\theta_{cis_tot}(t)=\theta_{ma}(t)+\theta_c(t) \qquad (10)$$

The total fractions of monofunctional and bifunctional adducts are the following:

$$\theta_m(t)=\theta_{mc}(t)+\theta_{mma}(t) \qquad (11)$$

$$\theta_b(t)=\theta_{bc}(t)+\theta_{bma}(t) \qquad (12)$$

The time dependences of all fractions were calculated for parallel successive pseudo-first-order reactions (Equations (1) and (2)) with primary conditions $\theta_c(0)=0.35$, $\theta_{ma}(0)=0.65$ where $\theta_c(t)$ and $\theta_{ma}(t)$ are the fractions of non-dissociated and monoaquated cisplatin, respectively (10). We also use the values of the pseudo-first-order rate constants $k_{mc}=10{,}2\cdot10^{-5}$ and $k_b=9{,}2\cdot10^{-5}\ s^{-1}$ for formation of monofunctional adducts from non-dissociated cisplatin and bifunctional adducts from monofunctional adducts determined by Bancroft et al. (1). Fig.1 demonstrates that, in 0.01 M $NaClO_4$, $t_{1/2mma}=1.2$ min for formation of monofunctional adducts from monoaquated cisplatin. It corresponds to pseudo-first-order rate constant $k_{mma}=9.7\cdot10^{-3}s^{-1}$. Using these parameters, we have calculated time dependences of fractions of two types of monofunctional ($\theta_{mc}(t)$, $\theta_{mma}(t)$) and bifunctional ($\theta_{bc}(t)$, $\theta_{bma}(t)$) adducts arisen from non-dissociated (c) and monoaquated (ma) cisplatin, respectively.

If all cisplatin in stock solution is monoaquated ($\theta_c(0)=0$, $\theta_{ma}(0)=1$), the height of the first step of curve 1 exp and the constituent 1a in fig. 1 would be maximal, i.e., $\delta T_{max\ m}/\delta T_{max}=0{,}45$ (0,29/0,65=0,45), where δT_{max} m is a temperature shift caused by transformation of all cisplatin introduced in DNA solution into monofunctional adducts only.

At a studied cisplatin/nucleotide molar ratio (r=0.01-0.1), final cisplatin-DNA products are the same independently of cisplatin species in stock solution (1). These final products formed after 10 hours are mainly bifunctional ones (intra-strand and inter-strand cross-links account for 96 %) and their total per nucleotide amount is close to r. Therefore the final and maximal shift of melting temperature is almost fully caused by bifunctional adducts, i.e., $\delta T_{max\ b}=\delta T_{max}$, where δT_{max} is the maximal (final) shift in melting temperature, and $\delta T_{max\ b}$ is the contribution of bifunctional adducts in this final shift. Thus, $\delta T_{max\ b}/\delta T_{max}$ is equal to unity and $\delta T_{max\ m}/\delta T_{max}=0{,}45$ where $\delta T_{max\ m}$ is a temperature shift caused by transformation of all cisplatin introduced in DNA solution into monofunctional adducts only. It means that destabilizing effect of bifunctional adducts is 2,2-fold stronger than that of monofunctional ones (1/0,45). Taking into account these circumstances, the time dependence of a relative change in melting temperature can be represented in the following way:

$$\theta(t)=\delta T_m(t)/\delta T_{max}=(\delta T_{max\ m}/\delta T_{max}).\theta_m(t)+(\delta T_{max\ b}/\delta T_{max}).\theta_b(t) \qquad (13)$$

$$\theta(t)=0{,}45\cdot\theta_m(t)+\theta_b(t) \qquad (14)$$

<u>Kinetics of cisplatin transformation and its influence on temporal behavior of DNA thermal stability under platination.</u> As follows from fig. 2A, the fractions of free monoaquated (θ_{ma}) and non-dissociated (θ_c) cisplatin decrease to zero during 8 min and 10 hours, respectively. Those time intervals correspond to the time of saturation for constituents 1a and 1b in fig. 1. During the first 8 min of incubation, only monofunctional adducts arisen from monoaquated cisplatin of stock solution are formed. Their maximal fraction

($\theta_{mma}(t=8\ \text{min})=0{,}65$) is close to the initial fraction of monoaquated cisplatin in

stock solution ($\theta_{ma}(t=0)$, fig. 2A) and to the maximal total fraction of the monofunctional adducts θ_m(t=8 min) (fig. 2B):

$$\theta_{ma}(t=0) \approx \theta_{mma}(t=8 \text{ min}) \approx \theta_m(t=8 \text{ min}) \approx 0.65 \qquad (15)$$



Fig. 2. A) Calculated time dependences of fractions of undissociated ($\theta_c(t)$) and monoaquated ($\theta_{ma}(t)$) cisplatin; θ_{mc}, θ_{mma}, θ_{bc}, θ_{bma} are the fractions of monofunctional (**m**) and bifunctional (**b**) adducts arisen from undissociated cisplatin (c) and monoaquated cisplatin (**ma**). B) Calculated time dependences of the total fractions of monofunctional ($\theta_m=\theta_{mc}+\theta_{mma}$), bifunctional ($\theta_b=\theta_{bc} + \theta_{bma}$) adducts, and the total fraction of unbound cisplatin ($\theta_{cis_tot}=\theta_c+\theta_{ma}$). The following parameter values were used for calculation: $\theta_c(0)=0.35$, $\theta_{ma}(0)=0.65$, $k_{mma}=9.7\cdot10\text{-}3$ s-1, $k_{mc}=10.2\cdot10^{-5}$ s-1 (1) and kb=$9.2\cdot10^{-5}$ s^{-1} (1).

Monofunctional adducts arisen from non-dissociated cisplatin cannot be accumulated, since the rates of their formation from non-dissociated cisplatin and transformation into bifunctional adducts are almost equal, and the maximal value of their fraction is much lower ($\theta_{mc}(t=3\text{h})=0{,}13$, fig. 2A).

An increase in the fractions of bifunctional adducts arisen from monoaquated and non-dissociated cisplatin are characterized with S-shaped curves and half times about 2 and 6 hours, respectively (fig. 2A). For total fraction of bifunctional adducts ($\theta_{bma}+\theta_{bc}$), the half time is 3 hours (fig. 2B).

The time dependence of the relative thermal stability $\theta(t)=\delta Tm(t)/\delta T_{max}$ was calculated for parallel successive pseudo-first-order reactions (Equations (1) and (2)) with primary conditions $\theta_c(0)=0{,}35$, $\theta_{ma}(0)=0{,}65$ using Equations (13), (14). There is a good coincidence between calculated (1 calc) and experimental (1 exp) curves θ(t) (fig. 1). Both curves demonstrate a two-step shape. A decrease in the fraction of total cisplatin also demonstrates a similar two-step character (fig. 2B).

Besides experimental primary conditions ($\theta_c(0)=0{,}35$, $\theta_{ma}(0)=0{,}65$), additional modeling for two limiting cases was carried out, firstly, for cisplatin fully non-dissociated in stock solution ($\theta_c(0)=1$, $\theta_{ma}(0)=0$) and, secondly, for fully monoaquated cisplatin ($\theta_c(0)=0$, $\theta_{ma}(0)=1$). All three dependences $\theta(t)$ are shown in fig. 3. It is seen that the state of cisplatin in stock solution strongly influences temporal behavior of DNA stability. If all cisplatin in stock solution is monoaquated ($\theta_{ma}(0)=1$), then the first step is markedly higher relative to the present experiment, in which $\theta_{ma}(0)=0{,}65$. If cisplatin is fully non-dissociated ($\theta_{ma}(0)=0$), the "quick" first step disappears and the shape of the curve is mainly determined by accumulation of bifunctional adducts.

Computer modeling of a change in $\theta(t)= \delta T_m(t)/\delta T_{max}$ without thermal impact of monofunctional adducts formed from non-dissociated cisplatin demonstrates their weak influence on $\theta(t)$ (fig. 3). It means that the second step in the curve $\theta(t)= \delta T_m(t)/\delta T_{max}$ mainly reflects accumulation of final bifunctional adducts.



Fig. 3. Calculated time dependences of a relative change in melting temperature at various starting conditions: $\theta_c(0)=0$, $\theta_{ma}(0)=1$; $\theta_c(0)=1$, $\theta_{ma}(0)=0$; $\theta_c(0)=0.35$, $\theta_{ma}(0)=0.65$ (curve **1 calc** from fig. 1); and the same dependence calculated without thermal impact of monofunctional adducts formed from undissociated cisplatin. The values of $\theta_c(0)$ are shown for curve identification.

The first step of $\theta(t)$ that corresponds to accumulation of monofunctional adducts from monoaquated cisplatin is well resolved because $t_{1/2a}=t_{1/2mma}=1{,}2$ min is a hundred times lower than the time of transformation of monofunctional adducts into bifunctional ones ($t_{1/2b}\approx t_{1/2mb}\approx$ 2h) and the time of formation of monofunctional adducts from non-dissociated cisplatin ($t_{1/2mc}$~2h). Therefore monofunctional adducts arisen from monoaquated cisplatin can be accumulated before their further transformation and give a resolved step.

Monofunctional adducts arisen from non-dissociated cisplatin cannot be accumulated before their further transformation and give a resolved step, since the rates of their formation from non-dissociated cisplatin and transformation into bifunctional adducts are almost equal. The maximal contribution of monofunctional adducts from non-dissociated cisplatin in $\theta(t)$ is only 0.06 (fig. 3) and the maximal value of their fraction $\theta_{mc}(t=3\text{h})=0{,}13$, i.e., both the impact and fraction of monofunctional adducts originated from monoaquated cisplatin is five times higher: their maximal contribution in $\theta(t)$ is 0.29 (fig. 1, curve 1a) and $\theta_{mma}(t=8$ min) is close to 0,65 (fig. 2A).

Thus the results of modeling demonstrate that, during the time interval $0<t<8$ min, only monofunctional adducts arisen from monoaquated cisplatin from stock solution determine the shift in melting temperature $\delta T_m(t)$. The maximal fraction of monofunctional adducts and their maximal impact on DNA melting temperature occur at $t=8$ min. That maximal fraction is equal to the initial fraction of monoaquated cisplatin in incubation medium (and in stock cisplatin solution). At $t>10$ hours, only bifunctional adducts determine the value of thermal stability and their fraction is close to unity. The separate determination and comparison of the impacts of monofunctional adducts at $t=8$ min and bifunctional adducts at $t>10$ h, and further calculation of the per adduct thermal effect demonstrate a two-fold stronger thermal destabilization of the double helix by a bifunctional adduct relative to a monofunctional one.

A kinetic curve of a change in DNA thermal stability under incubation with cisplatin is characterized with a two-step shape. The first "quick" step is caused by formation and accumulation of monofunctional adducts arisen from monoaquated cisplatin from stock solution. The second step is caused by all other processes that are much slower, but it predominately reflects the accumulation of bifunctional adducts, although there is some influence of intermediate monofunctional adducts arisen from initially non-dissociated cisplatin. The state of cisplatin in stock solution strongly influences the shape of the kinetic curve of a change DNA in thermal stability. If all cisplatin is initially monoaquated, then the first step is the highest. If cisplatin is fully non-dissociated, the "quick" first step is absent and a change in thermal stability mainly reflects the accumulation of bifunctional adducts.

In this case, the fraction and impact of monofunctional adducts is small, because of they cannot be accumulated in a large amount, since the rates of their formation from non-dissociated cisplatin and transformation into bifunctional adducts are almost equal.

Acknowledgements:

This work was supported by Belarusian-Armenian grant 11RB-017 and Belarusian Republican Foundation for Fundamental Research X13-068.

REFERENCES

1. *Bancroft D.P., Lepre C.A. and Lippard S.J.* 195Pt NMR Kinetics and Mechanistic studies of cis- and trans-diamminedichloroplatinum (II) binding to DNA J. Am. Chem. Soc., *112*, 6860-6871, 1990.
2. *Davies M.S., Berners-Price S.J. and Hambley T.W.* Slowing of Cisplatin Aquation in the Presence of DNA but Not in the Presence of Phosphate: Improved Understanding of Sequence Selectivity and the Roles of Monoaquated and Diaquated Species in the Binding of Cisplatin to DNA. Inorg. Chem., *39*, 5603-5613, 2000.
3. *Galyuk E.N., Fridman A.S., Vorob'ev V.I., Haroutiunian S.G., Sargsyan S.A., Hauruk M.M. and Lando D.Y.* Compensation of DNA stabilization and destabilization effects caused by cisplatin is partially disturbed in alkaline medium. J. Biomol. Struct. Dyn., *25*, 407-418, 2008.
4. *Ho Y.-P., Au-Yeung S. C.F. and To K.K.W.* Platinum-Based Anticancer Agents: Innovative Design Strategies and Biological Perspectives. Med. Res. Rev., *23*, 633-655, 2003.
5. *Kleinwachter V., Rau H.* A study of DNA interaction with platinum cytostatics. Studia Biophysica, *103,*1, 5-12, 1984.
6. *Lando D.Y., Egorova V.P., Krot V.I., and Akhrem A.A.* Determination of protein contaminants in DNA preparations of high purity. Molecular Biology, *30*, 701-706, 1996. (Russian), Engl. Transl. 30, 418-421.
7. *Lando D.Y., Galyuk E.N., Chang Chun-Ling, Hu Chin-Kun*. Temporal behavior of DNA thermal stability in the presence of platinum compounds. Role of monofunctional and bifunctional adducts. Journal of Inorganic Biochemistry, *117*, 1, 164-170, 2012.
8. *Novakova O., Vrana O., Kiseleva V.I. and Brabec V.* DNA interactions of antitumor platinum(IV) complexes. Eur. J. Biochem., *228*, 616-624, 1995.
9. Wang D. and Lippard S.J. Cellular processing of platinum anticancer drugs. Nat. Rev. Drug. Discov., *4*, 307-320, 2005.
10. *Yotsuyanagi T., Usami M., Noda Y. and Nagata M.* Computational consideration of cisplatin hydrolysis and acid dissociation in aqueous media: effect of total drug concentrations. International Journal of Pharmaceutics, *246*, 95-104, 2002.
11. *Zakovska A., Novakova O., Balcarova Z., Bierbach U., Farrell N. and Brabec V.* DNA interactions of antitumor trans-[PtCl2(NH3)(quinoline)]. Eur J Biochem., *254*, 547-557, 1998.

Received on 26.04.2013

Հայաստանի Գիտությունների Ազգային Ակադեմիա
Национальная Академия Наук Армении
National Academy of Sciences of Armenia
Հայաստանի Կենսաբանական Հանդես
Биологический Журнал Армении
Biological Journal of Armenia

• *Փորձարարական և տեսական հոդվածներ* • ***Экспериментальные и теоретические статьи*** •
•***Experimental and theoretical articles***•

Հայաստանի կենսաբ. հանդես, 3(65), 2013

ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՎՏԱԿՆԵՐԻ ՊԼԱՆԿՏՈՆԱՅԻՆ ՋՐԻՄՌՈՒՌՆԵՐԻ ՏԵՍԱԿԱՅԻՆ ԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թ.Գ. ԽԱՉԻԿՅԱՆ, Լ.Ռ. ՀԱՄԲԱՐՅԱՆ, Ռ.Հ. ՀՈՎԱՆՆԻՍՅԱՆ, Ժ.Հ. ՄԿՐՏՉՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի
Հիդրոէկոլոգիայի և ձկնաբանության ինստիտուտ
tkhachikyan@mail.ru

Ուսումնասիրվել են Սևանա լճի հիմնական վտակների պլանկտոնային համակեցության որակական և քանակական ցուցանիշները: Հայտնաբերվել են պլանկտոնային ջրիմուռների 124 տեսակներ, որոնցից 91-ը հանդիսացել են ջրերի օրգանական աղտոտվածության կենսաինդիկատորներ: Բոլոր վտակներում քանակական ցուցանիշներով գերակշռել են β-մեզոսապրոբ տեսակները:

Պլանկտոն – տեսակային կազմ – ինդիկատոր տեսակներ – ջրի որակ

Изучены количественные и качественные показатели планктона основных притоков оз. Севан. Выявлены 124 вида планктонных водорослей, из которых 91 является стойким биоиндикатором органического загрязнения вод. Во всех притоках по количественным показателям превалировали β-мезосапробные виды.

Планктон – видовой состав – виды – индикаторы – качество воды

The quantitative and qualitative parameters of Lake Sevan main tributaries waters plankton community were investigated. The 124 species of phytoplankton were detected, 91 out of which represented the bioindicator of water organic pollution. The β-mesosaprobe species were dominating by their quantitative results in all tributaries waters.

Plankton – variety – indicator species – water quality

Ջրային էկոհամակարգերի ուսումնասիրություններում որպես ջրերի որակի գնահատման զգայուն ինդիկատորներ օգտագործում են նաև կենսաբանական օրգանիզմները [3]: Քանի որ պլանկտոնային ջրիմուռները որպես հիդրոէկոհամակարգերի տրոֆիկ շղթաների առաջնային օղակ ընդունակ են բավականին արագ արձագանքելու միջավայրի փոփոխություններին, այդ առումով նրանց տեսակային կազմի հետազոտությունները շատ արժեքավոր են: Սակայն որպեսզի հետազոտությունների արդյունքները լինեն լիարժեք և համադրելի, ջրային էկոհամակարգերի վիճակի գնահատումը կատարվել է պլանկտոնային ջրիմուռների և որակական, և քանակական ցուցանիշների հիման վրա:

Նյութ և մեթոդ: Ուսումնասիրված գետերից Լիճքը (34,0 կմ^2 և 8 կմ), Մաքենիսը (124,0 կմ^2 և 24,6 կմ), Արգիճին (387,0 կմ^2 և 49,7 կմ), Մասրիկը (680,0 կմ^2 և 42,4 կմ), Արփան (250 մլն մ^3) և Վարդենիսը (114,6 կմ^2 և 27,5 կմ) թափվում են Մեծ Սևան, իսկ Գավառագետը (480,0 կմ^2 և 40,4 կմ) և Ձկնագետը (96,0 կմ^2 և 21,3կմ)՝ Փոքր Սևան [7]: Աշխատանքի համար նյութ են ծառայել 2010 թ. մարտից նոյեմբեր ընկած ժամանակահատվածում Սևանա լիճ թափվող ութ գետերից (Գավառագետ, Արգիճի, Լիճք, Վարդենիս, Արփա, Մաքենիս, Մասրիկ, Ձկնագետ) վերցված ամենամսյա փորձանմուշները: Փորձանմուշների նախնական և հետագա լաբորատոր մշակումները

կատարվել են ըստ ջրակենսաբանության մեջ ընդունված մեթոդների [1]: Ուսումնասիրվել է ֆիտոպլանկտոնային համակեցության որակական և քանակական կազմը: Ջրիմուռների տեսակային կազմի որոշումը կատարվել է տեսակի իդենտիֆիկացման համընդհանուր ճանաչում գտած որոշիչների և ուղեցույցների օգնությամբ [5,8,11-13]:

Արդյունքներ և քննարկում: 2010 թ. հետազոտությունների արդյունքում Սևանա լիճ թափվող հիմնական վտակներում հայտնաբերվել են ջրիմուռների 124 տեսակներ: Տեսակային բազմազանությամբ գերակշռել են դիատոմային ջրիմուռները՝ կազմելով 86 տեսակ: Կանաչ ջրիմուռները ներկայացել են 20 տեսակներով, իսկ կապտականաչ ջրիմուռները՝ 18: Ըստ տվյալների, 1990-1991 թթ. ընթացքում Սևանա լիճ թափվող Մասրիկ, Արփա, Գավառագետ և Մաքենիս գետերի ֆիտոպլանկտոնային համակեցության հետազոտության արդյունքում նս դիտարկվել էին նմանատիպ արդյունքներ [9]:

Դիատոմային ջրիմուռներ: Դիատոմային ջրիմուռները ներկայացել են 86 տեսակով, որը կազմել է ֆիտոպլանկտոնային համակեցության տեսակային բազմազանության 69%-ը: Գետերում բարձր քանակական ցուցանիշներով գերակշռել են *Fragilaria, Diatoma, Melosira, Cymbella, Ceratoneis, Navicula, Nitzschia, Cyclotella, Stephanodiscus* և *Cocconeis* ցեղերի տեսակները: Առավելագույն թվաքանակ (3 մլն. 743 000 բջ/լ) և կենսազանգված (15,6 գ/մ^3) գրանցվել է հուլիսին՝ Արփա դիտակետում: Դոմինանտել են *Melosira granulata, Melosira italica* և *Fragilaria crotonensis* տեսակները: Օգոստոսին Արփա դիտակետում դիտվել է նվազագույն թվաքանակ (3900 բջ/լ) և կենսազանգված (0,02 գմ^3):

Ըստ աշխարհագրական տարածվածության, դիատոմային ջրիմուռների հայտնաբերված տեսակների 50 %-ը հանդիսացել են հյուսիսային տեսակներ, իսկ 31 %-ը եղել են կոսմոպոլիտներ, որոնց բնորոշ է առավել գլոբալ տարածվածությունը, 7 %-ը կազմել են հյուսիս-ալպիական տեսակները [4]: Խուրսևիչի բնորոշմամբ, էվտրոֆ հիդրոէկոհամակարգերում գերակշռում են դիատոմային ջրիմուռների կոսմոպոլիտ տեսակները, մինչդեռ մեզոտրոֆ հիդրոէկոհամակարգերում գերակշռում են հյուսիսային տեսակները, ինչը բնորոշ է եղել հետազոտված գետերին [10]: Դիատոմային ջրիմուռները հանդիսանում են ջրի հանքայնացման ինդիկատորներ [4]: Դիատոմային ջրիմուռների հայտնաբերված տեսակների շուրջ 67 %-ը եղել են չեզոք, 10,3 %-ը՝ հալոֆիլներ, 7 %-ը՝ հալոֆոբներ [4]: Ըստ ջրի pH-ի նկատմամբ ռեակցիայի, դիատոմային ջրիմուռների հայտնաբերված տեսակների 61 %-ը եղել են ալկալաֆիլներ, 18 %-ը՝ չեզոք, իսկ 3,4 %-ը կազմել են ացիդոֆիլ տեսակները, որոնք գետերում արձանագրվել են բավականին ցածր քանակական ցուցանիշներով և հաճախականությամբ: Այդ տեսակներն են եղել *Pinnularia nobilis, Navicula rotaena* և *Tabellaria fenestrata*: Դիատոմային ջրիմուռների 86 տեսակներից 67-ը հանդիսացել են ջրերի օրգանական աղտոտվածության կենսաինդիկատորներ: Դրանցից 46%-ը եղել են β-մեզոսապրոբ, 21%-ը՝ o-β-մեզոսապրոբ, 9 %-ը՝ α-մեզոսապրոբ, 7 %-ը՝ o-օլիգոսապրոբ, 6 %-ը՝ β - α–մեզոսապրոբ, իսկ 11 %-ը՝ խառը տեսակներ [2, 6]: Հետազոտված գետերում բարձր թվաքանակ և կենսազանգված ցուցաբերել են β-մեզոսապրոբ տեսակների շուրջ 53 %-ը, o-β-մեզոսապրոբ տեսակների՝ 62 %-ը [աղ.1]:

Կապտականաչ ջրիմուռներ: Գետերում կապտականաչ ջրիմուռները ներկայացել են 18 տեսակներով, որը կազմել է տեսակային բազմազանության 14,5 %-ը: Ռեոպլանկտոնի մշտական ներկայացուցիչներն են եղել *Aphanothece clathrata* (2000-148000 բջ/լ, 0,003-0,3 գ/մ^3) և *Microcystis aeruginosa* (2000-28000 բջ/լ, 0,001-0,08 գ/մ^3) տեսակները: Երկուսն էլ պլանկտոնային տեսակներ են, չեզոք են pH-ի և ջրի աղայնության նկատմամբ: Կապտականաչ ջրիմուռների առավելագույն թվաքանակ (321000 բջ/լ) և կենսազանգված (0,9 գ/մ^3) դիտարկվել է հուլիսին՝ Մաքենիս գետում: Դոմինանտել է *Aphanothece clathrata* տեսակը, իսկ սուբդոմինանտ է եղել *Oscillatoria limosa* տեսակը: Նվազագույն թվաքանակ (1300 բջ/լ) և կենսազանգված (0,003 գ/մ^3) դիտվել է օգոստոսին՝ Արփա գետում: *Microcystis aeruginosa, Aphanazimenon flose-aque* (10000-30000 բջ/լ, 0,07-0,2 գ/մ^3), ինչպես նաև *Oscillatoria* (2000-70000 բջ/լ, 0,005-0,3 գ/մ^3) և *Spirulina* (13000-40000 բջ/լ, 0,03-0,1 գ/մ^3) ցեղերի որոշ տեսակներ, որոնք հայտնաբերվել են գետերում, հանդիսանում են տոքսիկ: Կապտականաչ ջրիմուռների 18 տեսակներից 14-ը եղել են ջրերի օրգանական աղտոտվածության կենսաինդիկատորներ [2, 6]: Դրանցից 42 %-ը հանդիսացել են β-մեզոսապրոբ, 21 %-ը՝ α-մեզոսապրոբ, 7 %-ը՝ o-β-մեզոսապրոբ, 7 %-ը՝ β-α-մեզոսապրոբ, իսկ մնացածը՝ խառը (աղ.1):

Կանաչ ջրիմուռներ: Հետազոտված գետերում հայտնաբերվել են կանաչ ջրիմուռների 20 տեսակ: Գերակշռել են *Ankistrodesmus* (1300-9300 բջ/լ և 0,001-0,05 գ/մ^3), *Oocystis* (1300-10000 բջ/լ և 0,007-0,04 գ/մ^3) և *Coelastrum* (9300-20000 բջ/լ և 0,04-0,09 գ/մ^3) ցեղատեսակները: Առավելագույն թվաքանակ (30000 բջ/լ) դիտարկվել է հուլիսին՝ Լիճք գետում, իսկ առավելագույն կենսազանգված (0,3 գ/մ^3)՝ Մաքենիս գետում: Առավելագույն թվաքանակը դիտվել է *Coelastrum microporum* տեսակի զարգացմամբ, իսկ առավելագույն կենսազանգվածը, որը դիտվել է 5300 բջ/լ թվաքանակի դեպքում, պայմանավորված է եղել խոշոր *Pandorina morum* գաղութային տեսակի զարգացմամբ: Կանաչ ջրիմուռների նվազագույն թվաքանակը հետազոտված շրջանում եղել է 1300 բջ/լ, իսկ նվազագույն կենսազանգվածը՝ 0,001 գ/մ^3: Հայտնաբերված կանաչ ջրիմուռները եղել են հիմնականում պլանկտոնային տեսակներ, գերակշռել են կոսմոպոլիտները, մեծ մասը չեզոք են եղել pH-ի և ջրի աղայնության նկատմամբ: Կանաչ ջրիմուռների 20 տեսակներից 10-ը հանդիսացել են ջրերի օրգանական աղտոտվածության կենսաինդիկատորներ [2,6]: Դրանց 50%-ը եղել են β-մեզոսապրոբ, 30%-ը՝ o-β-մեզոսապրոբ, 10 %-ը՝ β-α-մեզոսապրոբ, 10%-ը՝ p-α մեզոսապրոբ տեսակներ [աղ.1]:

Աղ.1. Սևանա լճի հիմնական վտակների պլանկտոնային ջրիմուռների տեսակային կազմը և էկոլոգիական բնութագիրը

	Տեսակի անվանումը	Բնակա-տեղին	Ինդիկատորային բնութագիրը	Դիտակետեր							
				1	2	3	4	5	6	7	8
	Դիատոմային ջրիմուռներ										
1	Achnanthes clevei Grun. var clevei	պլ$_1$	β		+				+		
2	Achnanthes minutissima Kutz.	պլ$_1$	o-β	+	+				+		+
3	Amphora ovalis Kutz. var. ovalis	բ	β		+			+	+	+	
4	Anomoeonis sphaerophora (Kutz.)	բ	β -α		+						
5	Asterionella formosa Hass	պլ	o-β			+		+	+	+	
6	Ceratoneis arcus Kutz.	պլ$_1$	o-β	+	+	+	+	+	+	+	+
7	Cocconeis pediculus Ehr	պլ$_1$	β	+							+
8	Cocconeis placentula Ehr.	պլ$_1$	o	+	+	+	+	+	+	+	+
9	Cyclotella comta (Ehr.) Kutz.	պլ	β	+	+			+	+		
10	Cyclotella kutzingiana Thw.	պլ	β	+	+	+	+		+		+
11	Cyclotella stelligera Cl. et Grun.	պլ	β						+		
12	Cymatepleura elliptica (Breb) W. Sm.	բ	β		+				+	+	+
13	C. solea (Breb) W. Sm.	բ	β -α	+					+	+	
14	Cymbella affinis Kutz.	պլ$_1$	β	+				+			
15	C. cistula (Hempr.) Grun.	պլ$_1$	β		+		+	+			
16	C. helvetica Kutz.	պլ$_1$	o	+				+			
17	C. lanceolata (Ehr)V.H.	պլ$_1$	β								+
18	C. prostrata (Berk.) Cl.	պլ$_1$	β	+	+	+	+	+	+	+	+
19	C. ventricosa Kutz.	պլ$_1$	o-β	+	+	+	+	+	+	+	+
20	Diatoma elongatum Ag.	պլ	o-β							+	
21	D. hiemale (Lyngb.)Heib.	պլ$_1$	x	+	+	+	+	+	+	+	+
22	D. vulgare Bory var. vulgare	պլ$_1$	β	+	+	+	+	+	+	+	+
23	Didymosphenia geminata (Lyngb.) M. Schmidt	պլ$_1$	x		+		+				
24	Epithemia zebra(Ehr.) Kutz.	պլ$_1$	β								+
25	Fragilaria capucina Desm.	պլ	o-β	+	+	+	+	+	+	+	+
26	F. construens (Ehr.) Grun	պլ$_1$	β	+	+	+	+	+	+	+	+
27	F. crotonensis Kitt.	պլ	o-β	+	+	+	+	+	+	+	+
28	Gomphonema acuminatum Ehr. var. acuminatum	պլ$_1$	β						+	+	
29	G. angustatum Grun	պլ$_1$	β	+			+	+	+	+	+
30	G. olivaceum (Lyngb.) Kutz.	պլ$_1$	β						+	+	
31	Gyrosigma acuminatum Rbh.		o-β							+	
32	Hantzschia amphioxys (Ehr.) Grun.	բ	α		+						
33	Melosira granulata (Ehr.) Ralfs.	պլ	β		+	+					
34	M. islandica O. Mull	պլ	β		+	+		+	+		
35	M. italica Ehr. Kutz	պլ	β					+	+		
36	M. varians Ag.	պլ	β	+	+	+	+	+	+	+	+
37	Meridion circulare (Grev.)Ag.	պլ$_1$	x-o	+	+	+	+	+	+	+	+
38	Navicula bacilloformis Grun	բ	էվրիսապրոբ					+	+		+

39	N. cryptocephala Kutz.	բ	α	+						+	+
40	N. dicephala (Ehr.) W.Sm.	բ	o-β	+			+		+		
41	N. lanceolata (Ag.) Kutz.	բ	էվրիսապրոբ		+		+				
42	N. menisculus Schum. var menisculus	բ	β -α	+			+		+		+
43	N. pupula Kutz. var pupula	բ	β	+			+	+	+	+	
44	N. radiosa Kutz.	բ	β			+				+	
45	N. rhynchocephala Kutz.	բ	α	+						+	+
46	Nitszchia angustata Kutz.		α	+					+	+	
47	N. amphibia Grun. Nitszchia kutzingiana Hilse		β -α				+				
48	N. linearis W.Sm. var linearis	բ	o-β								
49	N. dissipata (Kutz.) Grun.		o-β	+	+	+			+		
50	N. kutzingiana Hilse	պ	էվրիսապրոբ		+		+	+	+		
51	N. palea(Kutz.) W. Sm.var palea	բ	α		+				+		
52	N. microcephala Grun.		β	+		+			+		
53	N. fonticola Grun.		o-β		+					+	+
54	Pinnularia major Kutz.	բ	β	+			+	+			
55	P. microstauron (Ehr.) Cl.	բ	o	+							+
56	P. mesolepta	բ	o	+	+				+		
57	P. nobilis Ehr.	բ	o				+		+		
58	Rhoicosphenia curvata (Kutz.) Grun.	պ1	β	+	+	+	+	+	+	+	+
59	Stauroneis anceps Ehr.	բ	β	+	+	+	+	+	+	+	+
60	Stephanodiscus astraea (Ehr.)Grun.	պ	o-β	+		+	+		+	+	
61	S. hantzchii Grun..	պ	α	+	+	+		+	+	+	+
62	Surirella ovata Kutz.	բ	β	+					+	+	
63	S. robusta Ehr.var. splendid (Ehr.) V.H.	բ	β	+					+	+	
64	S. angustata	բ	β		+						
65	Synedra acus Kutz	պ	β							+	
66	S. ulna(Nitzsch.)Ehr.	պ1	β	+	+	+	+	+	+	+	+
67	Tabellaria fenestrata (Lyngb) Kutz.	պ	o-β	+				+	+	+	+
Կապտականաչ ջրիմուռներ											
1	Aphanizomenon flose-aqua Ralfs.	պ	β						+		+
2	Aphanothece clathrata Wet. G.S. West	պ	β	+	+	+	+	+	+	+	+
3	A. stagnina B.-Peters, et eitl	պ	x-o		+				+		+
4	Microcystis aeruginosa (Kutz.) Elenk.	պ	β	+	+	+	+	+	+	+	+
5	Oscillatoria limosa Ag.	պ	β -α					+	+	+	
6	Os. limnetica Lemm.	պ	β						+	+	
7	Os.formosa Bory	պ	α	+	+				+		
8	Os.brevis (Kutz.)Gom.	պ	α	+							
9	Os.geminata Meneghini	պ	β	+	+						
10	Os. putrida Schmidle	պ	p						+	+	
11	Phormidium foveolarum Gom.	պ	α		+			+	+		
12	P.inundatum Kütz	պ	o						+		+
13	P.papyraceum Kutz.	պ	o-β						+		
14	S.platensis Gom.	պ	β								+
Կանաչ ջրիմուռներ											
1	Ankistrodesmus falcatus (Ralfs)	պ	β -α	+	+					+	+
2	Botryococcus braunii Kutz.	պ	o-β			+		+			
3	Clorella vulgaris Beijer.	պ	p-α	+	+						+
4	Closterium monilifirum Ehr.	պ	β		+					+	+
5	Coelastrum microporum Nageli	պ	β	+			+			+	
6	Oocystis borgei Snow	պ	o-β				+				
7	O. lacustris Chodat	պ	o-β			+	+		+	+	
8	Pandorina morum O.F.Müller	պ	β		+						
9	Scenedesmus obliquus (Turp.) Kutz.	պ	β						+		
10	S. quadricuada(Turp.) Breb.	պ	β								+

Պ-պլանկտոն, բ-բենթոս, պ1-պերիֆիտոն, β-բետտա-մեզոսապրոբ, α-ալֆա-մեզոսապրոբ, o-օլիգոսապրոբ, o-β-օլիգո-բետտա-մեզոսապրոբ, p-α-պոլի-ալֆա-մեզոսապրոբ, x-քսենոսապրոբ, x-o-քսենոօլիգոմեզոսա-պրոբ: Դիտակետեր՝ 1-Մասրիկ, 2-Մաքենիս, 3-Արփա, 4-Վարդենիս, 5-Արգիճի, 6-Լիճք, 7-Գավառագետ, 8- Ձկնագետ

2010 թ. Սևանա լճի հիմնական վտակներում ֆիտոպլանկտոնային համակեցության հետազոտությունների վերլուծության արդյունքում պարզվել է, որ գետերում տեսակային բազմազանությամբ, ինչպես նաև քանակական ցուցանիշներով

(4000-3743000 բջ/լ և 0,02-15,6 գ/մ^3), գերակայել են դիատոմային ջրիմուռները: Կանաչ ջրիմուռները հանդիսացել են սուբդոմինանտ՝ ըստ տեսակային բազմազանության, իսկ կապտականաչ ջրիմուռները՝ ըստ քանակական ցուցանիշների: Ըստ ֆիտոպլանկտոնային ջրիմուռների տեսակային բազմազանության, գետերը կարելի է ներկայացնել հետևյալ կերպ.

Լիճք-Մասրիկ-Գավառագետ-Մաքենիս-Ձկնագետ-Արգիչի-Վարդենիս-Արփա

Ըստ պլանկտոնային համակեցության, տարեկան միջին թվաքանակի և կենսազանգվածի ցուցանիշների, գետերը դասակարգվել են հետևյալ կերպ՝ Արփա-Լիճք-Արգիճի-Մասրիկ-Վարդենիս-Մակենիս-Ձկնագետ-Գավառագետ (ըստ թվաքանակի), Արփա-Արգիճի-Լիճք-Մասրիկ-Վարդենիս-Ձկնագետ-Մաքենիս-Գավառագետ (ըստ կենսազանգվածի): Արդյունքների վերլուծությունը ցույց է տվել, որ 1990-1991 թթ.-ին և 2010 թ.-ի ընթացքում գետերում որական և քանակական ցուցանիշներով դոմինանտել են դիատոմային ջրիմուռները, սակայն 1990-1991 թթ.-ին կանաչ ջրիմուռները ներկայացել են առավել հարուստ տեսակային կազմով, իսկ կապտականաչ ջրիմուռները՝ համեմատաբար աղքատ: 1990-1991թթ. ընթացքում գետերում, ըստ սապրոբայնության աստիճանի, գերակայել են β-մեզոսապրոբ տեսակները, ինչը փաստել է գետերի թույլ օրգանական աղտոտվածության մասին [9]: 2010 թ. Սևանա լճի հիմնական վտակներում հայտնաբերված 124 տեսակներից 91-ը հանդիսացել են ջրերի օրգանական աղտոտվածության կենսաինդիկատորներ, որոնցից 46 %-ը հանդիսացել են β-մեզոսապրոբ տեսակներ, 20 %-ը՝ o-β-մեզոսապրոբ, 7 %-ը՝ α-մեզոսապրոբ, 7%-ը՝ β-α-մեզոսապրոբ, մնացածը եղել են խառը տեսակներ: Ելնելով β-մեզոսապրոբ տեսակների տոկոսային առավելությունից և ընթացիկ բարձր քանակական ցուցանիշներից՝ Սևանա լճի հիմնական վտակները կարելի է դասել β-մեզոտրոֆ ջրային էկոհամակարգերի խմբին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Абакумов В.А.* Руководство по методам гидробиологического анализа поверхностных вод и донных отложениях, Ленинград ,,Гидрометеоиздат,, с. 79-91, 1983.
2. *Баринова С.С., Медведева Л.А.* Атлас водорослей-индикаторов сапробности (Российский Дальний Восток). Владивосток; Дальнаука, 364 с., 1996.
3. *Бухтиярова Л.Н. Bacillariophyta* в биомониторинге речных экосистем. Современное состояние и перспективы использования. Альгология, *9*, 3, с. 89-103,1999.
4. *Давыдова Н.Н.* Диатомовые водоросли–индикаторы природных условий водоемов в голоцене., Л., изд.-во '' Наука", 243 с., 1985.
5. *Киселев И.А., Зинова А.Д., Курсанов Л.И.* Определитель низших растений. Водоросли, *2*, М., 312 с., 1953.
6. *Макрушин А.В.* Библиографический указатель по теме "Биологический анализ качества вод" с приложением списка видов-индикаторов. Л., 60 с., 1974.
7. *Оганесян Р.О.* Озеро Севан вчера, сегодня... , Ереван, с. 478, 1994.
8. *Прошкина-Лавренко А.И., Макарова И.В.* Водоросли Каспийского моря. Изд-во ,,Наука,, , Л., 205 с. 1968.
9. *Худоян А.А.* Фитопланктон основных притоков озера Севан. Дисс. канд. на соиск.учен. ст. биол. наук, Ереван, 1994.
10. *Хурсевич Г.К.* История развития диатомовой флоры озер Нарочанского бассейна. Минск: Наука и техника, 152с. ,1976.
11. *Царенко П.М.* Краткий определитель хлорококковых водорослей Украинской ССР, с. 206, 1990.
12. *Streble H; Krauter D;* Das Leben im Wassertropfen. Prague, 415p., 2002.
13. *Heinz Streble,* Das Leben im Wassertropfen, Kosmos, Stuttgard, 2001.

Ստացվել է 04.10.2012

Հայաստանի Գիտությունների Ազգային Ակադեմիա
Национальная Академия Наук Армении
National Academy of Sciences of Armenia

Հայաստանի Կենսաբանական Հանդես
Биологический Журнал Армении
Biological Journal of Armenia

•Փորձարարական և տեսական հոդվածներ •Экспериментальные и теоретические статьи•
•Experimental and theoretical articles•

Յայաստանի կենսաբ. հանդես, 3(65), 2013

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԲԵՐ ՄԱՐԶԵՐԻՑ ՄԹԵՐՎԱԾ ԽՆԿԱԾԱՂԻԿ ՍՈՎՈՐԱԿԱՆԻ ԽՈՏԻ *(HERBA ORIGANI VULGARIS)* ՄԵՋ ՖԼԱՎՈՆՈԻԴՆԵՐԻ ԵՎ ԴԱԲԱՂԱՆՅՈՒԹԵՐԻ ՈՐԱԿԱՔԱՆԱԿԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Ա.Վ. ՄՈՂՐՈՎՅԱՆ

Մ.Հերացու անվան պետական բժշկական համալսարան
Ֆարմակոգնոզիայի ամբիոն
n.chichoyan@mail.ru

Կատարվել է ՀՀ ֆլորայի խնկածաղիկ սովորականի խոտի (*Herba Origani vulgaris*) ֆլավոնոիդների ու դաբաղանյութերի որակաքանակական վերլուծությունը: Հետազոտության արդյունքները ցույց տվեցին, որ ֆլավոնոիդների շարքում որակապես առկա են ֆլավոնոլներ, աուրոններ, ֆլավոններ, խալկոններ, կատեխիններ, անտոցիաններ: Ֆլավոնոիդների հանրագումարն ըստ լյուտեոլինի կազմում է 3.4-3.8%:

Պարզվեց, որ հումքում պարունակվում են կոնդենսված դաբաղանյութեր, որոնց քանակական պարունակությունը կազմում է 18-22 %: Հետազոտությունը ցույց տվեց, որ Հայաստանում վայրի աճող խնկածաղիկ սովորականի խոտը պարունակում է բարձրաքանակ կենսաբանորեն ակտիվ նյութեր:

Խնկածաղիկ սովորական – ֆլավոնոիդներ – դաբաղանյութեր – որակական, քանակական վերլուծություն

Проведен качественный и количественный анализ флавоноидов и дубильных веществ в траве душицы обыкновенной (*Herba Origani vulgaris*), произрастающей в различных регионах Армении. Результаты исследования показали, что в ряду флавоноидов присутствуют флавонолы, ауроны, флавоны, халконы, катехины, антоцианы. В итоге сумма флавоноидов по лютеолину составляет 3.4-3.8 %.

Результаты анализов показали, что в сырье содержатся конденсированные дубильные вещества, в количестве от 18 до 22%, а в траве душицы обыкновенной, произрастающей в различных регионах Армении, большое количество биологически активных веществ.

Душица обыкновенная – флавоноиды – дубильные вещества – качественный, количественный анализ

The qualitataive and quantitative analysis of flavonoids and tannins containing in Herba Origani vulgaris growing in native flora was studied. The presence of aurons, flavonols, flavones, chalcons, catechines, anthocyanes in the range of flavonoids was revealed. The sum of flavonoids by luteoline is 3.4-3.8%. that raw material contains condensed tannins (by regions). These results showed that the raw material (in content of 18-22%) can serve as source of biologically active substances such as flavonoids and tannins.

Oregano ordinary – flavonoids – tannins – quantitative, qualitative analysis

Վերջին տասնամյակում նկատվում է գործնական բժշկության մեծ հետաքրքրությունը բուսական ծագման դեղապատրաստուկների նկատմամբ: Սա դիտվում է ոչ միայն զարգացող (Հնդկաստան, Չինաստան, Վիետնամ և այլն), որոնք ավանդաբար կիրառում են վիթխարի տեսակազմով դեղաբույսեր, այլ նաև հզոր քիմիական արդյունաբերություն ունեցող զարգացած երկրներում (ԱՄՆ, Ճապոնիա, Գերմանիա և այլն [7]:

Ներկայումս գիտագրական շատ աղբյուրների ուշադրության կենտրոնում են այնպիսի կենսաբանորեն ակտիվ նյութեր, ինչպիսիք են ֆենոլային միացությունները, որոնք սինթեզվում են ծաղկավոր բույսերում [16]: Թեև գրական տվյալները շատ հաճախ իրար հակասում են, այնուամենայնիվ, ֆենոլային միացությունները՝ մասնավորապես, ֆլավոնոիդները և դաբաղային նյութերը, ունեն բժշկական լայն կիրառություն [12]: Հանդիսանալով բենզ- γ -պիրոնի ածանցյալներ, ֆլավոնոիդները, որպես երկրորդային կենսասինթեզի արգասիքներ, դրսևորում են բարձր կենսաբանական ակտիվություն [13]:

Ֆլավոնոիդները կարևոր նշանակություն ունեն մարդու օրգանիզմի համար. հակաօքսիդանտներ են, ունեն բակտերիցիդ, հակամանրէային, միզամուղ, հակաբորբոքային հատկություններ, հանդիսանում են ասկորբինաթթվի կայունացուցիչներ, օժտված են P վիտամինային ակտիվությամբ, կարգավորում են անոթային պատերի թափանցելիությունը, իջեցնում նրանց փխրունությունը [13, 16]: Ֆենոլային միացությունների շարքում պակաս կարևոր չեն դաբաղային նյութերը կամ տանիդները, որոնք պարունակվում են (20-30%) գրեթե բոլոր բարձրակարգ բույսերում, այդ թվում և՝ խուլեղինջազգիներ ընտանիքին (Lamiaceae) պատկանող շատ բույսերում:

Բժշկության մեջ դաբաղանյութերի կիրառումը պայմանավորված է նրանց կապող, հակաբորբոքային, բակտերիցիդ, արնեկանգ, հակաթունային, հակալուծային ազդեցությամբ [13]: Այս տեսանկյունից, գիտական մեծ հետաքրքրություն է ներկայացնում խնկածաղիկ սովորականի խոտը (*Herba Origani vulgaris*): Խնկածաղիկ սովորականի խոտը պարունակում է եթերայուղ (0.12% -1.2%), որի կազմում մտնում են ֆենոլներ (44%)՝ կարվակրոլ, թիմոլ, ցիմոլ, գերանիլացետատ (2.63% – 5%), սելինեն, α-տույոն, α-տերպինեն,մոնոտերպենային սպիրտներ, ֆլավոնոիդներ, դաբաղանյութեր (մինչև 19%), վիտամին C (ծաղիկներում՝ 166 մգ %, տերևներում՝ 565 մգ%, ցողունում՝ 58 մգ%) [18]: Գրականության մեջ արձանագրվել են բազմաթիվ աշխատանքներ, որոնք վերաբերում են աշխարհագրական տարբեր վայրերից մթերված խնկածաղիկների հումքերի քիմիական կազմի ուսումնասիրությանը [11]: Կատարվել է եթերայուղի, ֆենոլային միացությունների, դաբաղային նյութերի որակաքանակական վերլուծություն բույսի վեգետացիայի տարբեր փուլերում [4, 9, 10,17]:

Վերլուծելով գիտագրական աղբյուրները, հետազոտության նպատակը համարեցինք հայրենական ֆլորայի տարբեր բնակլիմայական պայմաններում աճող խնկածաղիկ սովորականի (*Origanum vulgare* L.) խոտի մեջ կենսաբանորեն ակտիվ նյութերի՝ ֆլավոնոիդների ու դաբաղանյութերի, որակաքանակական բաղադրության ուսումնասիրումը:

Նյութ և մեթոդ: Որակական և քանակական հետազոտությունների համար հումք է ծառայել 2012 թ.՝ հուլիս-օգոստոս ամիսներին մթերված Տավուշի, Կոտայքի (Հրազդան), Գեղարքունիքի (Սևան), Լոռու մարզերի խնկածաղիկ սովորականի խոտը [6]:

Ֆլավոնոիդների ու դաբաղանյութերի հայտնաբերման համար կատարվել են գունավորման և նստեցման ռեակցիաներ:

Որակական ռեակցիաների համար օգտագործվել են դեղաբուսական հումքի ջրային (դաբաղանյութերի համար) և սպիրտային (ֆլավոնոիդների համար) լուծամզվածքները [6]: Ֆենիլ–բենզ–γ–պիրոնի օղակի ու ֆլավոնոիդների առանձին տեսակների հայտնաբերման համար կիրառվել են վերականգնման ռեակցիաներ [14]:

Դաբաղանյութերի քանակական որոշման նպատակով (հումքի ջրային լուծամզվածքում) օգտագործվել են գրավիմետրիկ և տիտրման մեթոդները [2,6]:

Հումքի սպիրտային լուծամզվածքում ֆլավոնոիդների հանրագումարն ըստ լյուտեոլինի, որոշվել է Գեորգիևսկու մեթոդի համաձայն՝սպեկտրոֆոտոմետրիկ եղանակով: Լուծույթների օպտիկական խտությունները չափվել են СФ-46 սպեկտրոֆոտոմետրով, 10 մմ կյուվետում, 315 նմ ալիքի տիրույթում [5]:

Հետազոտությունները կատարվել են ԵՊԲՀ Ֆարմակոգնոզիայի ամբիոնում և ՀՀ ԳԱԱ հիդրոպոնիկայի պրոբլեմների ինստիտուտի լաբորատորիայում:

Արդյունքներ և քննարկում: Հետազոտության արդյունքները ցույց տվեցին, որ, խնկածաղիկ սովորականի հումքը պարունակում է կոնդենսված դաբաղանյութեր, ֆլավոնոլներ, ֆլավոններ, աուրոններ, խալկոններ, կատեխիններ, անտոցիաններ (աղ. 1, 2): Ընդ որում, ծաղկման սկզբում տարբեր մարզերից մթերված հումքում դաբաղային նյութերի և ֆլավոնոիդների քանակական պարունակությունը համապատասխանաբար կազմեցին 18-22.3% և 3.4-3.84% (աղ. 3): Բնականաբար, քանակական այս տարբերությունները պայմանավորված էին աշխարհագրական և տեխնոգեն մի շարք գործոններով:

Աղ.1. Խնկածաղիկ սովորականի խոտի՝ ջրային հանուկում դաբաղային նյութերի որակական հայտնաբերման արդյունքները

Ռեակտիվ	Գույնը	Հայտնաբերվող նյութը
10%-անոց NaOH	Ձեյթունականաչ	Դաբաղային նյութեր
Երկաթ-ամոնիակային շիբի 1%-անոց սպիրտային լուծույթ	Կանաչասև	Կոնդենսվող դաբաղանյութեր
10%-անոց քացախաթթվի ու 10%-անոց կապարի ացետատի լուծույթ	Կանաչասև	Կոնդենսվող դաբաղանյութր
1%-անոց ժելատինի լուծույթ	Պղտորություն	Դաբաղայի նյութեր
Խինինի աղաթթվային լուծույթ	Սպիտակադեղին նստվածք	Դաբաղային նյութեր

Աղ.2. Խնկածաղիկ սովորականի խոտի՝ սպիրտային հանուկում ֆլավոնոիդների որակական հայտնաբերման արդյունքները

Ռեակտիվ	Գույնը	Հայտնաբերվող նյութը
Ցիանիդինային ռեակցիա (Սինոդի փորձ)	Նարնջակարմիր	Ֆլավոնոլներ
Mg, խիտ HCl, 95^{0} սպիրտ	Կարմիր	Ֆլավոնոիդներ
$AlCl_3$-ի 2%-անոց սպիրտային լուծույթ	Դեղնականաչ	Ֆլավոնոիդներ
0.5%-անոց $FeCl_3$-ի սպիրտային լուծույթ	Կանաչ	Դիօքսիֆենոլային ֆլավոնոիդներ
Կապարի ացետատի 10%-անոց լուծույթ	Դեղնանարնջագույն	Աուրոններ, ֆլավոններ, խալկոններ
HCl	Կարմիր	Խալկոններ, աուրոններ, կատեխիններ, անտոցիաններ
Հիմքի 1%-անոց սպիրտային լուծույթ	Դեղին	Ֆլավոններ

Աղ.3. Խնկածաղիկ սովորականի օդաչոր հումքի դաբաղային նյութերի (ջրային հանուկում) և ֆլավոնոիդների (սպիրտային հանուկում) քանակական պարունակությունն ըստ մարզերի (n=6)

Մարզ	Դաբաղանյութերի քանակական պա-րունակությունը,%		Ֆլավոնոիդների հանրագումարն ըստ լյուտեոլինի, %		Ֆլավ. հանրագումարն ըստ լյուտեոլինի տրա-մաչափիչ գրաֆիկի, մկգ	Օպտիկական խտություն
	M±m	p	M±m	p		
Կոտայք	22.29±0.57	0.032	3.84±0.40	0.933	76×10^{-6}	0.6325
Տավուշ	20.36±0.53		3.80±0.34		75×10^{-6}	0.6245
Լոռի	18.17±0.67	0.882	3.53±0.44	0.858	69.8×10^{-6}	0.588
Գեղարքունիք	18.03±0.63		3.41±0.46		69×10^{-6}	0.5875

Պարզվեց, որ Կոտայքի մարզում, որտեղ, ըստ գրականության տվյալների՝ գերակշռում են կավաավազային չեզոք լեռնային սևահողերը, երկաթի հանքավայրերը, բարձր խոնավությունը, արևի ջերմությունը [1], խնկածաղիկ սովորականի խոտում ֆլավոնոիդների հանրագումարն ըստ լյուտեոլինի տրամաչափիչ գրաֆիկի (C) կազմեց 76 մկգ, օպտիկական խտությունը (D)՝ 0.6325, ֆլավոնոիդների քանակական պարունակությունը՝ 3.84 %, իսկ դաբաղանյութերի քանակական պարունակությունն ըստ տանինի՝ 22.3%: Վերջինս ամենաբարձր ցուցանիշն էր մյուս մարզերի համեմատ: Տավուշի մարզում վայրի աճող խնկածաղիկ սովորականի խոտում գրանցվեցին հետևյալ ցուցանիշները՝ ֆլավոնոիդների հանրագումարն ըստ լյուտեոլինի տրամաչափիչ գրաֆիկի (C) 75 մկգ, օպտիկական խտությունը (D) 0.6245, ֆլավոնոիդների քանակական

պարունակությունը՝ 3.8%, դաբաղանյութերինը՝ 20.4%: Նման ցուցանիշները միանշանակ կարելի է բացատրել այս մարզին բնորոշ բնակլիմայական առանձնահատկություններով. բազմամետաղային հանքավայրեր, անտառային գորշ կրազերծ հողեր (հումուսը՝ 5.9%, pH<7), տարեկան 1930 ժ արևոտություն, խոնավ կլիմա, չափավոր ջերմություն [1]:

Бактерии Leptospirillum spp. – адгезия на пирите – биоокисление пирита

Leptospirillum sp. str.ZC isolated from bioleaching pulp of zinc concentrate is capable of oxidizing Fe (II) in the range of temperatures 30-40^{0}C. It has been shown that the growth of *Leptospirillum* sp. str. ZC together with sulfur oxidizing *Acidithiobacillus albertensis* str.SO-2 promotes its adhesion on pyrite and significantly enhances the efficiency of pyrite bioleaching. It has been revealed that in case of mixed culture the cells of *Leptospirillum* sp. str. ZC are adhered on pyrite surface only after its initial colonization by sulfur oxidizing bacteria. The correlation between pyrite biooxidation and adhesion of *Leptospirillum* spp. bacteria on mineral surface has been found. It is supposed that bioleaching of pyrite by *Leptospirillum* spp. bacteria occurs by means of indirect contact leaching.

Leptospirillum spp. bacteria – bacterial adhesion pyrite – pyrite biooxidation

Կենսաօքսիդացումը բակտերիաների միջոցով սուլֆիդային ապարների նախամշակման գործընթաց է, որի ընթացքում քայքայվում է պիրիտի կամ արսենապիրիտի բյուրեղավանդակը, ազատվում դրանցում ներփակված ոսկին և մատչելի դառնում հետագա կորզման համար ցիանացման եղանակով [7]: Վերջին տարիների հետազոտությունները վկայում են, որ 40^{0}C-ում գործող ոսկի-արսենապիրիտային և պիրիտային հանքաքարերի կենսաօքսիդացման արտադրական ռեակտորներում գերա- կշռող երկաթ օքսիդացնող բակտերիաները *Leptospirillum* spp. (հիմնականում *Leptospiril - lum ferriphilum*)

բակտերիաներն են [6, 14, 17, 22]: Բարձր Fe^{3+}/Fe^{2+} հարաբերությունը, բարձր ջերմաս-տիճանը (40^{0}C), ինչպես նաև pH-ի ծայրահեղ ցածր արժեքները (pH 1,0) առավել նպաստավոր են այդ ցեղի բակտերիաների կենսագործունեության համար [10, 18]: *Leptospirillum* ցեղը ընդգրկում է *L. ferrooxidans* (I խումբ), *L. Ferriphilum* (II խումբ) և *L. ferrodiazotrophum* (III խումբ) տեսակները: Լեպտոսպիրիլները գրամբացասական, ացիդոֆիլ, ծռված ձողիկներ են, խիստ քեմոլիթոավտոտրոֆ, որոնք ֆիքսում են ածխաթթու գազը՝ օգտագործելով Fe (II)-ի օքսիդացման էներգիան [2, 5, 6,12]:

Վերջին շրջանում գիտնականները 40^{0}C-ից բարձր ջերմաստիճանի պայմաններում ընթացող ապարների կենսաօքսիդացման և կենսատարրալվացման գործընթացներում առանձնապես կարևորում են *Leptospirillum* ցեղի տեսակները և նրանց խառը կուլտուրաներն այլ բակտերիաների հետ [2, 9, 16, 21]:

Սուլֆիդային ապարների կենսաօքսիդացման կամ կենսատարրալվացման անհրաժեշտ պայման է բակտերիաների կողմից կենսաթաղանթի առաջացումը՝ որպես բակտերիաապար փոխազդեցության ձև [19, 22]: Կենսաթաղանթի արտաբջջային պոլիմերային նյութերը միջնորդավորում են բջիջների ամրացումը ապարին, ինչպես նաև կենսատարրալվացման գործընթացում ապարի մակերեսին ընթացող էլեկտրաքիմիա-կան ռեակցիաները [15, 20]: Սակայն *Leptospirillum* spp. բակտե-րիաների ադհեզիայի և ապարների տարրալվացման գործընթացի համահարաբերակցության վերաբերյալ քիչ տվյալներ կան:

Ցինկի խտահումքի տարրալվացման պուլպից մեկուսացվել է *Leptospirillum* spp. բակտերիա, որն ընդունակ է օքսիդացնելու Fe (II)՝ 30-40^{0}C ջերմաստիճանային միջակայքում:

Աշխատանքի նպատակն է եղել ուսումնասիրել մեկուսացված *Leptospirillum* sp. բակտերիայի կենսաբանական առանձնահատկությունները և ադհեզիայի ընդունակությունը կապված պիրիտի կենսաօքսիդացման հետ:

Նյութ և մեթոդ: <u>*Leptospirillum* spp. բակտերիաների մեկուսացումը</u>: *Leptospirillum* spp. բակտե-րիաների մեկուսացման նպատակով 9K սննդամիջավայրը վարակվել է ցինկի տարրալվացման պուլպի նմուշով և ինկուբացվել 7-10 օրվա ընթացքում 37^{0}C-ի պայմաններում [1]:

Մաքուր կուլտուրաները ստացվել են Մաննինգի [1] և $FeTSB_0$ [13] պինդ սննդամիջավայրերի վրա հարստացված կուլտուրաների ցանքսի արդյունքում աճած դեղին կամ դեղնագորշ գաղութներից: Մանրադիտակային հետազոտության համար բակտերիաները ներկվել են բյուրեղական մա-նուշակագույնով:

<u>Պիրիտի տարրալվացումը</u>: Պիրիտի տարրալվացման նպատակով օգտագործվել են նոր մե-կուսացված *Leptospirillum* sp. շտ. ZC-ը, ինչպես նաև նախկինում նկարագրված ծծումբ օքսիդացնող *A.albertensis* շտ. SO-2-ը [3]: Բակտերիաներն աճեցվել են որպես էներգիայի աղբյուր Fe^{2+} կամ S^0 պարունակող 9K սննդամիջավայրերում: Աճի լոգարիթմական փուլում բջիջները հավաքվել են ցենտրիֆուգմամբ 6000 g պայմաններում 10 րոպե տևողությամբ: Հավաքված կենսազանգվածը լվացվել է թթվեցրած սննդամիջավայրով և կրկին սուսպենզվել նույն սննդամիջավայրում: Տարրալվացման նպատակով օգտագործվել է Հայաստանի Շամլուղի հանքավայրի պիրիտը՝ FeS_2 (43-63 մկմ): Պիրիտի կշռվածքները տեղավորվել են 250 մլ կոլբաների մեջ, թրջվել թորած ջրով և մանրէազերծվել: Այնուհետև կոլբաների պարունակությանը ավելացվել է 50 մլ 9K սննդամիջավայր, (pH 2,0) և բակտերիաների սուսպենզիա:

Պուլպի խտությունը (Պ:Հ) հաշվարկվել է որպես պիրիտի զանգվածի հարաբերություն սննդամիջավայրի ծավալին: Տարրալվացման փորձերն կատարվել են պարբերական ռեժիմի և թա-փահարման պայմաններում (180 պտ/րոպե) 37^{0}C -ում: Պիրիտի օքսիդացման ինտենսիվությունը գնահատվել է ըստ միջավայր անցած Fe^{3+}, Fe^{2+} իոնների քանակության:

<u>Բակտերիաների ադհեզիան</u>: Բակտերիաների ադհեզիան պիրիտի մակերեսին ուսումնասիրվել է հիմնականում առաջին երկու, որոշ դեպքերում՝ 24 ժ ընթացքում: Կենսունակ բջիջների քանակությունը որոշվել է սահմանային տասնապատիկ նոսրացումների մեթոդով, բջիջների առավել հավանական թիվը՝ ըստ Մակ-Կրեդիի աղյուսակի [4]: Ադհեզված բջիջների քանակությունը որոշվել է որպես ներմուծված բակտերիաների սկզբնական տիտրի և որոշակի ժամանակահատված անց հեղուկ փուլում դիտված բջիջների քանակության տարբերություն: Ադհեզիայի աստիճանը որոշվել է՝ որպես բջիջների սկզբնական տիտրի նկատմամբ ամրացած բջիջների թվի տոկոսային հարաբերություն:

<u>Մետաղների իոնների քանակական անալիզը</u>: Fe^{2+} և Fe^{3+} իոնները որոշվել են կոմպլեքսոմետրիկ տիտրմամբ տրիլոն Trilon Б-ով, ընդհանուր երկաթը՝ AAS 1N ատոմաբսորբցիոն սպեկտրոֆոտոմետրով՝ օդ–պրոպան–բութան բոցի կիրառմամբ:

Արդյունքներ և քննարկում: <u>*Leptospirillum* spp. բակտերիաների մեկուսացումը</u>: Ցինկի խտահումքի տարրալվացման պուլպերից մեկուսացվել է *Leptospirillum* spp. բակտերիաների օրիգինալ շտամ՝ շտ. ZC-ը (նկ.1): Բջիջներն իրենցից ներկայացնում են վիբրիոններ՝ 0,12-0,13 x 0,6-1,0 մկմ չափերով (նկ. 2):



ա բ

Նկ.1. Մեկուսացված *Leptospirillum* sp. շտ. ZC-ի գաղութները (ա) $FeTSB_0$ և (բ) Մաննինգի սննդամիջավայրերի վրա



Նկ.2. Բյուրեղական մանուշակագույնով ներկված *Leptospirillum* sp. շտ. ZC-ի միկրոլուսանկարը (1 պիկսել (px) = 263,6 միկրոմետր)



Նկ.3. Fe^{2+}-ի օքսիդացումը մեկուսացված *Leptospirillum* sp. շտ. ZC-ի միջոցով տարբեր ջերմաստիճանների (ա) և pH-ի (բ) պայմաններում (տևողությունը՝ 3 օր)

Մեկուսացված *Leptospirillum* sp. շտ. ZC-ի աճը երկարժեք երկաթ պարունակող սննդամիջավայրում դիտվել է 30-40 ^{0}C ջերմաստիճանային միջակայքում, օպտիմալ ջերմաստիճանը կազմել է 37^{0}C (նկ. 3 ա): pH-ի ազդեցությունը բակտերիայի աճի և երկարժեք երկաթի օքսիդացման ակտիվության վրա ուսումնասիրվել է կուլտիվացման առաջին օրերի ընթացքում, քանի դեռ միջավայրի pH-ի էական փոփոխություն տեղի չի ունեցել: pH-ի օպտիմալ արժեքը կազմել է 2,0, աճի ներքին սահմանը՝ 1,4 (նկ. 3 բ):

<u>*Leptospirillum* sp. շտ. ZC-ի ադհեզիան պիրիտի վրա և պիրիտի տարրալվացումը</u>: Ուսումնասիրվել է պիրիտի տարրալվացումը ցինկի խտահումքից մեկուսացված երկաթ օքսիդացնող *Leptospirillum* sp. շտ. ZC-ի մաքուր և ծծումբ օքսիդացնող *A.albertensis* շտ. SO-2-ի հետ խառը կուլտուրայի միջոցով: Պարզվել է, որ *Leptospirillum* sp. շտ. ZC-ի մաքուր կուլտուրայի ակտիվությունը պիրիտի օքսիդացման գործընթացում չի տարբերվում չինոկուլացված ստուգիչից, իսկ *A.albertensis* շտ. SO-2-ի մաքուր կուլտուրան ցուցաբերում է պիրիտի տարրալվացման շատ ցածր ակտիվու- թյուն: Սակայն *Leptospirillum* sp. շտ. ZC-ի *A.albertensis* շտ. SO-2-ի հետ համատեղ աճեց ման դեպքում խառը կուլտուրայի

ակտիվությունը 40-50 և 15-20 անգամ գերազանցել է համապատասխանաբար ստուգիչի կամ *Leptospirillum* sp. շտ. ZC-ի և *A.albertensis* շտ. SO-2-ի մաքուր կուլտուրաների ակտիվությունը (նկ. 4):



Նկ.4. Պիրիտի (FeS_2) տարրալվացումը *Leptospirillum* sp. շտ. ZC-ի և *A.albertensis* շտ. SO-2-ի և նրանց խառը կուլտուրայի միջոցով

Ստացված արդյունքները թույլ են տալիս եզրակացնել, որ *Leptospirillum* sp. շտ. ZC-ը ցուցաբերում է պիրիտի օքսիդացման բարձր ակտիվություն միայն ծծումբ օքսիդացնող բակտերիաների հետ համատեղ աճեցնելիս:

Հետազոտությունները ցույց են տվել, որ ինչպես մաքուր, այնպես էլ խառը կուլտուրաների դեպքում ինոկուլյացիայից 30 րոպե հետո *A.albertensis* շտ. SO-2-ի ադհեզիան պիրիտի մակերեսին հասնում է առավելագույն՝ 99,99 % -ի (աղ. 1, 2):

Աղ.1. *A.albertensis* շտ. SO-2-ի մաքուր կուլտուրայի ադհեզիան պիրիտի վրա

Ժամանակա-հատվածը	*A. albertensis*-ի բջիջների թիվը հեղուկում, բջ/մլ	Ադհեզված *A.albertensis*-ի բջիջների թիվը, բջ/մլ	Ադհեզիայի աստիճանը, %
0	7,5 x 10^8	0	0
30 րոպե	5,0 x 10^5	7,49 x 10^8	99,93
1 ժ	1.2 x 10^5	7,499 x 10^8	99,98

Leptospirillum sp. շտ. ZC-ի ադհեզիան պիրիտի մակերեսին խառը կուլտուրայի դեպքում հասել է 90,1 %-ի ինոկուլյացիայից 24 ժ հետո միայն, իսկ մաքուր կուլտուրայի դեպքում բջիջների ադհեզիա չի դիտվել (աղ. 2):

Աղ.2. *Leptospirillum* sp. շտ. ZC-ի և *A.albertensis*-ի շտ. SO-2-ի ադհեզիան պիրիտի վրա համատեղ աճի պայմաններում

Ժամանակա-հատվածը	*A.albertensis* շտ. SO-2-ի բջիջների թիվը հեղուկում, բջ/մլ	Ադհեզիայի աստիճանը, %	*Leptospirillum* sp.շտ. ZC- բջիջների թիվը հեղուկում, բջ/մլ	Ադհեզիայի աստիճանը, %
0	7,5 x 10^8	0	1,32 x 10^6	0
30 րոպե	1,2 x 10^7	98,4	1,2 x 10^6	9,1
1 ժ	5,0 x 10^4	99,99	1,0 x 10^5	24,2
24 ժ	-	-	1,2 x 10^5	90,1

Այսպիսով, ստացված տվյալները ցույց են տալիս, որ պիրիտի կենսատարրալվացումն ուղակիորեն կապված է ապարի մակերեսին *Leptospirillum* sp. շտ. ZC-ի ադհեզվելու ունակության հետ: Հետազոտության արդյունքները վկայում են նաև, որ խառը կուլտուրայի դեպքում պիրիտը նախապես գաղութացվում է ծծումբ օքսիդացնող *A.albertensis* շտ. SO-2-ի կողմից, որից հետո միայն դիտվում է *Leptospirillum* sp. շտ. ZC-ի բջիջների ադհեզիան պիրիտի մակերեսին: Հայտնի է, որ ծծումբ օքսիդացնող բակտերիաներն ավելի հակված են ադհեզվելու հիդրոֆոբ մակերեսներին: Քանի որ պիրիտի նախնական մշակման ընթացքում նրա մակերեսից հեռացվել է երկաթը, ենթադրվում է, որ պիրիտի մակերեսին մնացել են ծծմբի մասնիկներ, ինչը նրան օժտել է որոշ հիդրո ֆոբությամբ: Այս հանգամանքով է բացատրվում պիրիտի արագ և առաջ-նային գաղութացումը ծծումբ օքսիդացնող բակտերիաներով, ինչպես նաև ադհեզիայի

բացակայությունը *Leptospirillum* sp. շտ. ZC-ի մոտ, քանի որ վերջիններիս ադհեզիան ապարի մակերեսին տեղի է ունենում հիմնականում էլեկտրաստատիկ ձգողականության շնորհիվ [20]:

Բազմիցս արձանագրվել է, որ ծծումբ օքսիդացնող բակտերիաների բացակայության պայմաններում ծծումբը, կուտակվելով ապարի մակերեսին, կարող է առաջացնել հոծ շերտ, որը բացասաբար է ազդում նրա տարրալվացման կինետիկայի վրա [8, 11]: Այս տեսակետից *A.albertensis* շտ. SO-2-ի ներդրումը պիրիտի ինտենսիվ տարրալուծման գործընթացում կարելի է բացատրել նրանով, որ *A.albertensis*-ը այլ ծծումբ օքսիդացնող բակտերիաների անալոգիայով օքսիդացնում է պիրիտի տարրալուծման միջանկյալ արդյունքը՝ ծծումբը, փոխակերպելով այն ծծմբական թթվի, դրանով իսկ կանխելով կամ նվազեցնելով նրա կուտակումը պիրիտի մակերեսին: Միևնույն ժամանակ հեռացնելով ծծմբի հիդրոֆոբ շերտը պիրիտի մակերեսից, նպաստավոր պայմաններ է ստեղծվում *Leptospirillum* spp. բակտերիաների ադհեզիայի համար: Արդյունքում համատեղ աճեցումը ծծումբ օքսիդացնող *A.albertensis* շտ. SO-2-ի հետ նպաստում է *Leptospirillum* sp. շտ. ZC-ի ադհեզիային պիրիտի մակերեսին և զգալիորեն բարձրացնում է նրա տարրալվացման ինտենսիվությունը:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ նոր մեկուսացված *Leptospirillum* sp. շտ. ZC-ը ցուցաբերում է պիրիտի օքսիդացման բարձր ակտիվություն միայն ծծումբ օքսիդացնող *A.albertensis* շտ. SO-2-ի հետ համատեղ աճեցնելիս, և որ պիրիտի արդյունավետ կենսատարրալվացման անհրաժեշտ պայման է *Leptospirillum* sp. շտ. ZC-ի ադհեզիան ապարի մակերեսին: Ընդ որում, պարզվել է, որ պիրիտի տարրալուծումը համահարաբերակցական է նրա մակերեսին ադհեզված *Leptospirillum sp.* շտ. ZC-ի բջիջների քանակությանը: Հետևաբար կարելի է ենթադրել, որ *Leptospirillum* spp. բակտերիաների կողմից պիրիտի տարրալվացումը տեղի է ունենում անուղղակի կոնտակտային մեխանիզմով [19, 20]:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Биогеотехнология металлов /под ред. Г.И.Каравайко, Дж. Росси, А.Агате, С. Грудева, З.А.Авакян. М., Центр Международных проектов ГКНТ, 1989.
2. *Варданян Н.С., Акопян В.П. Leptospirillum* – подобные бактерии и оценка их роли в окислении пирита. Микробиология, *72*, 4, с.1-5, 2003.
3. *Варданян А.К., Хачатрян А.Н., Маркосян Л.С., Варданян Н.С.* Новая сероокисляющая бактерия, выделенная из пульпы биовыщелачивания цинкового концентрата. Биолог. журн. Армении, *65*, 1, 2013.
4. *Герхардт Ф. и др.* Методы общей бактериологии, 3т. М., Мир, *1*, 1983.
5. *Маркосян Г.Е.* Новая железоокисляющая бактерия *Leptospirillum ferrooxidans* nov. gen. nov. sp.. Биолог. журн. Армении, *25*, 2, с.26-29, 1972.
6. *Coram N.J., Rawlings D.E.* Molecular relationship between two groups of the genus *Leptospirillum* and the finding that *Leptospirillum ferriphilum* sp. nov. dominates in South African commercial biooxidation tanks that operate at 40^0C. App. Environ. Microbiology, *68*, 2, p.838-845, 2002.
7. *Dew, D.W., Lawson E.N. and Broadhurst J.L.* The BIOX process for biooxidation of gold-bearing ores or concentrates. Rawlings D.E. (ed.), Biomining: theory, microbes and industrial processes. Springer-Velag/Landes Bioscience, Georgetown,Tex, p.45-80, 1997.
8. *Dopson M., Lindstrom E.B.* Potential role of *Thiobacillus caldus* in arsenopyrite bioleaching. App. Environ. Microbiology, *65*, 1, p.36–40, 1999.
9. *Fub B., Zhoua H., Zhanga R.,* Qiua G. Bioleaching of chalcopyrite by pure and mixed cultures of *Acidithiobacillus* spp. and *Leptospirillum ferriphilum*. Intern. Biodeterioration & Biodegradation *62*, p.109–115, 2008.
10. *Fouchera, S., Bruneta, F.B., D'Huguesa, P., Clarensb, M., Godonc, J.J., Morin, D.* Evolution of the bacterial population during the batch bioleaching of a cobaltiferous pyrite in a suspended solids bubble column and comparison with a mechanically agitated reactor. Hydrometallurgy, *71,* p.5-12, 2003.

11. *Fowler T.A., Crundwell F.K.* Leaching of zinc sulfide by Thiobacillus ferrooxidans: bacterial oxidation of the sulfur product layer increases the rate of zinc sulfide dissolution at high concentrations of ferrous ions. App. Environ. Microbiol., *65,* p.5285-5292, 1999.
12. *Goltsman D.S. A., Denef V.J., Singer S.W., VerBerkmoes N.C., Lefsrud M., Mueller R.S., Dick G.J., Sun Ch.L., Wheeler K.E., Zemla A., Baker B.J., Hauser L., Land M., Shah M.B., Thelen M.P., Hettich R.L., Banfield J.F.* Community Genomic and Proteomic Analyses of Chemoautotrophic Iron-Oxidizing "Leptospirillum rubarum" (Group II) and "*Leptospirillum ferrodiazotrophum*" (Group III) Bacteria in Acid Mine Drainage Biofilms. Appl. Environ. Microbiol., p.4599-4615, 2009.
13. *Johnson B.D., Macvicar J.H.M., Rolfe S.* A new soild medium for the isolation and enumeration of *Thiobacillus ferrooxidans* and acidophilic heterotrophic bacteria. J. Microbiol. Methods, *7*, p.9-18, 1987.
14. *Lawson, E.N.* The composition of mixed populations of leaching bacteria active in gold and nickel recovery from sulphide ores. In: International Biohydrometallurgy Symposium. Biomine 97, Australian Mineral Foundation, Glenside, pp. QP4.1–QP4.10.
15. *Moreno-Paz M., Gomez M.J., Arcas A., Parro V.* Environmental transcriptome analysis reveals physiological differences between biofilm and planktonic modes of life of the iron oxidizing bacteria *Leptospirillum* spp. in their natural microbial community. BMC Genomics, *11*, p.404, 2010.
16. *Okibe N., Gericke M., Hallberg K.B., Johnson D.B.* Enumeration and characterization of acidophilic microorganisms isolated from a pilot plant stirred-tank bioleaching operation. App. Environ. Microbiol., *69*, 4, p. 1936–1943, 2003.
17. *Rawlings D.E., Coram N.J., Gardner M.N., Deane S.M. Thiobacillus caldus* and *Leptospirillum ferrooxians* are widely distributed in continuous-flow biooxidation tanks used to treat a variety of metal-containing ores and concentrates. In: Amils, R., Ballester, A. (Eds.), Biohydrometrallurgy and the Environment Toward the Mining of the 21st Century, Part A. Elsevier Press, Amsterdam, p.773-778, 1999.
18. *Rawlings D.E., Tributsch H., Hansford G.S.* Reasons why '*Leptospirillum*'-like species rather than *T.ferrooxidans* are the dominant iron-oxidizing bacteria in many commercial processes for the biooxidation of pyrite and related ores. Microbiology,*145*, 5-13, 1999.
19. *Rohwerder T., Gehrke T., Kinzler K.,and Sand W.* Bioleaching review part A: progress in bioleaching: fundamentals and mechanisms of bacterial metal sulfide oxidation. Appl. Microbiol. Biotechnol., *63*, p.239–248, 2003.
20. *Sand W, Gehrke T.* Extracellular polymeric substances mediate bioleaching/biocorrosion via interfacial processes involving iron (III) ions and acidophilic bacteria. Res Microbiol., *157,* p.49-56, 2006.
21. *Sand W., Rohde K., Sobotke U.* Evolution of *Leptospirillum ferrooxidans* for bioleaching. Appl. Environ. Microbiol., *58,* p.85-92, 1992.
22. *Schippers A.* Microorganisms involved in bioleaching and nucleic acid-based molecular methods for their identification and quantification. In Microbial processing of metal sulfides. Edited by Donati R.E., Sand W. New York, NY, Springer, p.3-33, 2007.

Ստացվել է 02.04.2013

Հայաստանի Գիտությունների Ազգային Ակադեմիա | Հայաստանի Կենսաբանական Հանդես
Национальная Академия Наук Армении | Биологический Журнал Армении
National Academy of Sciences of Armenia | Biological Journal of Armenia

• *Փորձարարական և տեսական հոդվածներ* •*Экспериментальные и теоретические статьи*•
•*Experimental and theoretical articles*•

Հայաստանի կենսաբ. հանդես, 3(65), 2013

ՈՐՈՏԱՆ ԳԵՏԻ ԵՎ ՆՐԱ ՀԻՄՆԱԿԱՆ ՎՏԱԿՆԵՐԻ ՋՐԵՐԻ ՀԻԴՐՈ-ՔԻՄԻԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ԵՎ ՈՌՈԳԵԼԻ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Շ.Վ. ՇԱԼՈՒՆՑ, Կ.Ա. ՂԱԶԱՐՅԱՆ, Կ.Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Երևանի պետական համալսարան, էկոլոգիայի և բնության պահպանության ամբիոն,
coolaleq@yandex.ru, *kghazaryan@ysu.am*, *g.karlen@mail.ru*

Ներկայացված է Որոտան, Սիսիան և Գորիսգետ գետերի հիդրոքիմիական բնութագիրը և ոռոգերի հատկությունները: Հաշվարկվել է 2009-2012 թթ. Ժամանակահատվածում ջրերի ընդհանուր հանքայնացումը և իռիգացիոն գործակիցը: Պարզվել է, որ Որոտան, Սիսիան և Գորիսգետ գետերի ջրերը բնութագրվում են լավ ոռոգելի հատկություններով և կարելի է օգտագործել ոռոգման նպատակով՝ առանց հիմքերի կուտակումը կանխարգելող հատուկ միջոցառումների կիրառման:

Ոռոգելի ջուր – հիդրոքիմիական բնութագիր – ոռոգելի հատկություններ – իռիգացիոն գործակից – հողերի աղակալում – ջրի pH

Представлена гидрохимическая характеристика и ирригационные свойства вод рек Воротан, Сисиан и Горисгет. Рассчитаны общая минерализация и ирригационный коэффициент вод в 2009-2012 г. Установлено, что воды рек Воротан, Сисиан и Горисгет характеризуются хорошими ирригационными свойствами и их можно успешно использовать для орошения без специальных мер по предупреждению накопления щелочей.

Оросительная вода – гидрохимическая характеристика – орошаемые свойства – коэффициент ирригации – засоление почв – pH воды

This paper presents hydrochemical characteristics and irrigation properties of rivers Vorotan, Sisian and Gorisget. Total mineralization and irrigation coefficient of water was calculated in 2009-2012. It was established that the waters of rivers Vorotan, Sisian and Gorisget have good irrigation properties and can be successfully used for irrigation without special measures to prevent the -accumulation of alkalis.

Irrigation water – hydrochemical characteristics – irrigated properties – irrigation coefficient – salinization of soil - water pH

Որոտան գետը Սյունիքի մարզի ամենախոշոր գետն է: Այն Արաքսի ձախակողմյան վտակներից է և իր երկարությամբ երկրորդն է երկրում: Հայաստանի Հանրապետության սահմաններում նրա երկարությունը կազմում է 119 կմ, ջրահավաք ավազանը՝ 2170 կմ^2, իսկ ջրահավաք ավազանի միջին բարձրությունը 2280 մետր: Որոտանը սկիզբ է առնում Սյունիքի հրաբխային բարձրավանդակի հյուսիս-արևմտյան լանջերից՝ 3045 մ բարձրության վրա գտնվող երկու փոքրիկ լճերից: Որոտանն ունի զարգացած գետային ցանց, միջին խտությունը կազմում է 1,09 կմ/կմ^2: Նրա ավազանում կան 1133 գետակներ, որոնցից 37-ը ունեն 10 կմ-ից ավել երկարություն: Կարևորագույն վտակներից են Սիսիանը, Գորիսգետը, Այրիգետը, Շաքին և այլն: Որոտանի սնումը ձնանձրևային է (52%), սակայն մեծ դեր ունեն նաև ստորերկրյա ջրերը, որոնց բաժինը գետի հոսքում կազմում է 48 %: Որոտանի ջրային ռեժիմը բնորոշվում է գարնանային հոսքի գերակայությամբ՝ ամառային երբեմնակի վարարումներով: Հորդացումը տևում է ապրիլից մինչև հունիս, իսկ առավելագույնին

Հասնում է մայիսին: Գետի միջին տարեկան ծախսը կազմում է 21,5 մ^3/վ, իսկ տարեկան հոսքի ծավալը՝ 677,3 մլն մ^3: Որոտան գետը ունի մեծ ջրաէներգետիկ և ոռոգիչ նշանակություն: Նրանից սկսվում են Սիսիանի և Որոտանի ջրանցքները, որոնցով ոռոգվում են Սիսիանի և Գորիսի տարածաշրջանների գյուղատնտեսական հողհանդակները [1, 2]:

Ոռոգման նպատակով օգտագործվող ջրերը պետք է համապատասխանեն որոշակի ագրոմելիորատիվ պահանջներին, որպեսզի ապահովեն բարձր բերքատվություն, արտադրանքի բարձր որակ, ինչպես նաև բարձրացվի հողի բերրիությունը և լավացվի մելիորատիվ վիճակը [4, 8]: Ոռոգման համար ջրի պիտանելիությունը կարելի է որոշել ըստ նրա քիմիական կազմի՝ հաշվի առնելով տարածաշրջանի կլիմայական և հողերի ֆիզիկաքիմական առանձնահատկությունները: Ոռոգման արդյունքում չպետք է տեղի ունենա հողերի աղակալում, բույսերի աճի և զարգացման ճնշում, բերքատվության անկում [6]:

Ոռոգման նպատակով օգտագործվող ջրերի որակի բնութագրման համար առաջին հերթին օգտվում են հետևյալ ցուցանիշներից.

- լուծելի աղերի իոնների գումարային պարունակություն (մգ/լ),
- Na^+ պարունակություն (մգ/լ),
- Cl^- պարունակություն (մգ/լ),
- սոդայի առկայություն (Na_2CO_3),
- լուծելի աղերի քիմիական կազմություն (իոնների հարաբերություն):

Այս ցուցանիշների միջոցով կարելի է որոշել ոռոգելի հողերի աղակալման հավանականությունը, ինչպես նաև առանձին տոքսիկ իոնների պարունակությունը, քանի որ աղակալման գործընթացում հողում կուտակված աղերը բույսերի և հողերի վրա թողնում են ոչ միանման ազդեցություն: Նատրիումի աղերը ամենավտանգավորներն են, ընդորում ըստ իրենց բացասական ազդեցության նատրիումի աղերը կարելի է դասակարգել հետևյալ կերպ՝ $Na_2SO_4 : NaCl : Na_2CO_3 = 1 : 3 : 10$: Իսկ աղակալման վտանգի տեսանկյունից սովորաբար ոռոգման համար պիտանի են համարվում այն ջրերը, որոնց հանքայնացումը չի անցնում 1գ/լ-ից: Ընդհանուր առմամբ ծանր և միջին մեխանիկական կազմով հողերի ոռոգման համար օգտագործվող ջրերի սահմանային թույլատրելի հանքայնությունը կազմում է 2-3 գ/լ, իսկ թեթև մեխանիկական կազմ ունեցող հողերի համար՝ 10-12 գ/լ [3]:

Հաշվի առնելով այն, որ ուսումնասիրվող ջրային օբյեկտը Գորիսի և Սիսիանի տարածաշրջանների հողերի ոռոգման համար կարևորագույն աղբյուրն է հանդիսանում, մեր կողմից կատարվել են ջրերի հիդրոքիմիական ուսումնասիրություններ և տրվել է դրանց ոռոգելի հատկությունների բնութագիրը:

Նյութ և մեթոդ: Նմուշները վերցվել են Որոտան գետից և նրա երկու հիմնական վտակներից՝ Սիսիանից և Գորիսգետից, 2009-2012 թթ.՝ յուրաքանչյուր ամիս: Նմուշառումը կատարվել է 8 դիտակետից: Ուսումնասիրությունների ժամանակ օգտագործվել են ջրերի քիմիական վերլուծությունների համար միջազգային պրակտիկայում կիրառվող մեթոդներ [7]:

Աղ.1. Ոռոգելի ջրերի դասակարգումը ըստ հիմքային կամ իռիգացիոն գործակցի

Հիմքային կամ իռիգացիոն գործակից (K)	Ոռոգելի ջրի դասը
Մինչև 1,2	Վատ
1,2 – 5,9	Բավարար
6,0-18	Լավ
18-ից ավել	Գերազանց

Ամենամսյա ուսումնասիրություններից ստացված տվյալներից հաշվարկվել են իոնների միջին սեզոնային պարունակությունը, ինչի հիման վրա էլ տրվել են ջրերի հիդրոքիմիական բնութագիրը և ոռոգելի հատկությունները: Ջրերի ոռոգելի հատկությունների բնութագրման համար օգտագործել ենք հիմքային կամ իռիգացիոն գործակիցը, որը նատրիումի քլորիդների և սուլֆատների պարունակության հարաբերությունն է (աղ.1) [5]:

Արդյունքներ և քննարկում: Սովորաբար ոռոգելի ջրերի որակը գնահատելիս հաշվի են առնում դրանցում ջրալույծ աղերի պարունակությունը: Ըստ այս ցուցանիշի ջրերի որակը կարելի է բնութագրել՝ հիմնվելով աղ. 2-ի վրա:Ըստ հանքայնացման աստիճանի՝ Որոտան և Սիսիան գետերի ջրերը պատկանում են լավ ոռոգելի հատկություններով օժտված ջրերին, քանի որ դրանց հանքայնացման աստիճանը

չի գերազանցում 400 մգ/լ և տատանվում է 30,45-392,92 մգ/լ սահմաններում (աղ. 3, 4, 5, 6):

Աղ.2. Ոռոգելի ջրերի որակի գնահատումը ըստ ջրալույծ աղերի ընդհանուր պարունակության

Մինչև 400 մգ/լ	Օժտված է լավ ոռոգելի հատկություններով
400 – 1000 մգ/լ	Անհրաժեշտ է կատարել լրացուցիչ նախազգուշական միջոցառումներ
1000 – 3000 մգ/լ	Ոռոգման նպատակով օգտագործման դեպքում հնարավոր է հողերի աղակալում
3000 մգ/լ-ից ավելի	Համարվում են վատ որակի, քանի որ դրանց կիրառման դեպքում հողերի աղակալումն անխուսափելի է

Ի դեպ, նվազագույն հանքայնացման աստիճանը հիմնականում նկատվել է Որոտան գետի վերին հոսանքներում (0,5 կմ Գորիայքից վերև գտնվող դիտակետում), իսկ համեմատաբար բարձր հանքայնացման աստիճան նկատվել Սիսիան քաղաքից 2 կմ ներքև գտնվող դիտակետում: Այն մեր կարծիքով անմիջականորեն պայմանավորված է Սիսիան քաղաքի կոմունալ կենցաղային հոսքաջրերով, որոնք առանց որևէ մաքրման լցվում են Որոտան գետ: Իսկ Գորիսգետի ջրերի հանքայնացման աստիճանը տատանվել է 78,12-458,31 մգ/լ միջակայքում և ըստ աղ. 2-ում բերված գնահատման սանդղակի երբեմն (օր.՝ 2012 թ., ամառ) անհրաժեշտ է կատարել լրացուցիչ նախազգուշական միջոցառումներ: Սակայն, քանի որ հանքայնացման աստիճանի գերազանցումը 400 մգ/լ նիշից աննշան է, և այն նկատվում է ոչ բոլոր տարիներին, անհրաժեշտություն չկա կիրառել աղակալման գործընթացը կանխարգելող միջոցառումներ: Հարկ է նշել, որ հանքայնացման աստիճանի բարձրացումը այս դեպքում ևս պայմանավորված է քաղաքային համայնքի (Գորիս քաղաք) կոմունալ կենցաղային հոսքաջրերով և այն հիմնականում նկատվում է այն սեզոններին, երբ նվազում է գետի բնական հոսքը և մեծանում է գետի ընդհանուր հոսքում կենցաղային հոսքաջրերի չափաբաժինը: Իսկ Գորիս քաղաքից վերև տարվա բոլոր սեզոններին նկատվել է ջրի հանքայնացման ցածր աստիճան: Սա կարելի է բացատրել մարդածին գործոնի ազդեցության փոքր ծավալներով, որոնք ըստ էության չեն կարող էական փոփոխություններ թողնել գետի ջրերի բնական հանքայնացման աստիճանի վրա:

Աղ.3. 2009 թ. Որոտան, Սիսիան և Գորիսգետ գետերի ջրերի քիմիական բաղադրությունը (մգ/լ) և ոռոգելի հատկությունները

Ջրային օբյեկտ	Դիտակետի տեղադրությունը	Ժամանակահատված	Ջրածնային ցուցիչ	Na^+	Mg^{2+}	K^+	Ca^{2+}	HCO_3^-	SO_4^{2-}	Cl^-	Իոնների գումարը, մգ/լ	K
Որոտան	0,5 կմ Գորիայքից վերև	միջին ձմեռ	7,22	6,1	1,46	2,04	6,3	33,56	3,88	1,48	54,82	168
	0,5 կմ Գորիայքից վերև	միջին գարուն	7,9	2,29	1,52	13,87	4,57	44,75	3,3	0,7	71	1035
	0,5 կմ Գորիայքից վերև	միջին ամառ	7,28	3,06	1,33	1,62	4,94	44,75	2,84	1,1	59,64	448
	0,5 կմ Գորիայքից վերև	միջին աշուն	8,16	3,29	1,78	1,86	5,54	44,75	3,51	1,47	62,2	509
	1 կմ բ, Սիսիանից վերև	միջին ձմեռ	7,77	7,59	4,61	2,27	13,52	67,12	24,75	2,83	122,69	444
	1 կմ բ, Սիսիանից վերև	միջին գարուն	8,56	11,31	4,78	8,24	17,11	88,48	30,2	3,68	163,8	318
	1 կմ բ, Սիսիանից վերև	միջին ամառ	8,25	10,98	3,81	3,16	14,91	90,51	29,04	3,14	155,55	346
	1 կմ բ, Սիսիանից վերև	միջին աշուն	8,01	6,9	4,5	3,04	13,88	69,16	21,87	2,8	122,15	468
	2 կմ բ, Սիսիանից ներքև	միջին ձմեռ	7,4	32,42	13,82	5,29	27,34	216,62	78,33	19,1	392,92	81
	2 կմ բ, Սիսիանից ներքև	միջին գարուն	8,22	15,51	7,39	9,63	27,4	110,85	49,16	6,53	226,47	204
	2 կմ բ, Սիսիանից ներքև	միջին ամառ	7,79	19,1	8,13	4,46	25,64	146,45	51	7,61	262,39	171
	2 կմ բ, Սիսիանից ներքև	միջին աշուն	7,99	15,55	8,28	4,21	22,72	114,92	46,26	6,82	218,76	199
	1 կմ բ, Սիսիանից վերև	միջին ձմեռ	8,05	10,73	5,7	2,95	27,57	110,85	27,87	5,92	191,59	254
	1 կմ բ, Սիսիանից վերև	միջին գարուն	7,87	9,95	5,87	7,8	27,32	167,81	29,14	5,76	253,65	266
	1 կմ բ, Սիսիանից վերև	միջին ամառ	7,95	11,65	8,56	3,44	30,34	152,55	60,33	5,54	272,41	255

	1 կմ ք, Սիսիանից վերև	միջին աշուն	8,26	10,65	7,63	1,45	47,44	132,72	91,24	4,61	295,74	293
	2 կմ ք, Սիսիանից ներքև	միջին ձմեռ	8,15	1,68	1,94	13,7	13,43	68,65	10,95	0,71	111,06	1882
	2 կմ ք, Սիսիանից ներքև	միջին գարուն	6,66	6,73	5,37	1	37,38	137,3	48,33	2,18	238,29	535
	2 կմ ք, Սիսիանից ներքև	միջին ամառ	7,83	8,64	10,53	1,2	52,15	187,64	100,58	4,94	365,68	309
	2 կմ ք, Սիսիանից ներքև	միջին աշուն	8,17	8,36	4,23	2,44	18,26	64,07	12,34	2,1	111,8	281
	0,5 կմ Տաթև ՀԷԿ-ից ներքև	միջին ձմեռ	8,44	3,96	2,8	14,15	16,52	79,33	12,91	1,59	131,26	820
	0,5 կմ Տաթև ՀԷԿ-ից ներքև	միջին գարուն	7,81	5,25	3,52	1,8	18,65	102,72	13,04	1,85	146,83	659
	0,5 կմ Տաթև ՀԷԿ-ից ներքև	միջին ամառ	8,04	3,73	3,29	1,78	14,23	84,41	14,85	2,86	125,15	595
	0,5 կմ Տաթև ՀԷԿ-ից ներքև	միջին աշուն	7,58	5,26	4,23	1,82	14,27	71,19	4,48	1,92	103,17	245
Սիսիան	0,5 կմ գյ, Արևիսից վերև	միջին ձմեռ	7,71	4,43	3,43	10,6	13,82	88,48	3,47	1,47	125,7	270
	0,5 կմ գյ, Արևիսից վերև	միջին գարուն	7,18	6,07	4,03	1,63	15,87	95,6	4,37	1,8	129,37	184
	0,5 կմ գյ, Արևիսից վերև	միջին ամառ	7,98	4,9	5,35	2,92	26,71	87,46	4,44	2,35	134,13	298
	0,5 կմ գյ, Արևիսից վերև	միջին աշուն	8,25	12,48	6,68	5,05	48,24	288,83	14,9	8,2	384,38	195
	Գետաբերան	միջին ձմեռ	8,23	11,36	7,13	13,8	45,63	240,01	12,35	7,52	337,8	184
	Գետաբերան	միջին գարուն	7,55	19,93	10,64	7,5	59,19	334,59	16,14	10,32	458,31	69
	Գետաբերան	միջին ամառ	7,93	10,81	8,71	5,54	47,97	296,96	21,71	11,52	403,22	163
	Գետաբերան	միջին աշուն	7,22	6,1	1,46	2,04	6,3	33,56	3,88	1,48	54,82	168
Գորիսգետ	3 կմ ք, Գորիսից վերև	միջին ձմեռ	7,9	2,29	1,52	13,87	4,57	44,75	3,3	0,7	71	1035
	3 կմ ք, Գորիսից վերև	միջին գարուն	7,28	3,06	1,33	1,62	4,94	44,75	2,84	1,1	59,64	448
	3 կմ ք, Գորիսից վերև	միջին ամառ	8,16	3,29	1,78	1,86	5,54	44,75	3,51	1,47	62,2	509
	3 կմ ք, Գորիսից վերև	միջին աշուն	7,77	7,59	4,61	2,27	13,52	67,12	24,75	2,83	122,69	444
	1,5 կմ ք, Գորիսից ներքև	միջին ձմեռ	8,56	11,31	4,78	8,24	17,11	88,48	30,2	3,68	163,8	318
	1,5 կմ ք, Գորիսից ներքև	միջին գարուն	8,25	10,98	3,81	3,16	14,91	90,51	29,04	3,14	155,55	346
	1,5 կմ ք, Գորիսից ներքև	միջին ամառ	8,01	6,9	4,5	3,04	13,88	69,16	21,87	2,8	122,15	468
	1,5 կմ ք, Գորիսից ներքև	միջին աշուն	7,4	32,42	13,82	5,29	27,34	216,62	78,33	19,1	392,92	81

Աղ.4. 2010 թ. Որոտան, Սիսիան և Գորիսգետ գետերի ջրերի քիմիական բաղադրությունը (մգ/լ) և ոռոգելի հատկությունները

Ջրային օբյեկտ	Դիտակետի տեղադրությունը	Ժամանակա-հատված	Ջրածնային ցուցիչ	Na^{+}	Mg^{2+}	K^{+}	Ca^{2+}	HCO_3^{-}	SO_4^{2-}	Cl^{-}	Իոնների գու-մարը, մգ/լ	K
Որոտան	0,5 կմ Գորհայքից վերև	միջին ձմեռ		3.23	2.63	2.24	7.76	54.92	5.88	1.25	77.91	1024
	0,5 կմ Գորհայքից վերև	միջին գարուն	7.89	2.41	1.74	1.41	5.37	24.41	3.26	0.9	39.5	930
	0,5 կմ Գորհայքից վերև	միջին ամառ	7.26	3.05	1.76	1.48	5.58	26.44	2.23	1.13	41.67	385
	0,5 կմ Գորհայքից վերև	միջին աշուն	7.48	3.39	2.41	2.19	7.28	27.46	2.87	0.99	46.59	362
	1 կմ ք, Սիսիանից վերև	միջին ձմեռ	8.16	10.65	6.29	3.94	19.08	64.07	30.55	3.73	138.31	326
	1 կմ ք, Սիսիանից վերև	միջին գարուն	8.62	9.32	5.04	2.66	16.19	65.09	30.39	3.6	132.29	355
	1 կմ ք, Սիսիանից վերև	միջին ամառ	7.4	7.4	4.24	2.87	14.45	55.94	23.57	3.01	111.48	436
	1 կմ ք, Սիսիանից վերև	միջին աշուն	8.02	12.31	5.66	4.11	18.44	77.8	28.35	3.27	149.94	319

Սիսիան	2 կմ ք, Սիսիանից ներքև	միջին ձմեռ	7.98	17.3	10.19	5.17	28.41	100.68	45.62	9.3	216.67	160
	2 կմ ք, Սիսիանից ներքև	միջին գարուն	8.09	15.37	7.87	3.3	23.77	103.73	45.17	8.2	207.41	181
	2 կմ ք, Սիսիանից ներքև	միջին ամառ	7.1	17.88	8.1	3.66	24.26	85.43	45.68	8.54	193.55	166
	2 կմ ք, Սիսիանից ներքև	միջին աշուն	7.87	22.62	10.76	5.76	31.81	109.84	48.73	9.31	238.83	142
	0,5 կմ Տաթև ՀԷԿ-ից ներքև	միջին ձմեռ	8.16	11.97	9.15	3.67	34.19	111.36	26.83	6.09	203.26	239
	0,5 կմ Տաթև ՀԷԿ-ից ներքև	միջին գարուն	8.2	8.82	6.17	1.98	25.88	101.7	26.49	5.07	176.11	302
	0,5 կմ Տաթև ՀԷԿ-ից ներքև	միջին ամառ	6.61	12.67	7.26	2.45	31.13	79.33	29.46	6.3	168.6	228
	0,5 կմ Տաթև ՀԷԿ-ից ներքև	միջին աշուն	7.66	16.51	10.37	4.1	40.72	127.13	26.8	6.19	231.82	203
	0,5 կմ գյ, Արևիսից վերև	միջին ձմեռ	-	-	-	-	-	-	-	-	-	-
	0,5 կմ գյ, Արևիսից վերև	միջին գարուն	7.87	2.36	2.77	0.46	13.76	38.14	12.77	1.22	71.48	1200
	0,5 կմ գյ, Արևիսից վերև	միջին ամառ	7.31	7.36	6.46	0.73	36.4	65.6	54.36	2.26	173.17	501
	0,5 կմ գյ, Արևիսից վերև	միջին աշուն	7.67	11.83	12.86	1.57	63.63	64.07	99.22	3.78	256.96	306
	Գետաբերան	միջին ձմեռ	8.14	4.99	4.78	2.58	18.16	61.02	15.68	1.97	109.18	656
	Գետաբերան	միջին գարուն	8.46	4.46	3.87	1.44	17.07	69.16	16.21	2.13	114.34	664
	Գետաբերան	միջին ամառ	7.74	4.35	3.3	1.59	16.36	49.83	11.6	1.86	88.89	722
	Գետաբերան	միջին աշուն	8.58	3.57	4.16	2.02	16.51	61.02	22.62	4.74	114.64	418
Գորիսգետ	1,5 կմ ք, Գորիսից վերև	միջին ձմեռ	7.77	5.24	4.69	2.32	15.34	61.02	4.51	1.4	94.52	233
	1,5 կմ ք, Գորիսից վերև	միջին գարուն	7.88	4.47	3.28	1.26	11.49	57.97	3.64	1.72	83.83	283
	1,5 կմ ք, Գորիսից վերև	միջին ամառ	7.39	5.15	4.48	1.59	17.24	56.95	5.77	1.92	93.1	325
	1,5 կմ ք, Գորիսից վերև	միջին աշուն	7.26	4.61	5.38	2.55	18.32	68.65	5.37	2.9	107.78	489
	1,5 կմ ք, Գորիսից ներքև	միջին ձմեռ	8.26	15.31	13.18	7.43	66.03	196.79	14.85	10.97	324.56	124
	1,5 կմ ք, Գորիսից ներքև	միջին գարուն	8.33	10.72	7.56	4.19	39.97	191.2	14.48	8.71	276.83	199
	1,5 կմ ք, Գորիսից ներքև	միջին ամառ	7	18.63	12.16	7	74.5	237.98	21.81	12.13	384.21	125
	1,5 կմ ք, Գորիսից ներքև	միջին աշուն	8.35	18.23	13.25	7.62	67.44	239.5	17.82	12.17	376.03	100

Աղ.5. 2011 թ. Որոտան, Սիսիան և Գորիսգետ գետերի ջրերի քիմիական բաղադրությունը (մգ/լ) և ոռոգելի հատկությունները

Ջրային օբյեկտ	Դիտակետի տեղադրությունը	Ժամանակահատված	Ջրածնային ցուցիչ	Na^{+}	Mg^{2+}	K^{+}	Ca^{2+}	HCO_3^{-}	SO_4^{2-}	Cl^{-}	Իոնների գումարը, մգ/լ	K
	0,5 կմ Գորհայքից վերև	միջին ձմեռ	7.69	2.66	1.73	1.62	4.89	15.26	3.39	0.91	30.45	735
	0,5 կմ Գորհայքից վերև	միջին գարուն	7.68	2.82	1.84	1.52	5.85	22.88	3.95	0.99	39.86	840
	0,5 կմ Գորհայքից վերև	միջին ամառ	8.17	2.80	1.89	1.45	5.49	17.29	2.50	0.63	32.05	437
	0,5 կմ Գորհայքից վերև	միջին աշուն	7.17	3.34	2.13	1.49	5.17	42.71	3.32	0.83	59.00	404
	1 կմ ք, Սիսիանից վերև	միջին ձմեռ	7.54	9.50	4.48	2.86	14.84	30.51	26.30	2.86	91.34	392
	1 կմ ք, Սիսիանից վերև	միջին գարուն	7.88	9.95	4.83	2.70	15.97	50.85	22.28	2.77	109.35	387

	1 կմ ք, Սիսիանից վերև	միջին ամառ	8.13	10.67	5.06	3.41	15.75	49.83	30.60	3.22	118.54	348
	1 կմ ք, Սիսիանից վերև	միջին աշուն	8.05	9.41	5.68	2.65	14.41	88.48	26.45	3.08	150.15	381
	2 կմ ք, Սիսիանից ներքև	միջին ձմեռ	7.40	15.00	7.14	3.71	22.51	48.82	42.85	7.50	147.53	192
	2 կմ ք, Սիսիանից ներքև	միջին գարուն	7.56	12.09	6.32	3.43	24.59	77.29	33.24	5.84	162.79	243
	2 կմ ք, Սիսիանից ներքև	միջին ամառ	7.87	17.66	7.62	4.72	27.08	88.48	53.14	9.65	208.35	155
	2 կմ ք, Սիսիանից ներքև	միջին աշուն	8.03	18.24	8.81	3.82	25.71	108.31	49.67	9.63	224.19	153
	0,5 կմ Տաթև ՀԷԿ-ից ներքև	միջին ձմեռ	8.08	16.51	8.77	3.92	32.15	66.11	30.02	8.25	165.72	175
	0,5 կմ Տաթև ՀԷԿ-ից ներքև	միջին գարուն	7.91	11.76	7.36	2.53	36.15	98.65	27.39	5.54	189.37	254
	0,5 կմ Տաթև ՀԷԿ-ից ներքև	միջին ամառ	8.00	11.44	7.12	2.77	28.48	89.50	28.23	6.08	173.61	244
	0,5 կմ Տաթև ՀԷԿ-ից ներքև	միջին աշուն	7.97	11.70	7.33	2.90	27.32	123.06	31.57	6.96	210.83	223
	0,5 կմ գյ, Արևիսից վերև	միջին ձմեռ	-	-	-	-	-	-	-	-	-	-
	0,5 կմ գյ, Արևիսից վերև	միջին գարուն	7.80	3.12	2.71	0.86	15.64	39.66	13.62	1.18	76.81	1072
	0,5 կմ գյ, Արևիսից վերև	միջին ամառ	8.03	5.78	4.83	0.96	31.04	71.19	46.44	2.14	162.38	585
	0,5 կմ գյ, Արևիսից վերև	միջին աշուն	8.30	10.21	8.43	0.74	49.81	67.12	100.58	4.18	241.07	315
	Գետաբերան	միջին ձմեռ	7.65	6.57	3.68	1.88	15.44	18.31	12.17	1.68	59.72	607
	Գետաբերան	միջին գարուն	7.84	5.83	4.51	1.73	21.93	65.60	19.04	1.93	120.57	611
	Գետաբերան	միջին ամառ	8.13	3.96	3.42	1.64	15.14	46.78	10.11	1.75	82.80	780
	Գետաբերան	միջին աշուն	8.40	4.44	3.85	1.36	14.21	76.28	11.31	1.65	113.08	761
	3 կմ ք, Գորիսից վերև	միջին ձմեռ	7.30	5.71	4.51	2.02	16.91	36.61	5.61	2.26	73.64	259
	3 կմ ք, Գորիսից վերև	միջին գարուն	7.88	5.87	3.86	1.56	15.37	54.92	3.98	1.54	87.09	181
	3 կմ ք, Գորիսից վերև	միջին ամառ	7.97	4.89	4.36	1.64	15.04	51.87	4.26	1.59	83.65	261
	3 կմ ք, Գորիսից վերև	միջին աշուն	7.89	5.62	4.87	1.92	15.21	75.26	4.33	1.89	109.10	211
	1,5 կմ ք, Գորիսից ներքև	միջին ձմեռ	8.42	21.91	13.11	8.40	69.03	169.33	19.04	13.20	314.03	70
	1,5 կմ ք, Գորիսից ներքև	միջին գարուն	7.77	13.83	8.16	5.09	55.24	180.01	14.91	8.86	286.09	146
	1,5 կմ ք, Գորիսից ներքև	միջին ամառ	7.93	16.65	9.66	7.57	59.49	207.47	18.02	11.42	330.27	128
	1,5 կմ ք, Գորիսից ներքև	միջին աշուն	8.31	17.06	10.83	6.19	67.17	288.83	17.57	13.64	421.28	126

Աղ.6. 2012 թ. Որոտան, Սիսիան և Գորիսգետ գետերի ջրերի քիմիական բաղադրությունը (մգ/լ) և ոռոգելի հատկությունները

Ջրային օբյեկտ	Դիտակետի տեղադրությունը	Ժամանակա-հատված	Ջրածնային ցուցիչ	Na^{+}	Mg^{2+}	K^{+}	Ca^{2+}	HCO_3^{-}	SO_4^{2-}	Cl^{-}	Իոնների գու-մարը, մգ/լ	K
Որոտան	0,5 կմ Գորհայքից վերև	միջին ձմեռ	7,22	6,1	1,46	2,04	6,3	33,56	3,88	1,48	54,82	168
	0,5 կմ Գորհայքից վերև	միջին գարուն	7,9	2,29	1,52	13,87	4,57	44,75	3,3	0,7	71	1035
	0,5 կմ Գորհայքից վերև	միջին ամառ	7,28	3,06	1,33	1,62	4,94	44,75	2,84	1,1	59,64	448

	0,5 կմ Գորհայքից վերև	միջին աշուն	8,16	3,29	1,78	1,86	5,54	44,75	3,51	1,47	62,2	509
	1 կմ ք, Սիսիանից վերև	միջին ձմեռ	7,77	7,59	4,61	2,27	13,52	67,12	24,75	2,83	122,69	444
	1 կմ ք, Սիսիանից վերև	միջին գարուն	8,56	11,31	4,78	8,24	17,11	88,48	30,2	3,68	163,8	318
	1 կմ ք, Սիսիանից վերև	միջին ամառ	8,25	10,98	3,81	3,16	14,91	90,51	29,04	3,14	155,55	346
	1 կմ ք, Սիսիանից վերև	միջին աշուն	8,01	6,9	4,5	3,04	13,88	69,16	21,87	2,8	122,15	468
	2 կմ ք, Սիսիանից ներքև	միջին ձմեռ	7.4	32.42	13.82	5.29	27.34	216.62	78.33	19.1	392.92	81
	2 կմ ք, Սիսիանից ներքև	միջին գարուն	8.22	15.51	7.39	9.63	27.4	110.85	49.16	6.53	226.47	204
	2 կմ ք, Սիսիանից ներքև	միջին ամառ	7.79	19.1	8.13	4.46	25.64	146.45	51	7.61	262.39	171
	2 կմ ք, Սիսիանից ներքև	միջին աշուն	7.99	15.55	8.28	4.21	22.72	114.92	46.26	6.82	218.76	199
	0,5 կմ Տաթև ՀԷԿ-ից ներքև	միջին ձմեռ	8,05	10,73	5,7	2,95	27,57	110,85	27,87	5,92	191,59	254
	0,5 կմ Տաթև ՀԷԿ-ից ներքև	միջին գարուն	7,87	9,95	5,87	7,8	27,32	167,81	29,14	5,76	253,65	266
	0,5 կմ Տաթև ՀԷԿ-ից ներքև	միջին ամառ	7.61	15.08	7.24	2.94	33.64	171.87	30.09	5.99	266.85	216
	0,5 կմ Տաթև ՀԷԿ-ից ներքև	միջին աշուն	7.95	11.65	8.56	3.44	30.34	152.55	60.33	5.54	272.41	255
Սիսիան	0,5 կմ գյ, Արևիսից վերև	միջին ձմեռ	8.26	10.65	7.63	1.45	47.44	132.72	91.24	4.61	295.74	293
	0,5 կմ գյ, Արևիսից վերև	միջին գարուն	8.15	1.68	1.94	13.7	13.43	68.65	10.95	0.71	111.06	1882
	0,5 կմ գյ, Արևիսից վերև	միջին ամառ	6.66	6.73	5.37	1	37.38	137.3	48.33	2.18	238.29	535
	0,5 կմ գյ, Արևիսից վերև	միջին աշուն	7.83	8.64	10.53	1.2	52.15	187.64	100.58	4.94	365.68	309
	Գետաբերան	միջին ձմեռ	8.17	8.36	4.23	2.44	18.26	64.07	12.34	2.1	111.8	281
	Գետաբերան	միջին գարուն	8.44	3.96	2.8	14.15	16.52	79.33	12.91	1.59	131.26	820
	Գետաբերան	միջին ամառ	7.81	5.25	3.52	1.8	18.65	102.72	13.04	1.85	146.83	659
	Գետաբերան	միջին աշուն	8.04	3.73	3.29	1.78	14.23	84.41	14.85	2.86	125.15	595
Գորիսգետ	3 կմ ք, Գորիսից վերև	միջին ձմեռ	7.58	5.26	4.23	1.82	14.27	71.19	4.48	1.92	103.17	245
	3 կմ ք, Գորիսից վերև	միջին գարուն	7.71	4.43	3.43	10.6	13.82	88.48	3.47	1.47	125.7	270
	3 կմ ք, Գորիսից վերև	միջին ամառ	7.18	6.07	4.03	1.63	15.87	95.6	4.37	1.8	129.37	184
	3 կմ ք, Գորիսից վերև	միջին աշուն	7.98	4.9	5.35	2.92	26.71	87.46	4.44	2.35	134.13	298
	1,5 կմ ք, Գորիսից ներքև	միջին ձմեռ	8.25	12.48	6.68	5.05	48.24	288.83	14.9	8.2	384.38	195
	1,5 կմ ք, Գորիսից ներքև	միջին գարուն	8.23	11.36	7.13	13.8	45.63	240.01	12.35	7.52	337.8	184
	1,5 կմ ք, Գորիսից ներքև	միջին ամառ	7.55	19.93	10.64	7.5	59.19	334.59	16.14	10.32	458.31	69
	1,5 կմ ք, Գորիսից ներքև	միջին աշուն	7.93	10.81	8.71	5.54	47.97	296.96	21.71	11.52	403.22	163

Հաշվի առնելով այն փաստը, որ ոռոգման ջրի pH-ը ևս կարող է իր ազդեցությունը թողնել հողի որոշ ագրոքիմիական հատկությունների վրա և նվազեցնել բերքատվությունը, մենք ուսումնասիրել ենք նաև Որոտան, Սիսիան և Գորիսգետ գետերի ջրերի pH-ը: Այս ցուցանիշը տատանվել է 6,49-8,62 միջակայքում, որը ըստ միջազգային չափորոշիչների համարվում է լավ և ոռոգման ընթացքում չի կարող բացասական ազդեցություն թողնել հողերի ագրոքիմիական հատկությունների վրա:

Ոռոգիչ ջրերի որակի բնութագրման համար շատ հաճախ օգտագործում են նաև հիմքային կամ իռիգացիոն գործակիցը, որը նատրիումի քլորիդների և սուլֆատների պարունակության հարաբերությունն է: Համաձայն այս սանդղակի, եթե իռիգացիոն գործակիցը մեծ է 18-ից, ապա այդ ջրերը կարելի է օգտագործել ոռոգման նպատակով՝ առանց աղակալման և ալկալիացման դեմ որևէ միջոցառման կիրառման (աղ. 1): Համաձայն մեր ուսումնասիրությունների՝ Որոտան, Սիսիան և Գորիսգետ գետերի ջրերի իռիգացիոն գործակիցը բավականին բարձր է: 2009-2012թթ. ժամանակահատվածում լավագույն արժեքը գրանցվել է 2012 թ.-ին Սիսիան գետի վերին հոսանքում (Արևիս գյուղից 0,5 կմ վերև), որը կազմել է 1882: Հարկ է նշել, որ ուսումնասիրության գրեթե բոլոր տարիներին ջրերի

ամենաբարձր իոնիզացիոն գործակիցները նկատվել են վերը նշված նմուշառման կետում: Իսկ ամենացածր իոնիզացիոն գործակիցները 2009-2012 թթ. նկատվել են Գորիսգետում՝ Գորիս քաղաքից 1,5 կմ ներքև գտնվող դիտակետում, և այն հավասար է եղել 69-ի: Այս ցուցանիշը ևս ըստ միջազգային չափորոշիչների համարվում է շատ բարձր արժեք, և այդ ջրերը առանց որևէ նախնական կանխարգելիչ միջոցառումների կարելի է օգտագործել ոռոգման նպատակով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հայկական ՍՍՀ ջրագրություն. Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ, 178 էջ, 1981:
2. Հայկական ՍՍՀ ֆիզիկական աշխարհագրություն: ՀՍՍՀ ԳԱ, 471 էջ, 1971:
3. *Вальков В.Ф., Казеев К.Ш., Колесников С.И.* Экология почв: Учебное пособие для студентов вузов. Часть 2. Ростов-на-Дону: УПЛ РГУ, 54 с., 2004.
4. *Маматов С.А.* Современные тенденции изменения качества воды реки Сырдарья. “САНИИРИ – 80 лет. 1925-2005”: Сборник научных трудов. АНИИРИ. Ташкент, с. 251-258, 2006.
5. *Радов А.С., Пустовой И.В., Корольков А.В.* Практикум по агрохимии. Изд. “Колос”. М., 336 с., 1971.
6. *Снипич Ю.Ф.* Техника и технология орошения в современных условиях землепользования. Мелиорация и водное хозяйство, 6, с. 28-30, 2006.
7. Унифицированные методы анализа вод. Изд.-во 2. М., “Химия”, 376 с., 1973.
8. *Shirokova Y., Mamatov S., Dermoyan T.* The problems of pollution watersources in the Republic of Uzbekistan. 2nd International Toxic Algae Control Symposium. Tsukuba, Japan, p. 20-22, 2002.

Ստացվել է 22.04.2013

Հայաստանի Գիտությունների Ազգային Ակադեմիա
Национальная Академия Наук Армении
National Academy of Sciences of Armenia

Հայաստանի Կենսաբանական Հանդես
Биологический Журнал Армении
Biological Journal of Armenia

• *Փորձարարական և տեսական հոդվածներ* •***Экспериментальные и теоретические статьи***•
•***Experimental and theoretical articles***•

Биолог. журн. Армении, 3 (65), 2013

МОЛОЧНАЯ ПРОДУКТИВНОСТЬ И ФИЗИКО-ХИМИЧЕСКИЕ СВОЙСТВА МОЛОКА МЕСТНЫХ КОЗ АРМЕНИИ

Г.Ю. МАРМАРЯН*, Г.С. МАРКАРЯН **

** Национальный аграрный университет Армении*
*** Козоводческий центр АРИД Вайоцдзорского марза*
gmarmaryan@gmail.com

Изучали молочную продуктивность и физико-химические свойства молока местных коз, разводимых в Армении. Установлено, что товарная молочная продуктивность характеризуется средними величинами и составляет 133,57 литров. Содержание жира в июне составляет 4,87%, в августе – 7,14%, количество сухих веществ соответственно 14,92 и 16,92%, а уровень белка остается практически неизменным (3,73-3,80%). Соотношение жира и белка колеблется в пределах 1,28-1,91.

Коза – молочность – жир – белок – плотность

Ուսումնասիրվել են Հայաստանում բուծվող տեղական այծերի կաթնատվությունը և կաթի ֆիզիկաքիմիական հատկությունները: Պարզաբանվել է, որ ապրանքային կաթնատվությունը բնութագրվում է միջին ցուցանիշներով և կազմել է 133,57 լիտր: Հունիսին ճարպի քանակը 4,87% է, օգոստոսին՝ 7,14%, չոր նյութերի քանակը համապատասխանաբար 14,92% և 16,92%, իսկ սպիտակուցի մակարդակը մնացել է գրեթե անփոփոխ (3,73-3,80%). Ճարպ / սպիտակուց հարաբերությունը տատանվում է 1,28-1,91 սահմաններում:

Այծ – կաթնատվություն – ճարպ – սպիտակուց – խտություն

The milk productivity and physical and chemical composition of the milk of local goats bred in Armenia were studied. The results showed that milk productivity is characterized by average values and comprises 133,57 liter. The fat content in June comprises 4,87 %, in August – 7,14 %, the dry matters – 14, 92% and 16,92% respectively, while the protein level stays almost unchanged (3,73-3,80%). The fat / protein ratio fluctuates between 1,28-1,91.

Goat – milk productivity – fat – protein – density

Козье молоко – уникальный продукт. В нем содержится большое количество аминокислот, которые повышают устойчивость организма к инфекционным заболеваниям и нормализуют холестериновый обмен. Белок, глюкоза и лактоза козьего молока легче усваиваются, так как жировые шарики в нем мельче и равномерно распространены по всей массе. Козье молоко особенно ценный продукт для питания детей и людей с желудочно-кишечными заболеваниями и в отличие от коровьего не содержит аллергенов [10]. Оно отличается повышенными антиинфекционными, антианемическими и антигеморрагическими свойствами.

Козы лучше других домашних животных защищены от облучения. Считается, что их кожа защищает от средних и малых доз радиации. После аварии на Чернобыльской АЭС многочисленные научные работы неоспоримо доказали эти свойства.

Следы вредных элементов не были найдены лишь в козьем молоке и мясе. Поэтому, и в силу других факторов, козье молоко и молочные продукты (сыр, кефир, йогурт) не только являются одним из самых совершенных продуктов питания, известных людям, но и могут служить лечебным целям [11].

По данным ФАО, в 2008 г. в России было произведено 246 тыс. тонн козьего молока, в Испании – 593 тыс.т., Франции – 573 тыс.т., Греции – 505 тыс.т. Численность молочных коз в Европе составляет 6 % от общемирового поголовья, а объем производства козьего молока превышает 17 % [4].

По Шаталову [8], производство козьего молока в мире с 1980 по 2008 возрасло на 96,6 % и составило 15215 тыс. тонн, тогда как общее производство молока возрасло лишь на 38 %.

Рассматривая развитие козоводства в мире, необходимо признать, что Армения в историческом аспекте этой отрасли не уделяла достаточного внимания и развивалась в основном исключительно за счет личных хозяйств населения, а о племенной работе отрасли говорить и не приходится.

Именно это обстоятельство побудило ученых Национального аграрного университета Армении в содействии с департаментом сельского хозяйства США, начиная с 2000 г. на базе местных коз приступить к созданию коз молочного типа.

Однако развитие козоводства, в частности молочного, в коммерческих масштабах сдерживается отсутствием государственной поддержки фермерам, субсидирования отрасли и ученым в ведении племенной работы и разработке нормативно-технической документации на козье молоко.

Целью настоящей работы было изучение молочной продуктивности местных козематок и определение физико-химических свойств молока.

Материал и методика. Материалом для исследований явились местные неулучшенные, аборигенные козы с. Салли Ехегнадзорского района Вайоцдзорского марза. Местные козы обычно не относятся к каким-либо породам, являясь плодами народной селекции. В доступной нам литературе в Армении не были основательно изучены вопросы молочной и мясной продуктивности и химического состава молока и мяса коз. Козление маток в хозяйстве проходило в основном в март-апреле, дойку проводили, начиная с конца мая, по достижению козлят двухмесячного возраста. Для определения молочной продуктивности козематок за июнь-ноябрь (2003 г.) проводили контрольную индивидуальную дойку маток утром и вечером, или с целью определения количества товарного молока. Производительность молока козематок за всю лактацию рассчитывали по методике Багдасарова [1].

Из сборного дневного молока брали образцы и определяли количество жира, белка, сухого обезжиренного молочного остатка (СОМО), плотность и точку замерзания. Для этой цели использовали ультразвуковой анализатор молока “Екомилк” Милкана КАМ 98-2А. Полученные результаты обрабатывали методом вариационной статистики [5].

Результаты и обсуждение. Материалы исследования молочной продуктивности местных козематок свидетельствуют, что за период дойки месячная доля молока значительно варьирует. Так, в июне было получено 33,9 л молока, что составляет 26,38 % от общего товарного молока, а за июль – 27,42 %, т.е., за первые два месяца дойки от местных козематок было получено около 54 % товарного молока, тогда как за последние два месяца лактации было получено всего 11,22 % (рис.1).

За весь период дойки (165 дней) в среднем на одну козематку было получено 133,57 л молока (табл.1).

Однако за всю лактацию козематками было продуцировано 196,7 л молока (молочность за июнь умноженное на коэффициент 5,8). Следует констатировать, что коэффициент вариации молочности козематок очень высокий, т.е. на ферме никогда не проводилась какая-либо селекционно-племенная работа. Установлено, что при двойной дойке за день утренний удой козематок составляет 34-39% от суточного.



Рис.1. Средняя молочность местных коз по месяцам за 2003 год (л)

Табл. 1. Результаты контрольных доек местных козематок с. Салли за 2003 год, мл, суточный удой

Время контрольных доек	n	Lim	M±m	δ	C,%
10.06	68	300-1200	1010,8±42,8	353,5	34,83
25.06	70	250-1350	1246,5±47,6	396	31,77
10.07	70	250-2400	1130,0±40,9	343	30,35
25.07	70	350-2400	1230,5±46,3	388	31,53
13.08	70	300-2100	1106,0±41,9	351	31,91
27.08	69	200-1500	832,0±33,1	275,5	33,09
12.09	69	150-1200	670,0±29,2	243	36,27
27.09	68	200-1000	544,0±24,6	203	37,32
10.10	55	200-800	422,5±21,0	160	37,87
01.11	45	200-600	233,5±18,5	130	55,67

Средняя молочность по месяцам		Июнь	Июль	Август	Сентябрь	Октябрь	Ноябрь 1/2	За год
	Л	33,91	36,63	29,82	18,21	12,67	2,3	133,57
	%	26,38	27,42	22,32	13,63	9,48	1,74	100

По данным Мармаряна, Тер-Исаакяна, молочность местных козематок (в центре АРИД) за шесть месяцев составляла 118,16 л, а помесей (местная × альпийская) – 145,3 л [3].

В литературе есть сведения о том, что разница в молочной продуктивности высокоудойных коз молочной породы (зааненская) и беспородных коз весьма значительна: 1000 л молока в год против 200 л [12]. Глигвашвили [2] отмечает, что среднегодовой удой мегрельских коз разных популяций Грузии колеблется в пределах 181,84-296,14 кг. Таким образом, местные козы Армении (Вайоцдзорский марз) характеризуются типичной молочной продуктивностью, характерной для аборигенных коз Закавказья. Известно, что физико-химические показатели и технологические свойства молока оказывают определенное влияние на различные виды молочных продуктов, что представляет большой научный и практический интерес. Химический состав молока животных зависит от многих факторов: породы, возраста, сезона, кормления, состояния здоровья и т.д.

Усвояемость питательных веществ молока высокая: белков в среднем – 95%, углеводов – 98%. Более того, молоко стимулирует усвоение питательных веществ из других пищевых продуктов [6].

Физико-химический состав молока коз определяли в течение трех последующих месяцев дойного периода (2003 г.) (табл. 2).

Исследованиями установлено, что содержание сухих веществ в молоке коз в начале опыта (июнь) повышается от 14,92 до 16,92% (август), что в основном связано с содержанием и увеличением доли жира за этот период – с 4,87±0,09 до 7,14±0,26% ($p<0,01$).

Табл. 2. Физико-химические свойства молока местных коз с.Салли Вайоцдзорского марза.

Показатели	**Период лактации**								
	15.06.2003 (n±72)			15.07.2003 (n±45)			11.08.2003 (n±66)		
	Lim	M±m	C	Lim	M±m	C	Lim	M±m	C
Жир, %	3,0-7,0	4,8±0,09	15,8	4,5-9,5	6,1±0,17	18,69	4,5-10,0	7,14±0,26	29,69
Сухие вещества, %	12,2-18,0	14,92	----	13,0-20,0	15,97	----	13,0-21,0	16,92	----
Белок, %	3,0-4,5	3,8±0,02	5,0	3,5-4,5	3,75±0,11	15,8	3.01-4,5	3,73±0,03	5,63
СОМО, %	9,0-11,0	10,0±0,5	4,18	8,5-10,5	9,87±0,06	3,85	8,51-11,0	9,78±0,05	3,99
Плотность, г/см^3	1,03-1,03	1,034±0,0016	0,004	1,028-1,034	1,03±0,0007	0,004	1,027-1,034	1,03±0,0001	0,005
Точка замерзания, минус °С	0,60:0,69	0,64±0,002	0,03	0,58-0,65	0,62±0,002	0,02	0,57-0,65	0,60±0,002	0,02
Отношение жир/белок	1,0-1,55	1,28	----	1,29-2,11	1,62	-----	2,22	1,91	----

С июня по август содержание жира в молоке повышается на 46,6%, тогда как количество сухих веществ всего лишь на 13,4 %. В химическом составе молока содержание белка более стабильно и за исследуемый период колебалось в пределах 3,73-3,80 %, т.е. практически было неизменно. Соотношение жира и белка за этот период изменялось. Так, в начале экспериментального периода это соотношение составляло 1,28, а в конце – 1,91.

Шуварииков, Бодрова и Пастух отмечают, что содержание жира в молоке коз зааненской породы колебалось в пределах 3,4-3,6 %, белка – 3,18-3,23%, сухих веществ – 11,6-11,8%, лактозы – 4,19-4,37% [9]. Чикалев отмечает, что химический состав козьего молока зависит от породы [7]. Так например, молоко нубийских коз отличается исключительно высоким содержанием жира (8,5%) и сухих веществ (19,7%). По содержанию жира оно превосходит молоко буйволиц (7,5%), овец (6,7%), самок яка (6,5%) и зебу (5,2%), уступая только молоку оленя (22,5%) и крольчих (10,4%).

Таким образом, рассмотренные литературные данные достаточно противоречивы и не содержат однозначного ответа о видовых и породистых различиях в физико-химических свойствах молока. Полученные нами данные позволяют констатировать, что молочная продуктивность и физико-химические свойства местных коз Армении характеризуются средними величинами и динамично изменяются в течение лактации. Для более широкого использования молока в качестве сырья для производства молочных продуктов считаем необходимым дальнейшее глубокое изучение факторов, влияющих на физико-химический состав и физические свойства козьего молока. Полученные нами результаты могут быть использованы в селекционно-племенной работе по созданию молочного типа коз в Армении и перерабатывающими хозяйствами с целью повышения экономической эффективности козоводства. Материалы работы могут быть использованы также при разработке нормативно-технической документации (стандарты, технические условия) на козье молоко.

ЛИТЕРАТУРА

1. *Багдасаров Г.Н.* Продуктивные и некоторые биологические особенности помесных овец Армении и влияние на них условий питания. Автореф. дисс. докт. с/х наук, Горский с/х ин-т, Ереван, 1971.
2. *Глигвашвили В.А.* Козоводство Грузии. Монография, автореф. на соиск. уч. степ. докт. с/х наук, Тбилиси, *21*, с. 13, 1998.
3. *Мармарян Ю.Г., Тер-Исаакян Л.Г.* Молочная продуктивность разводимых в Армении местных и помесных (F1) коз. Агрогитутюн, 7-8, с. 84-87, Ереван, 2009.
4. *Новопашина С.И., Санников М.Ю.* Состояние и перспективы молочного козоводства в Российской федерации. Овцы, козы, шерстяное дело, 4, с.10-13, 2010.

5. *Плохинский Н.А.* Биометрия, 2-е изд-е, изд-во Московского университета, с.367, 1970.
6. *Толкачева А.В.* Биоресурсный потенциал коров черно-пестрой и голштинской пород в условиях Зауралья. Курган. Дис. на соиск. уч. степ. канд. биол. наук, с.151, 2010.
7. Чикалев А.И. Козоводство. Горно-Алтайск, с.97-98, 2010.
8. *Шаталов В.А.* Этапы развития молочного козоводства в России. Овцы, козы, шерстяное дело, 4, 16-19, 2012.
9. *Шувариков А.С., Бодрова Ю.Н., Пастух О.Н.* Влияние производителей на физико-химические и технологические показатели молока коз зааненской породы. Овцы, козы, шерстяное дело, 1, с.5-6, 2011.
10. http://ru.wikipedia.org/wiki
11. http://farmerforum.ru/viewtopic.phpt
12. http://www.prinevskoe.ru/koza_work.htm1

Поступила 06.05.2013

Հայաստանի Գիտությունների Ազգային Ակադեմիա
Национальная Академия Наук Армении
National Academy of Sciences of Armenia

Հայաստանի Կենսաբանական Հանդես
Биологический Журнал Армении
Biological Journal of Armenia

• *Փորձարարական և տեսական հոդվածներ* •***Экспериментальные и теоретические статьи***•
•***Experimental and theoretical articles***•

Հայաստանի կենսաբ. հանդես, 3(65), 2013

ԳԵԶԱԳԱՐԴԻ ԵՎ ԶԵՆԿՈՐԻ ԹՈՒՆԱԶՐԿՄԱՆ ԴԻՆԱՄԻԿԱՆ ԿԱՐՏՈՖԻԼԻ ՊԱԼԱՐՆԵՐՈՒՄ ՈՒ ՀՈՂՈՒՄ ԵՎ ՆՐԱՆՑ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀՈՂԻ ՇՆՉԱՌՈՒԹՅԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Ս.Մ. ՍԱՐԳՍՅԱՆ, Ա.Լ. ԲԱԼԱՅԱՆ, Լ.Հ. ԱՃԵՄՅԱՆ

Սննդի անվտանգության ոլորտի ռիսկերի գնահատման
և վերլուծության գիտական կենտրոն
sonasargsyan@rambler.ru

Բացահայտված է, որ կարտոֆիլի պալարներում և հողում գեզագարդի համեմատ զենկորի միջոցով թունազրկումն ընթանում է առավել դանդաղ: Կարտոֆիլի պալարներում գեզագարդի ,սպասման ժամկետըե կազմում է 60 օր, զենկորինը՝ 90 օր:

Հաստատված է, որ հող ներմուծված հերբիցիդները (ստուգիչի համեմատ) առաջին երեք ամսում (մայիսից հուլիս) հավաստիորեն ճնշում են հողի շնչառության ուժգնությունը: Այնուամենայնիվ, հողում CO_2-ի անջատման ուժգնությունը հետագայում վերականգնվում է՝ գործնականում հավասարվելով ստուգիչի մակարդակին:

Գեզագարդ – զենկոր – կարտոֆիլ – սևահող – թունազրկում – հողի շնչառություն

Выявлено, что процесс детоксикации зенкором в почве и клубнях картофеля протекает значительно медленнее, нежели детоксикация гезагардом."Сроки ожидания" гезагарда в клубнях картофеля составляет 60 дней, зенкора – 90 дней.

Установлено, что интродуцированные в почву гербициды (по сравнению с контролем) на три месяца (с мая по июль) достоверно подавляют интенсивность дыхания почвы. Однако интенсивность выделения CO_2 в почве восстанавливается до уровня контроля.

Гезагард – зенкор – картофель – чернозем – детоксикация – дыхание почвы

The detoxification by gezagard in soil and in the tubes of potato takes place more slowly in compare with the detoxification by zencor. “Waiting period" in potato tubes for gezagard is 60 days, for zencor – 90 days.

It has been confirmed that the herbicides applied into the soil suppress reliably the activity of soil respiration in compare with the control test during the first three months (from May to July). However, the strength of CO_2 – emission from the soil is recovered then and practically equates the level of the control test.

Gezagard – zencor – potato – black earth – detoxification – soil respiration

Գյուղատնտեսական մշակաբույսերի մոլախոտերի դեմ պայքարի նպատակով ներկայումս լայնորեն կիրառվում են մի շարք արդյունավետ հերբիցիդներ, որոնց թվին են պատկանում նաև գեզագարդը և զենկորը: Հող ներմուծվելուց հետո հերբիցիդների մնացորդները բավականին երկար ժամանակ պահպանվում են հողում, իսկ դրանց մի մասը ներթափանցում է պաշտպանվող մշակաբույսերի մեջ, դրանով իսկ ստեղծելով որոշակի վտանգ մարդկանց առողջության համար: Հողում պահպանվող հերբիցիդների մնացորդները իրենց հերթին կարող են էապես ազդել նրա կենսաբանական ակտիվության, օգտակար միկրոֆլորայի, շրջակա միջավայրի վրա [10]:

Գյուղատնտեսական մշակաբույսերում և հողում պեստիցիդների, այդ թվում նաև հերբիցիդների, թունազրկման ակտիվությունը և տևողությունը կախված է մի շարք էկզոգեն և էնդոգեն գործոններից և կարող է էապես փոխվել պաշտպանվող մշակաբույսերի և հողի կենսաբանական ակտիվությունից, արտաքին պայմանների ազդեցությունից [11]:

Եթե մշակաբույսերի վրա հերբիցիդների ազդեցության մեխանիզմները ինչ-որ չափով ուսումնասիրված են, ապա հողի կենսաբանական ակտիվության, այդ թվում նաև շնչառության պրոցեսի վրա, հերբիցիդների ազդեցությունը համաշխարհային գրականությունում ոչ բավարար չափով է լուսաբանված: Մինչդեռ շնչառությունը կենսականորեն անհրաժեշտ պրոցես է և համարվում է հողի կենսաբանական ակտիվության կարևորագույն ցուցանիշը [3]:

Հողի շնչառության պրոցեսի արդյունքում առաջացող ածխաթթու գազի քանակությունը պայմանավորված է մի շարք գործոններով՝ մանրէների խտությամբ, օրգանական նյութերի կազմով և քանակությամբ, հողի ֆիզիկական վիճակով և բույսերի արմատային համակարգի շնչառության ակտիվությամբ [4, 7, 8, 9]:

Բնական է, որ հողում պարունակվող մանրէների գործունեության վրա կարող են ազդել ժամանակակից հերբիցիդները, որոնք աչքի են ընկնում կենսաբանորեն բարձր ակտիվությամբ [12]:

Ելնելով վերոհիշյալից, ներկայացվող աշխատանքի նպատակն է եղել ուսումնասիրել կարտոֆիլի տնկարկներում տարածված մոլախոտերի դեմ պայքարի համար կիրառվող գեզագարդի (ԽԿ, 500 մլ/լ) և զենկորի (ԹՓ, 700 գ/կգ) թունազրկման դինամիկան տիպիկ սևահողերում և պալարներում, ինչպես նաև նրանց ազդեցությունը հողի շնչառության պրոցեսի ինտենսիվության վրա:

Նյութ և մեթոդ: Հետազոտությունը կատարվել են 2011-2012 թթ.՝ լաբորատոր և դաշտային պայմաններում: Դաշտային փորձերը դրվել են Գեղարքունիքի մարզի Ճամբարակի համայնքի կարտոֆիլով զբաղեցված տիպիկ սևահողերում: Հերբիցիդներով ցողված և չցողված (ստուգիչ) տարբերակներն ունեցել են 5-ական կրկնողություն, յուրաքանչյուր տարբերակը 50 մ^2 ընդհանուր մակերեսով: Ցողումները կատարվել են մայիսի 15-ին Ozdesan մակնիշի մեջքի սրսկիչով՝ կարտոֆիլի սերմացուի տնկումից 6 օր անց: Աշխատանքային հեղուկի ծախսը կազմել է 3 լ/50 մ^2, իսկ գեզագարդի և զենկորի ծախսի նորմաները՝ համապատասխանաբար 15 մլ/50 մ^2 և 7գ/50 մ^2: Հետազոտություններն կատարվել են մայիսից սեպտեմբեր: Հերբիցիդներով ցողված և չցողված տեղամասերից առաջին հողանմուշները վերցվել են սրսկման օրը և այնուհետև յուրաքանչյուր ամսվա միևնույն օրը: Հերբիցիդների մնացորդային քանակները հողում և կարտոֆիլի պալարներում որոշվել են նրբաշերտ քրոմատոգրաֆիայի եղանակով [5, 6]: Շնչառությունը որոշվել է համաձայն մեթոդական ձեռնարկի [3]: Գիտափորձերում տարբերակներն ունեցել են 3-ական կրկնողություն:

Հետազոտության արդյունքները ենթարկվել են վիճակագրական վերլուծության [1, 2]:

Արդյունքներ և քննարկում: Գեզագարդի և զենկորի թունազրկմանը վերաբերող տվյալները վկայում են, որ կարտոֆիլով զբաղեցված տնկարկների հողում և պալարներում նրանց թունազրկման ինտենսիվությունը տարբեր է (աղ.1):

Աղ.1. Գեզագարդի և զենկորի թունազրկման դինամիկան հողում
և կարտոֆիլի պալարներում, մգ/կգ

Պատրաստուկ	Հետազոտության օբյեկտը	Օրերը սրսկումից հետո					
		0	30	60	90	120	140
Գեզագարդ	հող	3,0	0,24	հետքեր	չ/հ	-	-
	պալար	-	-	չ/հ	-	-	-
Զենկոր	հող	7,5	0,88	0,44	0,24	հետքեր	-
	պալար	-	-	0,40	0,18	հետքեր	չ/հ

Ծանոթագրություն. չ/հ - չի հայտնաբերվել, " - " - անալիզ չի կատարվել

Ի տարբերություն զենկորի, գեզագարդի թունազրկումը և՛ հողում, և՛ պալարներում ընթանում է շատ ավելի արագ, ընդ որում արդեն ցողումից 2 ամիս անց պալարները լրիվ ազատվում են գեզագարդի մնացորդներից և դառնում անվտանգ օգտագործման համար:

Նշված ժամկետում հողում դեռևս հայտնաբերվում են գեզագարդի մնացորդներ, որոնք, սակայն, ի հայտ են գալիս լոկ հետքերի տեսքով:

Չնայած առաջին մեկ ամսում զենկորի մնացորդները հողում նվազում են 8,5 անգամ, սակայն հետագայում պատրաստուկի թունազրկման գործընթացը բավականին դանդաղ է ընթանում և նույնիկ 120 օր անց հողում դեռևս առկա են զենկորի մնացորդներ, ճիշտ է, միայն հետքերի տեսքով: Պալարներում ևս զենկորի թունազրկումը ընթանում է դանդաղ և հասնում առավելագույն թույլատրվող մակարդակի միայն կիրառումից 3 ամիս անց (այն կարտոֆիլի պալարներում հաստատված է 0,25 մգ/կգ):

Ստացված տվյալները հիմք են տալիս Գեղարքունիքի մարզի Ճամբարակի համայնքի տիպիկ սևահողերում տնկված կարտոֆիլի համար անվտանգության "սպասման ժամկետներ" սահմանել. գեզագարդ կիրառելիս՝ 60 օր, զենկոր կիրառելիս՝ 90 օր (նկ.1):



Նկ.1. Ածխաթթու գազի անջատման ուժգնությունը կարտոֆիլով տնկված տիպիկ սևահողերում հողային հերբիցիդներ ներմուծելուց հետո (2011-2012թթ. միջինը):

Նկ. 1-ից պարզորոշ երևում է, որ ստուգիչ (չցողված) տարբերակում CO_2-ի անջատման ուժգնացումը սկսվում է մայիսից (3,509 մգ CO_2/100գ հողում), առավելագույնի հասնում հունիսին (4,616 մգ CO_2/100 գ հողում) և հուլիսին (4,759 մգ CO_2/100գ հողում), այնուհետև նվազում օգոստոսից (3,054 մգ CO_2/100գ հողում) սեպտեմբեր (2,687 մգ CO_2/100 գ հողում), իսկ գեզագարդ և զենկոր տարբերակներում նշված ցուցանիշը մայիսից (համապատասխանաբար 1,158 մգ և 1,914 մգ CO_2/100 գ հողում) ուժգնանում է, առավելագույնի հասնում հուլիսին (համապատասխանաբար 3,545 և 3,817 մգ CO_2/100 գ հողում) և վերջիններիս համեմատ նվազում հետագա երկու ամիսներին (ընդհանրացված՝ 2,585-2,827 մգ CO_2/100 գ հողում):

Գրական աղբյուրների տեղեկատվությամբ բուսաճման շրջանում CO_2-ի անջատման ուժգնությունը ուղղակիորեն կախված է հողի խոնավությունից, ջերմությունից և մանրէների ընդհանուր քանակությունից [3, 7]:

Մեր փորձերում CO_2-ի անջատման դինամիկական փոփոխությունը մայիսից մինչև սեպտեմբեր հավանաբար պայմանավորված է վերոնշյալ գործոններով:

Վիճակագրական վերլուծության արդյունքներով հաստատված է, որ ցողման արդյունքում հող ներմուծված գեզագարդն ու զենկորը երեք ամսով (մայիս – հուլիս) ստուգիչի համեմատ հավաստիորեն ճնշում են CO_2-ի անջատման ինտենսիվությունը կարտոֆիլով զբաղեցված տիպիկ սևահողերում ($P_{0,95}$ և n=3-ի դեպքում Ստյուդենտի t չափանիշ-ի հաշվարկային ցուցանիշներ 5,577–13,242 > 3,182 Ստյուդենտի t չափանիշ-ի աղյուսակային ցուցիչից), իսկ օգոստոսին և սեպտեմբերին հերբիցիդներով ցողված և չցողված տարբերակներում ածխաթթվային գազի անջատման ինտենսիվությունների միջև արձանագրված չէ հավաստի տարբերություն (Ստյուդենտի t չափանիշ-ի հաշ-վարկային ցուցանիշներ 0,744 – 1,982 < 3,182 Ստյուդենտի t չափանիշ-ի աղյուսակային ցուցիչից): Փորձի սխալը քննարկված տարբերակ-ներում տատանվել է 2,3-4,5%-ի սահմաններում, ինչն էլ հաստատել է, որ գիտափորձերի արդյունքները հավաստի են:

Այսպիսով, ստացված տվյալները հիմք են տալիս Գեղարքունիքի մարզի Ճամբարակի համայնքի տիպիկ սևահողերում տնկված կարտոֆիլի համար անվտանգության ,սպասման ժամկետներե սահմանել գեզագարդ կիրառելիս՝ 60 օր, զենկոր կիրառելիս՝ 90 օր:

Ածխաթթվային գազի անջատման ուժգնությունը գեզագարդով, զենկորով առանձին ցողված և չցողված (ստուգիչ) կարտոֆիլով զբաղեցված սևահողերում մայիսից սեպտեմբեր կրել են դինամիկ փոփոխություն:

Ցողված հերբիցիդները ստուգիչի համեմատ կարտոֆիլով զբաղեցված տիպիկ սևահողերում երեք ամսով (մայիսից հուլիս) հավաստի ճնշել են CO_2-ի անջատման ուժգնությունը, որից հետո (օգոստոս-սեպտեմբեր) նշյալ հողերն ըստ էության ունեցել են շնչառության ուժգնության նույնական ցուցանիշ:

Էկոլոգիական տեսանկյունից գեզագարդն ու զենկորը շնչառության ուժգնության վրա գործնականում ցուցաբերում են միանման ազդեցություն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Ашмарин И.П., Воробьев А.А.* Статистические методы в микробиологических исследованиях. Л., Медгиз, 180 с., 1962.
2. *Бернстейн А.* Справочник статистических решений. М., Статистика, 162 с., 1968.
3. *Галстян А.Ш.* Ферментативная активность почв Армении. Ереван, Айастан , В. VIII, 275 с., 1974.
4. *Имшенецкий А.А.* Микробиология целлюлозы. М., АН СССР, 438 с., 1953.
5. Методы определения микроколичеств пестицидов в продуктах питания, кормах и внешней среде. М., Колос, 368 с., 1977.
6. Методические указания по определению микроколичеств пестицидов в продуктах питания, кормах и внешней среде., Ч. XII, с. 111-118, 1982.
7. *Некрасова В.Д., Гукасян А.Б.* Биологическая активность лесных почв Тувы. Новосибирск, Наука, с. 35-38, 1978.
8. *Омелянский Б.Л.* Краткий курс общей и почвенной микробиологии. М.-Л., Сельхозгиз, 183 с., 1931.
9. *Руссель С.* Микроорганизмы и жизнь почвы. М., Колос, с. 97-99, 1977.
10. *Goux S. J., Shapir N., El Fantroussi S., Lelon G.S., Agathos S.N., Pussemier L.* Long-term maintenance of rapid atrazine degradation in soils inoculated with atrazine degraders. Water, Air & Soil Pollution: Focus, *3*, p. 131, 2003.
11. *Krutz L.J., Senseman S.A., Haney R.I.* Effects of Roudup Ultra on atrazine degradation in soil. Biol. Fertil. Soils. *38*, p. 115, 2003.
12. *Lin C.H., Lerch R.N., Kremer R.J., Garrett H.E., Udawatta R.P., George M.F.* Soil microbiological acti-vities in vegetative buffer strips and their association with herbicide degradation. AFTA. Conference Proceedings, 10 p., 2005.

Ստացվել է 30.01.2013

Հայաստանի Գիտությունների Ազգային Ակադեմիա
Национальная Академия Наук Армении
National Academy of Sciences of Armenia

Հայաստանի Կենսաբանական Հանդես
Биологический Журнал Армении
Biological Journal of Armenia

• *Փորձարարական և տեսական հոդվածներ* •***Экспериментальные и теоретические статьи***•
•***Experimental and theoretical articles***•

Հայաստանի կենսաբ. հանդես, 3(65), 2013

PARAMECIUM CAUDATUM ԻՆՖՈՒԶՈՐԻԱՅԻ ԵՎ ԷՆՑԵՖԱԼՈՄԻՈԿԱՐԴԻՏԻ ՎԻՐՈՒՍԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄԸ

Ն.Վ. ԲԱՅՐԱՄՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտ
Բջջային կենսաբանության լաբորատորիա
naneramaz@mail.ru

Էնցեֆալոմիոկարդիտի վիրուսի և *Paramecium caudatum* ինֆուզորիաների կոինկուբացման ուսումնասիրության ժամանակ հայտնաբերվել է ինֆուզորիաների քանակի հավաստի ավելացում կենդանի վիրուսի առկայության պայմաններում: Պարամեցիումի քանակական աճը էն-ցեֆալոմիոկարդիտի վիրուսի առկայությամբ հնարավոր չէ բացատրել միայն նրանով, որ վիրուսը ինֆուզորիաների համար սննդի աղբյուր է ծառայում: Դրա մասին է վկայում, սննդային միջավայր ինակտիվ վիրուսներ ներմուծելու ժամանակ ինֆուզորիաների քանակի աննշան ավելացումը:

Ինֆուզորիաների քանակի աճմանը զուգահեռ տեղի է ունենում վիրուսի տիտրի նվազում, որը կենդանի ինֆուզորիայի հետ կոինկուբացման դեպքում կապված չէ վերջինիս պրոտեոլիտիկ ֆերմենտների հետ, քանի որ, ինֆուզորիաների լիզատները ազդեցություն չեն ցուցաբերում վիրուսի տիտրի վրա:

Paramecium caudatum – էնցեֆալոմիոկարդիտի վիրուս

При исследовании коинкубации вируса энцефаломиокардита с инфузорией *Paramecium caudatum* выявлено достоверное увеличение численности инфузорий в присутствии живого вируса. Рост численности парамеций в присутствии вируса энцефаломиокардита невозможно объяснить только тем, что последний служит лишь источником пищи для инфузорий. Об этом свидетельствует незначительное возрастание численности инфузорий при внесении в среду инактивированных вирусов.

Одновременно с ростом численности инфузорий происходит снижение титров вируса, которое при инкубации с живыми инфузориями не связано с протеолитическими ферментами инфузорий, так как лизаты последних не оказывали влияния на инфекционные титры вируса.

Paramecium caudatum – вирус энцефаломиокардита

The quantity of infusorias increased during the coincubation of Encephalomyocarditis virus° with infusoria *Paramecium caudatum*. This phenomenon is not a result of the explanation in accordance with *Paramecium* is food source for infusorias. This is supported by that fact that quantity of infusorias increased when we add the same amount of inactivated virus into the medium.

Along with the increasing number of infusoria the viral titers was reduced. This decrease is not associated with proteolytical effect of infusoria's enzymes, because infusorias lysates do not influence on infectious virus titers.

Paramecium caudatum – Encephalomyocarditis virus

Վիրուսներն, ինչպես նաև այլ միկրոօրգանիզմներ, կարող են սիմբիոզի մեջ մտնել տարբեր նախակենդանիների հետ՝ ստեղծելով նախակենդանիվիրուս համակարգ, որը կարող է ունենալ մեծ դեր վիրուսի էկոլոգիայի տեսանկյունից [5, 9, 11, 12]:

Այդ համակարգում մի կողմից նախակենդանիները կարող են հանդիսանալ տեր կամ

շտեմարան վիրուսների համար, մյուս կողմից՝ վերջիններս կարող են ինակտիվացվել նախակենդանիների կողմից [2, 3]: Այդ համակարգում առավելապես հետաքրքիր են վիրուս – նախակենդանիներ փոխհարաբերությունները, քանի որ ինֆուզորիաները պատկանում են ամենատարածված նախակենդանիների շարքին:

ԷՄԿ պիկոռնավիրուսը համարվում է մարդու և կենդանիների վտանգավոր հիվանդությունների հարուցիչ [7]: Այն կարող է առաջացնել համաճարակ և գյուղատնտեսական կենդանիների զանգվածային մահածության պատճառ հանդիսանալ [14]: Աշխատանքի նպատակն է եղել պիկոռնավիրուսի էկոլոգիայի ուսումնասիրումը և դրա կենսաշրջանառությունը նախակենդանի վիրուս համակարգում:

Նյութ և մեթոդ: Աշխատանքում օգտագործվել են *Paramecium caudatum* ինֆուզորիաներ, որոնք աճեցվել են 22 ^{0}C-ում Losina-Losinsky միջավայրում (աղային լուծույթ) [10]: Փորձերի համար ինֆուզորիաները ինկուբացվել են վիրուսի հետ 22^{0}C-ում նույն *Losina-Losinsky* միջավայրում: Զուգահեռ ստեղծվել է նաև ինֆուզորիաներից զատ (միայն վիրուսով) ստուգիչ խումբ: Ինֆուզորիաների ինակտիվացումը և քայքայումը կատարվել է երեք անգամ՝ վերջիններիս սառեցման/ապասառեցման եղանակով:

Աշխատանքում օգտագործվել է ԷՄԿ վիրուսի Columbia-SK շտամը: ինֆուզորիաներով Losina-Losinksy միջավայր ներմուծվել է 5,0 log TCD 50/մլ չափաբաժնով վիրուս: Ինֆուզորիա-ԷՄԿ վիրուսը կոինկուբացվել է 24, 48, 72, 96, 120, 144, 168, 192, 216 ժ: Յուրաքանչյուր ժամվա (24 ժ) ինֆուզորիա-ԷՄԿ վիրուս կուլտիվացված միջավայրից վերցվել են փորձանմուշներ և տիտրվել RD (մարդու ռաբդոսարկոմայի տրանսֆորմացված բջիջներ) բջջային կուլտուրայի վրա: Վիրուսի տիտրը որոշվել է KՊrber-ի մեթոդով [4]: Վիրուսի ինակտիվացումը կատարվել է ջերմային եղանակով՝ միջավայրի ջերմությունը 60 ^{0}C, տևողությունը 50 րոպե: Ի սկզբանե, ինակտիվացված վիրուսի չափաբաժինը եղել է նույնը, ինչ որ փորձարարական խմբում: Նույնն է եղել նաև *P. caudatum* ինֆուզորիաների և ինակտիվացված վիրուսի ինկուբացման ժամանակը:

Աշխատանքում օգտագործվել է RD բջջային կուլտուրա, որն աճեցվել է Eagle MEM միջավայրում՝ ավելացրած խոշոր եղջերավոր կենդանու 10%-անոց շիճուկ: Փորձերն կատարվել են 36-36.5$^{\prime}$C ջերմաստիճանում:

Բոլոր ուսումնասիրությունները կատարվել են վեց չափանիշի կրկնությամբ: Վիճակագրական վերլուծությունը կատարվել է ըստ Ստյուդենտի:

Արդյունքներ և քննարկում: Ուսումնասիրվել է սննդային միջավայրում կենդանի ինֆուզորիաների ազդեցությունը վիրուսի տիտրի և վարակի ակտիվության վրա: Ինչպես երևում է նկ. 1-ից՝ ինֆուզորիաների հետ կոինկուբացիայի ընթացքում վիրուսի տիտրը նվազում է ստուգիչ խմբի հետ համեմատած: ԷՄԿ վիրուսի տիտրի նվազումը սկսվում է կուլտիվացումից 24 ժ հետո և տևում է 4 օր, կուլտիվացման 6-րդ օրը հասնում է՝ 4-4.7 log TCD 50/մլ, իսկ 9-րդ օրվա կուլտիվացման ընթացքում ԷՄԿ վիրուսի տիտրը իջնում է 4,25 log TCD 50/մլ: Պարամեցիումի հետ կոինկուբացման ժամանակի ավելացմանը զուգահեռ՝ վերը նշված պիկոռնավիրուսի վարակի ակտիվությունը նվազում է:



Նկ.1. ԷՄԿ վիրուսի տիտրի նվազումը *P. caudatum* ինֆուզորիաների հետ կոինկուբացման ընթացքում

Կատարվել է *P.caudatum* ինֆուղորիաներիի լիզատներում ԷՄԿ վիրուսի տիտրի դինամիկայի վերլուծություն: Համաձայն մեր ստացված տվյալների՝ ԷՄԿ վիրուսի տիտրերը քայքայված ինֆուզորիաներով միջավայրում չի փոխվել դիտարկման ամբողջ ժամանակահատվածում:

Աղ.1. Էնցեֆալոմիոկարդիտ վիրուսի տիտրի դինմիկան *P. caudatum* ինֆուզորիաների լիզատներում

Կոինկուբացման օրերը	ԷՄԿ վիրուս ստուգիչ խումբ	ԷՄԿ-ի վիրուսի կոինկուբա-ցումը քայքայված *P. caudatum*-ի հետ
0	5	5
1	5	5
2	5	5
3	5	5
4	4,5	4,5
5	4,5	4,5
6	4,5	4,5
7	4,5	4,25
8	4,5	4,25
9	4,25	4,25

Ուսումնասիրվել է *P.caudatum*-ի քանակական փոփոխությունը ակտիվ և ինակտիվ ԷՄԿ վիրուսի կոինկուբացման ընթացքում: Ստացված արդյունքները ամփոփված են նկ. 2-ում:



Նկ.2. *P. caudatum* ինֆուզորիաների քանակական փոփոխությունը
ԷՄԿ վիրուսի հետ կոինկուբացման ընթացքում

Ինչպես երևում է նկ. 2-ից՝ ինֆուզորիաները ԷՄԿ վիրուսի փոխազդեցության պայմաններում հասնում են աճման ավելի բարձր մակարդակի, քան առանձին պայմաններում: Դրանց քանակը ստուգիչ խմբի հետ համեմատած տալիս է զգալի տարբերություն սկսած ինկուբացման 3-րդ օրից (ստուգիչ խումբ՝ 12.0˚1.8, փորձարարական խումբ՝ 74.6˚15.4 t=4.10, ($p<0.01$), ինակտիվացված վիրուսով՝ 33,4˚2,9 (ստուգիչ խմբի հետ $p<0,05$, փորձարարական խմբի հետ $p<0,01$) մինչև 5-րդ օրը և պահպանվում է մինչև 9-րդ օրը (ստուգիչ խումբ՝ 20,0˚4,3, փորձարարական խումբ՝ 107,0˚16,3 ($p<0,01$), ինակտիվացված վիրուսով՝ 55,1˚10,2 (ստուգիչ խմբի հետ $p<0,05$, փորձարարական խմբի հետ $p<0,01$): Ինակտիվ վիրուսի ազդեցությամբ ինֆուզորիաների քանակը քիչ է ավելանում ստուգիչ խմբի ինֆուզորիաների քանակի համեմատ:

Նախակենդանիների օրգանիզմում պիկոռնավիրուսների պահպանման հնարավորությունների մասին ապացույցները հաստատված են որոշ աշխատանքներում [8, 13], - սակայն պիկոռնավիրուսների և թարթիչավորների միջև փոխհարաբերությունների առանձնահատկությունները դեռևս պարզաբանված չեն: Մի շարք գիտնական- ներ առաջարկեցին *Tetrahimena pyriformis* ինֆուզորիայի և պոլիոմելիթի միջև փոխհարաբերության չեզոք ձև, սակայն հետագայում ցույց տրվեց, որ պոլիոմիելիթը կարող է բազմանալ *T.pyriformis*-ի մեջ [8]: Բացի այդ գոյություն ունեն շատ հակասական փաստեր: Այսպես, որոշ բակտերիոֆագեր, ինչպիսիք են՝ PhiX174 և MS2 կայուն են *T. pyriformis*-ի կողմից ինակտիվացմանը [1]: Սակայն ցույց է տրվել, որ T4 բակտերիոֆագը ինակտիվացվում է նույն ինֆուզորիայի կողմից [6]: Գրականության մեջ Էնցեֆալոմիոկարդիտ վիրուսի և *P. caudatum*-ի փոխհարաբերությունների վերաբերյալ տվյալներ գրեթե չկան: Էնցեֆալոմիոկարդիտի և ինֆուզորիայի միջև եղած փոխհարաբերությունը նկարագրված է *T. pyriformis* ինֆուզորիայի օրինակով [8]:

Այսպիսով, ստացված տվյալները ցույց են տալիս, որ կենդանի ինֆուզորիաներով միջավայրում ԷՄԿ վիրուսի ինակտիվացումը կատարվում է ավելի արագ, քան ինֆուզորիայի լիզատների փոխազդեցության պայմաններում (նկ.1, աղ. 1): Սա ապացուցում է, որ վերջիններս միմյանց հետ մտնում են որոշ փոխազդեցության մեջ: Կատարված փորձերից կարելի է ենթադրել, որ ինֆուզորիաները ինակտիվացնում են ԷՄԿ վիրուսը այն միջավայրում, որտեղ տեղի է ունեցել կոինկուբացումը: Վիրուսի ինակտիվացումը պայմանավորված չէ ինֆուզորիաների պրոտեոլիտիկ ֆերմենտների ազդեցությամբ, քանի որ էնցեֆալոմիոկարդիտի և քայքայված ինֆուզորիաների համատեղ կոինկուբացման պայմաններում չեն առաջանում վիրուսի տիտրի էական տարբերություններ: Պարզվել, որ կենդանի ինֆուզորիայի և վիրուսի կոինկուբացման ընթացքում, որ վիրուսային տիտրերի նվազմանը զուգընթաց ավելանում է ինֆուզորիաների քանակը: Այս երևույթը պայմանավորված չէ միայն վիրուսին՝ որպես սննդային աղբյուր օգտագործելու փաստով, քանի որ համաձայն մեր տվյալների՝ ինակտիվ վիրուսներ ներմուծելով սննդային միջավայր ինֆուզորիաների քանակը շատ քիչ է ավելանում ստուգիչ խմբի համեմատ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Akunyili A.A., Alfatlawi M., Upadhyaya B., Rhoads L.S., Eichelberger H, Van Bell C.T.* Ingestion without inactivation of bacteriophages by Tetrahymena. J. Eukaryot. Microbiol., *55*, 3, 207-213, 2008.
2. *Bettarel Y., Amblard C., Sime-Ngando T., Carrias J.-F., Sargos D., Garabetian F. & Lavandier P.* Viral lysis, flagellate grazing potential and bacterial production in Lake Pavin: a short-term study. Microbial Ecology, *45*, 119-127, 2003.
3. *Blawat F., Kowalska Z.* Investigations *in vitro* on the influence of some amoeba on survival of poliomyelitis virus . Bull. Inst. Marine Med. In Gdansk. *14*, p. 15-24, 1963.
4. *Finney J.* Statistical Method in Biological Assay. Hafner Publishing Co., N.Y.
5. Gastrich M.D., Anderson O.R., Sh.S. Benmayor, and E.M. Cosper Ultrastructural analysis of viral infection in the brown-tide alga, Aureococcus anophagefferens (Pelagophyceae). Phycologia: July 1998, *37*, 4, pp. 300-306, 1952, 1998.
6. *Hennemuth W., Rhoads L.S., Eichelberger H., Watanabe M., Van Bell K.M., Ke L, Kim H, Nguyen G, Jonas J.D., Veith D., Van Bell C.T.* Ingestion and inactivation of bacteriophages by Tetrahymena. J. Eukaryot. Microbiol. 55, 1, 44-50, 2008.
7. *Kirkland, P.D., Gleeson, A.B., Hawkes, R.A., Naim, H.M., Broughton. C.R.* Human infection with encephalomyocarditis virus in New South Wales. Med. J. Aust., 151, 176-177, 1989.
8. *Kovacs E., Bucz B.* Propagation of mammalian viruses in protista. II. Isolation of complete virus from yeast and Tetrahymena experimentally infected with picorna viral particles or their infectious RNA. Life Science, 1967, v 6, 347-358
9. *Lawrence, J. E., A. M. Chan, and C. A. Suttle.* A novel virus (HaNIV) causes lysis of the toxic bloom-forming alga Heterosigma akashiwo (Raphidophyceae). J. Phycol. *37*, 216-222, 2001.
10. *Losina-Losinsky L.K.,* Zur Ernährungsphysiologie der Infusorien. Untersuchungen über die Nahrungsmittel und Vermehrung beiParamecium caudatum. Arch. Protistenk. *74*, 18–20, 1931.
11. *Schroeder, D.C., J. Oke, G. Malin, and W.H. Wilson.* Coccolithovirus (Phycodna-viridae): characterisation of a new large dsDNA algal virus that infects Emiliania huxleyi. Arch. Virol. *147*, 1685-1698, 2002.
12. *Takao Y., Nagasaki K., Mise K., Okuno T., Honda D.* Appl. Environ. Microbiol. Isolation and Characterization of a Novel Single-Stranded RNA Virus Infectious to a Marine Fungoid Protist, Schizochytrium sp. (Thraustochytriaceae, Labyrinthulea), *71*, p. 4516-4522, 2005.
13. *Teras J., Kesa L., Kallas E., Jogiste A.* On the relationship between some free-living and parasitic protozoa and the DNA and RNA-viruses. Abstr. V. Intern. Congr. Protozool. New-York, p446, 1977.
14. *Yamada T., Matsumori A., Wang W.Z., Ohashi N., Shiota K., Sasayama S.* Heart Vessels. Apoptosis in congestive heart failure induced by viral myocarditis in mice. *14*. p. 29-37, 1999.

Ստացվել է 25.03.2013

Հայաստանի Գիտությունների Ազգային Ակադեմիա | Հայաստանի Կենսաբանական Հանդես
Национальная Академия Наук Армении | Биологический Журнал Армении
National Academy of Sciences of Armenia | Biological Journal of Armenia

• *Փորձարարական և տեսական հոդվածներ* •***Экспериментальные и теоретические статьи***•
•***Experimental and theoretical articles***•

Հայաստանի կենսաբ. հանդես, 3(65), 2013

ԼՈՌՎԱ ՍԱՐԱՀԱՐԹԻ ՋՐԱՃԱՀՃԱՅԻՆ ՖԼՈՐԱՅԻ ԿԱՐԳԱԲԱՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ա.Ա. ԹՈՒՄԱՆՅԱՆ

Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտ
arusyaktumanyan@mail.ru

Կատարվել է Լոռվա սարահարթի ջրաճահճային ֆլորայի կարգաբանական վերլուծություն, որն ընդգրկում է անոթավոր բույսերի 178 տեսակ, որոնք պատկանում են 34 ընտանիքների 78 ցեղերի: Ուսումնասիրության համաձայն Լոռվա սարահարթի ջրաճահճային ֆլորան իր կարգաբանական կառուցվածքով հանդիսանում է Հոլարկտիկական թագավորության Բորեալ ենթաթագավորության Կովկասյան ֆլորիստիկական մարզի կազմի մեջ մտնող Լոռու ֆլորիստիկական շրջանի բաղադրիչ մասը և դրա հետ մեկտեղ կրում է գերխոնավ բնակատեղերի պարցիալ ֆլորաներին առանձնահատուկ գծերը:

Պարցիալ ֆլորա – կարգաբանական վերլուծություն – ընտանիքների սպեկտր – ցեղերի սպեկտր

Проведен таксономический анализ водно-болотной флоры Лорийского плато, включающей 178 видов сосудистых растений, относящихся к 78 родам из 34 семейств. Результаты исследований позволяют заключить, что водно-болотная флора Лорийского нагорья по своей таксономический структуре является составной частью Лорийского флористического района, входящего в состав Кавказской флористической области Бореального подцарства Голарктического царства, но при этом несет специфичные черты парциальной флоры переувлажненных местообитаний.

Парциальная флора – таксономический анализ – спектр семейств – спектр родов

There has been a taxonomik analysis carried out on the Lori plateau wetland flora, which includes 178 species of vascular plants belonging to 78 genera of 34 families. As a result of this research it can be concluded that according to its taxonomic structure the wetland flora of Lori plateau is part of the Lori floristic region component which is in the Caucasian province of Boreal sub-realm of Holarctic realm, but it has specific features of the partial flora of wetland habitats.

Partial flora – taxonomic analysis – spectrum of families – spectrum of genera

Լոռվա սարահարթը գտնվում է համանուն մարզի հյուսիսային հատվածում, Բազումի, Ջավախքի լեռնաշղթաների ու Վիրահայոց (Սոմխեթական) լեռների միջև: Ծովի մակերևույթից միջին բարձրությունը 1450 մ է: Ընկած է Տաշիրի և Ստեփանավանի տարածաշրջաններում՝ ձգվելով հյուսիս-արևմուտքից դեպի հարավ-արևելք [3, 11]: Լոռվա սարահարթը ծածկված է վերին պլիոցենի և անթրոպոցենի անդեզիտաբազալտներով, բազալտներով, ֆլյուվիոգլացիալ և պրոլյուվիալ նստվածքներով [11]: Լոռվա սարահարթն ունի համեմատաբար մեղմ կլիմա: Ամառը զով է, ձմեռը՝ ոչ շատ ցուրտ, իսկ տեղումների քանակը՝ միանգամայն բավարար տափաստանային բուսականության աճման համար: Ամենացուրտ ամսվա (հունվար) միջին ջերմաստիճանը այստեղ -5,1^{0}C է (Տաշիր), իսկ ամենատաք (օգոստոս) ամսվանը՝ 16.8^{0}C (Ստեփանավան): Լոռվա սարահարթում տարեկան թափվում են 680-720 մմ տեղումներ [3]:

Լոռվա սարահարթը ծածկված է գլխավորապես լեռնատափաստանային տիպիկ սևահողերով, բավարար տեղումների արդյունքում զարգանում են կրազուրկ սևահողերը:

Տաշիրի տարածաշրջանում սևահողերի տարածման շրջաններում տեղ–տեղ հանդիպում են ճահճացած տորֆահողեր: Ստեփանավանի և մասամբ Տաշիրի տարածաշրջանների 900-2100 մ բարձրություններին բնորոշ են լեռնաանտառային հողերը, որոնք գենետիկական հատկանիշների հիման վրա բաժանվում են 3 տիպի՝ դարչնագույն, գորշ և հումուսակարբոնատային [2, 3]: Համաձայն Թախթաջյանի բուսա-աշխարհագրական շրջանացման Լոռվա սարահարթը գտնվում է Լոռու ֆլորիստիկական շրջանի հյուսիսային հատվածում, որն ընդգրկվում է Հոլարկտիկական թագավորության Բորեալ ենթաթագավորության Կովկասյան ֆլորիստիկական մարզի կազմում [15, 16]: Այս ֆլորիստիկական շրջանի բնակլիմայական պայմանները խորապես ազդել են ջրաճահճային բուսականության կազմի ձևավորման վրա:

Հաշվի առնելով Լոռվա սարահարթի երկրաբանական պատմությունը և Լոռվա լճերի բուսականության ֆլորիստիկ կազմը, կարելի է ենթադրել, որ Լոռվա ջրային բուսականությունն ունի ռելիկտային բնույթ: Այն առաջացմամբ հավանաբար կապված է սառցե ժամանակաշրջանի հետ [14]:

Նյութ և մեթոդ: Այս աշխատանքի համար նյութ են հանդիսացել 2007-2012 թթ. Ընթացքում Լոռու ֆլորիստիկական շրջանի հյուսիսային հատվածում գտնվող Լոռվա սարահարթի լճերում մեր կողմից կատարված ուսումնասիրությունները՝ մարշրուտային և կիսաստացիոնար մեթոդներով: Օգտագործվել են ՀՀ ԳԱԱ Բուսաբանության ինստիտուտի ,Բույսերի կարգաբանության և աշխարհագրությունե բաժնում (ERE) և Երևանի պետական համալսարանում (ERCB) պահպանվող հերբարիումային հավաքածուների համապատասխան օրինակները: Մեր կողմից օգտագործվել են նաև գրականության տվյալներ, որոնք բերվում են ,Հայաստանի ֆլորանե [22], ,Կովկասի ֆլորանե [7] աշխատություններից, ինչպես նաև Թուրքիայի և Իրանի ֆլորաներից: Ֆլորայի քանակական վերլուծությունը կատարվել է համաձայն Տոլմաչովի [17-19] և Կամելինի [8] առաջարկած մեթոդների:

Արդյունքներ և քննարկում: Հետազոտվող ֆլորան զարգանում է գերխոնավ բնակատեղում, որն ամբողջությամբ իրենից ներկայացնում է ջրային ու ճահճային բուսականության ֆլորոցենոտիպ, և կարող է համարվել պարցիալ ֆլորա [25, 26]: Դրա հետ կապված այն կարող է ենթարկվել ֆլորիստիկական անալիզի և համեմատվել Հայաստանի այլ շրջանների պարցիալ ֆլորաների հետ: Ինչպես կտեսնենք ստորև, ուսումնասիրվող ֆլորան բավականին առանձնահատուկ է և իր կազմով, և տարրերի փոխհարաբերությունով, ինչպես նաև կտրուկ տարբերվում է Հայաստանի այլ պարցիալ ֆլորաներից և առանձին շրջանների ֆլորաներից ամբողջապես [1, 4, 5, 12, 20]:

Այս հոդվածում բերվում են տվյալներ Հյուսիսային Հայաստանի Լոռու մարզի Լոռվա սարահարթի ջրաճահճային ֆլորայի միայն կարգաբանական վերլուծության վերաբերյալ: Հետազոտվող ողջ ֆլորան իր մեջ ներառում է 178 տեսակ, որոնք պատկանում են 34 ընտանիքների 78 ցեղերին [24]: Առաջին հերթին ուշադրություն ենք դարձնում տեսակների բաշխվածությանը կարգաբանական բարձր կատեգորիաներում (աղ. 1), ըստ որի բարձրակարգ սպորավորներից առկա է միայն մեկ տեսակ (*Salvinia natans* L.), որն ընդգրկված է ՀՀ Բույսերի Կարմիր գրքում [9, 10] և 2 տեսակ հատվածավորներից (*Equisetum arvense* L., *E. palustre* L.): Մնացած տեսակները պատկանում են ծածկասերմերին, որում գրեթե հավասար են միաշաքիլները և երկշաքիլները (միաշաքիլների գերակշռությամբ): Հետազոտվող ֆլորայի հետևյալ հատկանիշն էլ առանձնացնում է նրան Հայաստանի այլ պարցիալ ֆլորաներից, որոնցում ճնշող մեծամասնությամբ գերիշխում են երկշաքիլները:

Աղ.1. Լոռվա սարահարթի ջրաճահճային ֆլորայի տաքսոնոմիական խոշոր միավորների

Տաքսոն	Տեսակների քանակը	%
Բարձրակարգ սպորավորներ կամ պտերանմաններ	1	0.56
Հատվածավորներ	2	1.12
Ծածկասերմեր	175	98.3
Միաշաքիլներ	94	52.8
Երկշաքիլներ	81	45.5

Լոռվա սարահարթի ջրաճահճային ֆլորայի սպեկտրալ վերլուծությունը ըստ ընտանիքների (աղ. 2) ցույց է տալիս, որ Երկիր մոլորակի բարեխառն շրջաններում առավել հարուստ ներկայացված առաջատար և կոսմոպոլիտ է համարվում Cyperaceae ընտանիքը [19]:

Սա համարվում է հետազոտվող ֆլորայի առավել բնութագրական հատկանիշը, որը կատարելապես կապված է բնակատեղի յուրահատկությունների հետ: Գործնականում բոլոր այլ բնակատեղերում համապատասխանաբար պարցելային ֆլորաների սպեկտրում գերիշխում է Asteraceae ընտանիքը: Մեր ֆլորայի սպեկտրում երկրորդ տեղը զբաղեցնում է Poaceae ընտանիքը, որը նույնպես կոսմոպոլիտ է, և Երկիր մոլորակի արևադարձային շրջաններում առանձնանում է տեսակների բազմազանության առանձնահատկությամբ: Այս ընտանիքի բարձրակարգ տեղ գրավելը բնութագրական է Մարմարիկ գետի ավազանի [23] և Հայաստանի հյուսիսային շրջանների ֆլորիստիկական մարզերի [21] համար նույնպես, որոնցում այն սովորաբար զբաղեցնում է երկրորդ տեղը Asteraceae ընտանիքից հետո և գերիշխում է Fabaceae ընտանիքի նկատմամբ, որը Հարավային Հայաստանում ներկայացվում է առավել հարուստ և այդ ֆլորայի սպեկտրում գրավում է երկրորդ տեղը:

Աղ.2. Լոռվա սարահարթի ջրաճահճային ֆլորայի ընտանիքների սպեկտրը

№	Ընտանիք	Տեսակների քանակ	%	Ցեղերի քանակ	%
1	Cyperaceae	30	16.8	6	7.7
2	Poaceae	22	12.4	14	17.9
3-4	Potamogetonaceae	11	6.2	1	1.3
3-4	Rosaceae	11	6.2	5	6.4
5	Juncaceae	10	5.6	2	2.6
6	Brassicaceae	9	5.1	5	6.4
7	Polygonaceae	8	4.5	2	2.6
8-9	Lamiaceae	7	3.9	5	6.4
8-9	Orchidaceae	7	3.9	3	3.8
10		6	3.4	3	3.8
	10 ընտանիքների արդյունք	121	67.9	46	58.9
	Ընտանիքներ, որոնք ներառում են 2-5 տեսակներ	48	26.9	23	29.6
	Ընտանիքներ, որոնք ներառում են 1տեսակ	9	5.1	9	11.5
		178	100	78	100

Երրորդ և չորրորդ տեղերը տեսակների հավասար թվաքանակով զբաղեցնում են Potamogetonaceae և Rosaceae ընտանիքները: Նրանցից առաջինը կոսմոպոլիտ ընտանիք է, որի բոլոր ներկայացուցիչները քաղցրահամ ջրամբարների բնակիչներ են, և զարմանալի չէ այս ընտանիքի գրեթե բոլոր հայկական ներկայացուցիչների հանդիպումը Լոռվա սարահարթի ջրային ապրելավայրերում: Ի տարբերություն Մարմարիկ գետի ավազանի և Սևանի ավազանի, որոնցից առաջինում Potamogetonaceae ընտանիքից առկա է ընդամենը 3 տեսակ [23], իսկ երկրորդում՝ 7 տեսակ [22], Լոռվա սարահարթի ջրաճահճային ֆլորայի կազմում հաշվում ենք 11 տեսակ: Իսկ Rosaceae ընտանիքի առավել բարձրադիր տեղ գրավելը ըստ Թախթաջյանի բնութագրական է ողջ Կովկասյան պրովինցիայի համար [16]: Այս հոլարկտիկական ընտանիքը [19] գրավում է նույնատիպ դիրք բազմաթիվ Բորեալ ֆլորաների սպեկտրում: Սովորաբար Հայաստանում այս ընտանիքը գրավում է բարձրադիր տեղ անտառային և հետանտառային ֆլորաների սպեկտրում [12, 20], որը պայմանավորված է ծառաթփային ներկայացուցիչների մեծ բազմազանությամբ: Սակայն մեր պարագայում ընտանիքի բոլոր ներկայացուցիչները խոտաբույսեր են՝ 5 ցեղերից (*Agrimonia, Alchemilla, Comarum, Filipendula, Potentilla*), և ընդգծում են հետազոտվող ֆլորայի ուրույն յուրահատկությունը [6]: Այս ընտանիքին են պատկանում միայն Լոռու ֆլորիստիկական շրջանից Բարսեղյանի կողմից հավաքված *Comarum palustre* L. տեսակը, որի հանդիպման հավանականությունը նշվում է նաև “Հայաստանի Ֆլորան” աշխատության համապատասխան հատորում (հատոր 3): Հինգերորդ տեղը գրավում է կոսմոպոլիտ Juncaceae ընտանիքը, որը առավել հարմարված է Երկիր մոլորակի բարեխառն ցուրտ շրջաններին, ներառյալ արևադարձային բարձրալեռները: Juncaceae ընտանիքի բազմաթիվ ներկայացուցիչներ նույնպես հարմարված են չափից ավելի խոնավ բնակատեղերին: Վեցերորդ տեղում Brassicaceae ընտանիքն է, որի հիմնական տեսակային բազմազանությունը հարմարված են Հին Միջերկրածովյան ավազանին: Մեր ֆլորայում ներկայացվում է 5 ցեղերով (սա բարձր ցուցանիշ է, որի շնորհիվ այս ընտանիքը կիսում է 3-4 տեղը Lamiaceae ընտանիքի հետ), սակայն ոչ շատ տեսակներով: Յոթերորդ տեղը զբաղեցնում է կոսմոպոլիտ Polygonaceae ընտանիքը, սակայն տեսակային առավել բազմազանությունը կենտրոնացված է Հյուսիսային կիսագնդի բարեխառն շրջաններում,

որոնք նախընտրում են հումիդային և հիդրոֆիտային բնակատեղեր: Ութերորդ և իններորդ տեղերը տեսակների հավասար թվաքանակով զբավում են Lamiaceae և Orchidaceae ընտանիքները: Lamiaceae ընտանիքում առավելապես միջերկրածովյան կամ հնագույն-միջերկրածովյան տարրեր են, որի ներկայացուցիչների մեծամասնությունը հարմարված են արիդային բնակատեղերին: Հետազոտվող ֆլորայի շրթնածաղկավորների տեսակները հիմնականում բորեալ տարրեր են: Orchidaceae ընտանիքը առանձնանում է իր բազմազանությամբ, հիմնականում Հին և Նոր Երկրի տրոպիկական շրջաններում: Բարեխառն շրջաններում առավելապես ներկայացվում է տեսակների լայն արեալներով: Ելնելով մեր ֆլորայի բնույթից, սպեկտրում այս ընտանիքի բարձր դիրքը արտասովոր չէ, չնայաց Հայաստանի այլ պարցիալ ֆլորաներում այն երբեք չի ընդգրկվում խոշոր ընտանիքների կազմի մեջ: Առաջատար ընտանիքների տասնյակը փակում է բազմառե-գիոնալ Asteraceae ընտանիքը, որը չնայած իր լայն տարածմանը և այն փաստին, որ բազմաթիվ ֆլորիստիկական շրջաններում զբավում է 1-5-րդ տեղերը, Լոռվա սարահարթի ջրաճահճային բուսականության ֆլորայի կազմում բավականին հետին տեղ է զբաղեցնում: Սա ևս կապված է մեր ֆլորայի բնակատեղերի առանձնահատկության հետ: Այնուհետև ցանկում ներառված են ընտա-նիքներ, որոնք ընդգրկում են 2-5 տեսակներ (48 տեսակ՝ 26.9 %), և 9 ընտանիքներ՝ մեկ ցեղի մեկ տեսակով (11.5 %): Լոռվա սարահարթի ջրաճահճային ֆլորայի առանձնահատուկ գծերը արտա-հայտվում են ցեղերի սպեկտրում (աղ. 3): 30 ցեղեր պարունակում են 2-3 տեսակներ (40 %), 39 ցեղեր՝ մեկական տեսակ (22 %): Արդյունքում խոշոր ցեղերին բաժին է ընկնում տեսակների 38 %-ը, որոնց ներկայացուցիչները նախընտրում են հիդրո- և հիգրոֆիլ բնակատեղեր: Բացառություն է կազմում *Galium* ցեղը, որի տեսակների համար առավել սովորական է հումիդային բնակատեղերը: Հետա-զոտվող ֆլորայի ցեղերի սպեկտրում առաջին տեղը զբաղեցնում է *Carex*-ը՝ 22 տեսակներով, որը առաջատար է հյուսիսային Հայաստանի բոլոր շրջանների համար [21]: Մեր ցանկում այն ընդգրկում է 2 տեսակներ, որոնք առկա են միայն Լոռու ֆլորիստիկական մարզում (*Carex appropinquata* Schum., *C. bohemica* Schreb.): Այս ցեղում գերակշռում է պալեարկտիկական բուսաշխարհագրական տիպը: Ուսումնասիրվող տարածքի ջրաճահճային ֆլորայի ցեղերի սպեկտրում երկրորդ տեղը զբաղեցնում է *Potamogeton* ցեղը 11 տեսակներով, որում գերակշռող է հոլարկտիկական բուսաշխարհագրական տիպը:

Աղ.3. Լոռվա սարահարթի ջրաճահճային ֆլորայի ցեղերի սպեկտրը

№	Ցեղ	Տեսակների քանակ	%
1	*Carex*	22	12.4
2	*Potamogeton*	11	6.2
3	*Juncus*	8	4.5
4	*Polygonum*	7	3.9
5-9	*Lemna*	4	2.2
5-9	*Orchis*	4	2.2
5-9	*Ranunculus*	4	2.2
5-9	*Galium*	4	2.2
5-9	*Sparganium*	4	2.2
	Ցեղեր, որոնք ներառում են 2-3 տեսակ	71	40
	Ցեղեր, որոնք ներառում են 1 տեսակ	39	22
	Ընդամենը	178	100

Երրորդ և չորրորդ տեղերը զբաղեցնում են *Juncus* և *Polygonum* ցեղերը: *Juncus* ցեղը ընդգրկում է տեսակների հավասար քանակով պալեարկտիկական և բազմառեգիոնալ բուսաշխարհագրական տիպեր և հոլարկտիկական բուսաշխարհագրական տիպի 2 տեսակ: Polygonum ցեղը ներառում է հոլարկտիկական և պալեարկտիկական բուսաշխարհագրական տիպերին պատկանող տեսակներ, և կովկասյան բուսաշխարհագրական տիպի մեկ տեսակ: *Lemna* ցեղը իր բազմառեգիոնալ բուսաշխարհագրական տիպին պատկանող տարրերով և *Orchis* ցեղը իր եվրո-միջերկրածովյան ու պալեարկտիկական տարրերով զբաղեցնում են հինգերորդ և վեցերորդ տեղերը ցեղերի սպեկտրում՝ տեսակների հավասար քանակով: Հաջորդ երեք ցեղերը նույնպես ունեն տեսակների այդ նույն թվաքանակը: Ընդ որում *Ranunculus* ցեղը, որը զբաղեցնում է յոթերորդ տեղը՝ չնայած տեսակների քիչ թվաքանակով, ներառում է պալեարկտիկական, եվրոմիջերկրածովյան և բազմառեգիոնալ բուսաշխարհագրական տիպերը: Իսկ ութերորդ և իններորդ տեղերում գտնվում են համապատասխանաբար *Galium* և *Sparganium* ցեղերը,

որոնցից վերջինս ներկայացվում է միատար բուսաշխարհագրական տիպով՝ հոլարկտիկական, իսկ *Galium* ցեղը բուսաշխարհագրական այդ տիպից բացի ընդգրկում է պալեարկտիկական մեկ տեսակ: Կարելի է եզրակացնել, որ հետազոտվող ֆլորան իր կարգաբանական կառուցվածքով կտրուկ առանձնանում է Հայաստանի այլ պարցիալ ֆլորաներից, որին կից Բորեալ ենթաթագավորության պարցիալ ֆլորաների համադրումը հաստատում է նրա ռելիկտային բնույթը: Հաշվի առնելով պարցիալ ֆլորայի մեծ ազդեցության տվյալները Լոռվա ֆլորիստիկական շրջանի ողջ ֆլորայի վրա, նրա կառուցվածքը հաստատում է, որ այն պատկանում է Կովկասի ֆլորիստիկական մարզի Բորեալ ենթաթագավորության Հոլարկտիկական թագավորությանը [13,16,21]: Լոռվա սարահարթի ջրաճահճային բուսականության ֆլորիստիկական կազմում գերակշռում են բուսաաշխարհագրական հյուսիսային (բորեալ) տարրերը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Բալոյան Ս.Ա.* Հայաստանի ալպիական բուսական ծածկույթը, Երևան, 2005
2. Հայկական ՍՍՀ ֆիզիկական աշխարհագրություն, Երևան, 1971
3. *Մանասյան Մ.Գ., Գրիգորյան Ա.Թ., Եղյան Գ.Բ.* «Լոռու Մարզ», Երևան, 207 էջ, 2003
4. *Алексанян А.С.* Систематическая структура флоры аридных редколесий Южной Армении. Тахтаджяния. вып.1, Ереван, 163-168, 2011б.
5. *Асатрян А.Т.* Флора и растительность вулканического массива Араилер. Автореф. дисс. канд. биол. наук. Ереван, 25с, 1999.
6. *Барсегян А.М.* Водно-болотная флора Армении и ее анализ. Фл., растит. и раст. рес. Армянской ССР, *8*, 53-120, 1981.
7. *Гроссгейм А.А.* Флора Кавказа. Баку, М.-Л., 1-7, 1939-1967.
8. *Камелин Р.В.* Флорогенетический анализ естественной флоры горной Средней Азии. Л., 355 с, 1973.
9. Красная книга Армянской ССР: редкие и находящиеся под угрозой исчезновения виды растений (Сост. Э.Ц. Габриэлян и др.). Изд. “Айастан”, 270с, 1988.
10. Красная книга растений РА. Высшие растения и грибы. Второе издание. Ереван, 2010.
11. *Мкртчян С.С.* “Геология Армянской ССР”, Геоморфология, *1*, Ереван, 586 с, 1962.
12. *Сагателян А.А.* Флора и растительность Мегринского района Армянской ССР. Автореф. дисс. канд. биол. наук. Ереван, 24 с, 1983.
13. *Таманян К.Г., Файвуш Г.М.* К вопросу о флористическом районировании Армении, Флора, раст. и растит. ресурсы Армении. *17,* 73-78, 2010.
14. *Тахтаджян А.Л.* К познанию водной растительности Лорийской нагорной равнины . Тр. Биол. ин-та Арм. Фил. АН СССР, *1*, 19-37, 1939.
15. *Тахтаджян А.Л.* Флора Армении, 1. Ереван, 290 с, 1954.
16. *Тахтаджян А.Л.* Флористические области земли. Л. 247 с, 1978.
17. *Толмачев А.И.* К методике сравнительно-флористических исследований, Журн. Русск. бот. общ., *16*, 1, с. 111-124, 1931.
18. *Толмачев А.И.* О количественной характеристике флор и флористических областей, М.-Л., 37 с, 1941.
19. *Толмачев А.И.* Введение в географию растений, Л., 244 с, 1974.
20. *Файвуш Г.М.* Флора и растительность Ширака (Армянской ССР): Автореф. дисс. канд. биол. Наук. Ереван, 24с, 1983.
21. *Файвуш Г.М.* Анализ спектров семейств и родов флористических районов Армении. Бот. журн., *72,* 12, 1595-1604, 1987.
22. Флора Армении, Ереван, 1-11, 1954-2010.
23. *Ханджян Н.С.* Конспект флоры бассейна реки Мармарик (Армянская ССР), Фл., растит., раст. ресурсы Армении, вып. 9, с. 62 - 81, 1985.
24. *Ханджян Н.С., Туманян А.А.* Конспект водно-болотной флоры озер Лорийского плоскогорья (Армения). Тахтаджяния, Ереван, с. 178-180, 2011.
25. *Юрцев Б.А.* Очерк системы основных понятий флористики, в кн. Теоретические и методические проблемы сравнительной флористики, Л., с. 242-266, 1987а.
26. *Юрцев Б.А.* Флора как базовое понятие флористики: содержание, понятия, подходы к изучению. Сб. Теорет. и методические. проблемы сравнит. флористики. Л., с. 13-28, 1987б.

Ստացվել է 03.05.2013

Հայաստանի Գիտությունների Ազգային Ակադեմիա
Национальная Академия Наук Армении
National Academy of Sciences of Armenia

Հայաստանի Կենսաբանական Հանդես
Биологический Журнал Армении
Biological Journal of Armenia

•Փորձարարական և տեսական հոդվածներ •Экспериментальные и теоретические статьи•
•Experimental and theoretical articles•

Հայաստանի կենսաբ. հանդես, 3(65), 2013

ԿՈՄՊՈՍՏԻՑ ՄԵԿՈՒՍԱՑՎԱԾ ԲԱԿՏԵՐԻՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ *AGARICUS BISPORUS* ԱՃԻ ՎՐԱ ԼԱԲՈՐԱՏՈՐ ԵՎ ՓՈՐՁԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Ա.Գ. ՀԱԿՈԲՅԱՆ, Հ.Գ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀՀԳԱԱ "Հայկենսատեխնոլոգիա" ԳԱԿ
hhov@sci.am

Ուսումնասիրվել է սնկի կոմպոստից անջատված և միջատապաթոգեն բակտերիաների ազդեցությունը *Agaricus bisporus*-ի աճի և որակի վրա: Ապացուցվել է, որ կոմպոստից անջատված բակտերիաների ներմուծումը ծածկող շերտ սնկերի աճի ընթացքում բերում է բերքատվության զգալի բարձրացման: Մյուս կողմից *Bacillus thuringiensis* տեսակին պատկանող միջատապաթոգեն բակտերիաների սփռումը կոմպոստի մակերեսին կտրուկ նվազեցնում է պտղամարմինների վնասվածությունը:

Agaricus bisporus – կոմպոստային միկրոօրգանիզմներ – սիներգիզմ

Изучено влияние выделенных из компоста и энтомопатогенных бактерий на рост и качество гриба *Agaricus bisporus*. Доказано, что внесение бактерий, выделенных из компоста в процессе роста грибов в покровный слой, приводит к повышению их урожайности. Но с другой стороны, опрыскивание поверхности компоста энтомопатогенными бактериями вида *Bacillus thuringiensis* резко снижает повреждаемость плодовых тел.

Agaricus bisporus – компостныя микроорганизмы – синергизм

The impact on growth and quality of *Agaricus bisporus* of isolated from compost and entomopathogenic bacteria is studied. The introduction of isolated from compost bacteria into the coating cover enhances the mushrum harvest. On the other hand, entomopathogen bacteria belonging to *Bacillus thuringiensis* species spreading on compost surface decrases of damages of frut bodies.

Agaricus bisporus – compostal microorganisms – synergism

Կոմպոստացումն ինքնաբերաբար ընթացող մանրէաբանական ֆերմենտացիայի ձև է: Միկրոօրգանիզմները (բակտերիաներ, ցածրակարգ սնկեր), որոնք մասնակցում են այդ պրոցեսին, լայնորեն տարածված են բնության մեջ, բավականին մեծ քանակությամբ պարունակվում են նաև կոմպոստի բաղադրիչներում՝ գոմաղբում և բուսական մնացորդներում: Բարենպաստ պայմաններում այդ միկրոօրգանիզմները արագորեն զարգանում են [3, 4]: Կոմպոստի միկրոօրգանիզմների ուսումնասիրությունը ցույց է տվել, որ դրանց 87%-ը պատկանում են *Bacillus* ցեղին, ընդունակ են զարգանալ 65^{0}C-ի պայմաններում [7]: Դրանցից առավել հաճախ հանդիպում է *B. stearothermophilus* տեսակը [12]: Կոմպոստացումը ուղղեկցվում է ջերմաստիճանի բարձրացմամբ (50-60^{0}C), որը բերում է մեզոֆիլ օրգանիզմների քանակի կտրուկ անկման և ջերմասեր միկրոօրգանիզմների աճի խթանման:

Կոմպոստավորման վերջնական նպատակն է ստեղծել սելեկտիվ սուբստրատ, նպաստավոր սնկի միցելիումի և օգտակար միկրոօրգանիզմների զարգացման համար [4,14]: Միկրոօրգանիզմները կարևոր դեր են խաղում ինչպես կոմպոստացման գործընթացում, այնպես էլ միցելիումի կուլտիվացման և *Agaricus bisporus*-ի պտղամարմնի

գոյացման ժամանակ: Ցույց է տրվել, որ *A. bisporus*-ը ստերիլ պայմաններում ընդհանրապես չի պտղաբերում: Պտղամարմնի ձևավորման հարցում մեծ դեր են խաղում միկրոօրգանիզմների կողմից կատարվող պրոցեսները, որոնք ընթանում են կոմպոստը ծածկող հողային շերտում: *A.bisporus*-ի պտղաբերման պրոցեսում հողային միկրոօրգանիզմների խթանող ազդեցություններից կարելի է նշել հետևյալները՝ ա) *A. bisporus*-ի աճը ճնշվում է միկրոօրգանիզմների կողմից, որի արդյունքում ձևավորվում է պտղամարմինը [13], բ) միցելիումի աճը և պտղաբերումը խթանվում է միկրոօրգանիզմների կողմից [9], գ) միկրոօրգանիզմները առաջացնում են նյութեր, որոնք խթանում են պտղաբերումը [10], դ) միկրոօրգանիզմները կլանում են *A. bisporus*-ի կողմից անջատված ավտոինհիբիտորները [10,15], իսկ բակտերիաները այդ դեպքում նպաստում են երկաթի իոնների ազատմանը, որն անհրաժեշտ է պտղաբերման համար [11]:

Աշխատանքի նպատակն է եղել ուսումնասիրել կոմպոստի նմուշներից մեր կողմից անջատված սպորավոր բակտերիաների որոշ տեսակների ազդեցությունը *A. bisporus*-ի վրա լաբորատոր և փորձնական արտադրության պայմաններում:

Նյութ և մեթոդ: *Bacillus sphaericus* AH9, *B. sphaericus* AH11, *B. megaterium* AH102, *B. stearothermophilus* AH122 անջատվել է կոմպոստից. *B. sp.* WS1 – անջատվել է շամպինյոնի ցորենային վարակված ցանքսանյութից: *B. thuringiensis subsp. israilensis INMIA2477, B. thuringiensis subsp. Israilensis INMIA1125, B. sphaericus ИНМИА2633* և *Pseudomonas sp.* ոչ սպորավոր կուլտուրա ստացվել են ՀՀ ԳԱԱ ,Հայկենսատեխնոլոգիաե ԳԱԿ-ի Մանրէների ավանդադրման կենտրոնից (ՄԱԿ): Ուտելի սնկերի *A. bisporus 20* և *A. bisporus 3712* շտամները (և ՄԱԿ-ից): Պինդ քաղցու` քաղցու ածիկ (շաքարայնությունը 7^0) – 1000 մլ, դիֆկո ագար – 20,0 գ, pH 6,0-6,5. Տրիպտոզ ագար Ferak Berlin.

Ցանքսանյութի պատրաստման համար ցորենի հատիկները լվացվում է հոսող ջրի տակ, 10 կգ ցորենին ավելացվում է 15 լ ջուր, եռացվում 15-20 րոպե թույլ կրակի վրա: Եփված ցորենը քամվում և մոտ 20 րոպե չորացվում է օդափոխվող սենյակում, այնուհետև pH-ի կարգավորման նպատակով ավելացվում է 120 գ կիր, 30 գ կավիճ և լավ խառնվում: Հետո ցորենը (մոտ 350-400 գ) 2/3 ծավալով լցվում է 1լ-ոց ապակյա տարաների մեջ, փակվում բամբակե խցանով և ստերիլիզացվում է ավտոկլավում 121^0C տակ 1,5 ժ: Սուբստրատը ավտոկլավից հանելուց հետո սառեցվում է մինչև $24-26^0C$ ու ինոկուլյացվում սրվակում թեք ագարի վրա աճեցված միցելիումով: Հետագա ինկուբացումը կատարվում է թերմոստատում $24-26^0C$-ում 3-4 շաբաթ: Ցորենի հատիկների սոսնձումը կասեցնելու և միցելիումի աճը խթանելու նպատակով տարաների պարունակությունը շաբաթը մեկ լավ խառնվում է: Աճած միցելիումը պահվում է սառնարանում $2-4^0C$-ում:

Բազիդոմիցետների աճեցումը փորձաարտադրական պայմաններում տարվել է հետևյալ կերպ` կոմպոստի և ցորենի հատիկի վրա աճեցված բազիդիոմիցետների միցելիումի համասեռ խառնուրդը լցվել է 10 կգ պարկերի մեջ և տեղադրվել սնկանոցում 24´C-ում [2, 4]:

Կոմպոստը պատրաստվել է ցորենի ծղոտից և ոչխարի գոմաղբից 1:1 հարաբերությամբ, հետևյալ հավելումներով (կգ/տ)` գիպս – 62, գաջ – 62, սելիտրա – 37, սուպերֆոսֆատ – 25, կարբամիդ – 1, մինչև 80% խոնավությամբ: Ծղոտին թրջումից 5 օր անց խառնվում է գոմաղբը, հավելումները և ձևավորվում է բուրտը (1.8 մ x 1.8 մ x 1.8 մ), որը պարբերաբար խառնվում է: Մոտ մեկ ամիս հետո հասունացված կոմպոստը պաստերիզացվում է 60´C-ում 36 ժ ընթացքում, այնուհետև լցվում է պոլիէթիլենային պարկերի մեջ 30-40 սմ հաստությամբ:

Արդյունքներ և քննարկում: Ստուգվել է կոմպոստից անջատված սպորավոր բակտերիաների աճի ազդեցությունը սնկերի վրա Պետրիի թասիկներում: Ագարիզացված սննդամիջավայրի կենտրոնում տեղադրվել է սնկի միցելիումը ագարից կտրված խորանարդիկի ձևով, 7 օր աճից հետո թասիկների պարագծով հավասար հեռավորության վրա տեղադրվել են թեստ բակտերիաների ագարային գազոններից կտրված խորանարդիկները և համատեղ աճեցվել 26´C պայմաններում ևս 7 օր: Սնկերի և բակտերիաների փոխազդեցության պատկերը ներկայացված է նկ. 1-ում:

Ինչպես երևում է նկ.1-ից, կոմպոստից անջատված AH9(5), AH11(7), AH122(8) կուլտուրաները, ինչպես նաև *B.sphaericus* 2633(1), բացառությամբ AH-102(6), սնկերի հետ գտնվում են համակեցության վիճակում, չցուցաբերելով անտագոնիզմ: *B. megaterium* տեսակին պատկանող AH102 շտամը (6), *B. thuringiensis* 1125(2), *B. thuringiensis* 2477(3), և *Pseudomonas* sp. (4) շտամները ճնշում են ստուգված երկու սնկային կուլտուրաների աճը: Սնկերի հանդեպ առավել ցայտուն անտագոնիզմ է դրսևորում *Bacillus* sp. WS1(9) շտամը, որի շուրջ աճի ճնշման գոտու առկայությունը վկայում է նրա կողմից հակասնկային միացությունների ակտիվ սինթեզի մասին:



Նկ. 1. Կոմպոստից անջատված սպորավոր բակտերիաների փոխազդեցությունը *A. bispoprus*-ի *3714* և *20* շտամների հետ ագարային միջավայրում:
1 – B.sphaericus 2633, 2 – B. thuringiensis 1125, 3 – B. thuringiensis 2477,
4 – Pseudomonas sp., 5 B.sphaericus – AH9, 6 – B.megaterium – AH-102,
7 – B.sphaericus -AH11, 8 – B. stearothermophilus – AH122, 9 – Bacillus sp. WS1 շտամները:

Բարձրակարգ ուտելի սնկերի կենսունակությունը մեծապես կախված է բիոտիկ գործոններից, որոնք սուբստրատում առաջանում են այնտեղ առկա միկրոօրգանիզմների կենսագործունեության արդյունքում [8]: Սնկերի աճի և որակի վրա կարող են ազդել նաև միջատները (*Sciaridae, Phoridae, Cecidomyiidae*), որոնք հանդիսանում են այնպիսի հիվանդությունների փոխադրիչներ, ինչպիսիք են չոր և թաց փտումը, սարդոստայնակերպ բորբոսը, տրիխոդերման: Դրանցից մի քանիսը, օրինակ, սցիարիդների թրթուրները, նեմատոդները, վնասելով պրիմորձիները կանխարգելում են պտղամարմինների առաջացումը [1, 5]:

Քանի որ սնկերը աճեցվում են 24-26^{0}C-ում, նախքան բակտերիաների ազդեցության որոշումը նրանց աճի և պտղաբերության վրա ուսումնասիրվել է փորձարկման համար նախատեսված բակտերիաների աճի պոտենցիալը նշված ջերմաստիճանի տակ: Թեք ագարի վրա աճած կուլտուրաները լվացվել են ծորակի ստերիլ ջրով և որոշվել է նրանցում բջիջների տիտրը մանրադիտակի տակ՝ ըստ Գորյաևի (նկ. 2):



Նկ. 2. Բակտերիալ բջիջների քանակը 1 մլ կախույթում 26^{0}C-ում աճի տակ
1 – B.sphaericus 2633, *2 – B. thuringiensis 1125, 3 – B. thuringiensis 2477,*
4 – B.sphaericus – AH9, 5 – B.megaterium –AH-102, 6 – B.sphaericus –AH11,
7 – B.stearothermophilus –AH122, 8 – Bacillus sp. WS1

Ինչպես երևում է նկ.1-ից, կոմպոստից անջատված *B.sphaericus AH9* և *B.sphaericus* AH11 կուլտուրաները նշված ջերմաստիճանի պայմաններում ցուցաբերում են առավել աճի ընդունակություն համեմատած մյուս կուլտուրաների:

Ուսումնասիրվել է կոմպոստից անջատված բակտերիաների ազդեցությունը սնկերի աճի վրա փորձաարտադրական պայմաններում: Որպես ստուգիչ օգտագործվել են հայտնի միջատասպան *B.sphaericus 2633*, *B.thuringiensis 1125*, *B.thuringiensis* 2477 կուլտուրաները: Բակտերիալ սուսպենզիաները 9 մլ. յուրաքանչյուրը պուլվելիզատորի միջոցով սփռվել է պարկի մակերեսին 1-ին և 14-րդ օրը 60-70 % միցելիումի աճի առկայության դեպքում, երբ միջատները գտնվում են զարգացման թրթուրային փուլում: Այնուհետև երկու օր անց պարկերը ծածկվել են հողի բարակ շերտով: Բակտերիաների երրորդ ներմուծումը կատարվել է ինկուբացիայի 21-րդ օրը, երբ սնկային միցելիումը ներաճած է լինում հողի ծածկող շերտում: Փորձնական պարկերի սնկերի բերքատվությունը համեմատվել է ստուգիչ պարկի հետ (նկ. 3):



Նկ. 3. *Agaricus bisporus 3712 և 20* շտամների միջին բերքատվությունը, կգ/մ^2
1-B.sphaericus 2633, 2 - B. thuringiensis 1125, 3 - B. thuringiensis 2477,
4 B.sphaericus - AH9, 5 B.megaterium AH-102, 6- B. sphaericus -AH11,
7-B.stearothermophilus AH122, 8-Bacillus sp. WS1, 9- Ստուգիչ

Ինչպես երևում է ներկայացված հիստոգրամից, սնկերի աճի վրա դրական ազդեցություն են գործել կոմպոստից անջատված *B. sphaericus* – AH9, *B. sphaericus* – AH11 և *B. stearothermophilus* – AH122 կուլտուրաները, բարձրացնելով բերքատվությունը 10-20 %-ով: Մյուս կուլտուրաները, բացի *B. sp.* WS1-ից, ընդհանուր առմամբ չեն ազդել սնկային միցելիումի աճի և պտղամարմինների ձևավորման վրա: Պարկերը, որոնցում միցելիումը վարակված է *B. sp.* WS1-կուլտուրայի սուսպենզիայով, ձևավորել են մեծ քանակությամբ պրիմորձիներ, որոնք հետագայում չեն հասունացել:

Ի տարբերություն բերքատվության առողջ պտղամարմինների առաջացման վրա դրական ազդեցությամբ են օժտված հայտնի միջատասպան *B. thuringiensis* կուլտուրաները, որոնք իջեցրել են վնասվածությունը 3-4 անգամ: Համաձայն մեր դիտարկումներին, պարկերը, որոնք վարակված են եղել *B. thuringiensis* – 2477, *B. thuringiensis* – 1125 և *B. sphaericus* – 2633 բակտերիաների սուսպենզիաներով, թրթուրներ և մլակներ չեն զարգացել: Այն դեպքում երբ կոմպոստից անջատված *B. sphaericus* շտամները համեմատաբար թույլ են ազդում միջատների զարգացման վրա (նկ. 4):



Նկ. 4. Պտղամարմինների վնասվածությունը, %
1-*B.sphaericus* 2633, 2-*B. thuringiensis* 1125, 3-*B. thuringiensis* 2477,
4-*B.sphaericus* AH9, 5-*B.megaterium* AH102, 6-*B. sphaericus* AH11,
7-*B.stearothermophilus* AH122, 8-*Bacillus sp.* WS1, 9-Ստուգիչ

Անհրաժեշտ է նշել, որ միջատասպան բակտերիաները հանդես չեն գալիս որպես անտագոնիստներ բարձրակարգ սնկերի նկատմամբ և չեն ազդում պտղամարմինների որակի և արտաքին տեսքի վրա: Պարզվեց, որ բակտերիաների ներմուծումը կոմպոստ չի ուղեկցվում ջերմաստիճանի բարձրացմամբ, ինչը վկայում է ցածր մետաբոլիկ ակտիվության մասին: Նկատված երևույթը կարելի է բացատրել կոմպոստացման ընթացքում բակտերիաներին հասանելի սննդանյութերի սպառմամբ: Հայտնաբերված դրական ազդեցությունը սնկերի աճի և որակի վրա հավանաբար արդյունք է երկրորդային մետաբոլիտների սինթեզի, ինչպիսիք են հակաօքսիդանտները և միջատասպան բյուրեղները:

Այսպիսով կարելի է եզրակացնել, որ բարձրակարգ սնկերի աճեցման ժամանակ նպատակահարմար է *B. thuringiensis* և մեր կողմից կոմպոստից անջատված *B. Sphaericus* բակտերիաները համատեղ օգտագործումը՝ առաջինները միջատների դեմ, իսկ վերջինները՝ որպես սնկի աճի խթանիչներ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Мокроусова Е.П., Селиванова О.К., Холодов Г.А.* Фауна членистоногих на шампиньонницах Ленинградской области. Школа грибоводства. *1*, 31, с.10, 2005.
2. *Морозов А. И.* Промышленное производство шампиньонов. М., ООО, Изд-во АСТ, Донецк, Сталкер, 173с, 2004.
3. *Ранчева Ц.* Производство на гъба печурки. София, Земиздат. б., 200с., 1965,
4. *Ранчева Ц.* Интенсивное производство шампиньонов.М.: Агропромиздат, с. 22, 23, 27-29, 107-109. 1990.
5. *Сафрай А.И.* Средства защиты культуры шампиньона от вредителей. Школа грибоводства. *41*, с. 8, 2006.
6. *Смирнов Ф.Г.* Сухая гниль или вертициллез. Школа грибоводства. *1,* 31, с.21, 2005.
7. *Bitton, Gabriel,* Wastewater Microbiology. p. 212. Wiley-Liss, Inc. 605 Third Avenue, New York, NY 10518-0012, 1994.
8. *Chang Shu-Ting, Miles P.G.* Mushrooms: Cultivation, Nutritional Value, Medicinal Effect, and Environmental Impact. CRC Pressp. 159-185, 2004.
9. *Curto S., Favelli F.* Stimulative effect of certain microorganisms (bacteria, yeasts, microalgae) upon fruitbody formation of *Agaricus bisporus* (Lange) Sing. In: Mushroom Science. VIII, London, p.67-74, 1972.
10. *Eger G.* Experiments and comment on the action of bacteria on sporophore initiation in *Agaricus bisporus*. In: Mushroom Science ,VIII, London, p.719-725, 1972.
11. *Hayes W.A.* Nitritional factors in relation to mushroom production. In: Mushroom Science. VIII, London, p. 663-674, 1972.
12. *Heltay I.* Report of the situation and problems of Hungarian mushroom-research and experimental work. Mushrom Sci.3, p.120-124 1956.
13. *Peerally A.* Sporophore initiation in *Agaricus bisporus* and *Agaricus bitorquis* in relation to bacteria and activated charcoal. In: Mushroom Science X. Bordeaux, 1, p. 611-639, 1979.
14. *Wood D.A. Fermor J.R.* Nutrition of *Agaricus bisporus* in compost In: Mushroom Science XI. Sydney, 2, 63-71, 1981.
15. *Wood D.A.* Primordium formation in axenic cultures of *Agaricus bisporus* (Lange) Sing.J. Gen. Microbiol., 2, 313-323,1976.

Ստացվել է 17.12.2012

Հայաստանի Գիտությունների Ազգային Ակադեմիա
Национальная Академия Наук Армении
National Academy of Sciences of Armenia

Հայաստանի Կենսաբանական Հանդես
Биологический Журнал Армении
Biological Journal of Armenia

• *Փորձարարական և տեսական հոդվածներ* •*Экспериментальные и теоретические статьи*•
•*Experimental and theoretical articles*•

Հայաստանի կենսաբ. հանդես, 3(65), 2013

ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՅՌԱՅԻՆ ՄՈՂԵՍՆԵՐԻ ՄԱԿԱԲՈՒԾԱՅԻՆ ՎԱՐԱԿՎԱԾՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Թ.Կ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Ռ.Կ. ՊԵՏՐՈՍՅԱՆ, Ֆ.Դ. ԴԱՆԻԵԼՅԱՆ, Մ.Ս. ԱՌԱՔԵԼՅԱՆ

Երևանի պետական համալսարան, կենդանաբանության ամբիոն
temharutunyan@gmail.com

Համեմատվել են Երևանի Հրազդանի կիրճի *Darevskia nairensis* և Գեղարդի տարածքի *D. raddei*-ի ժայռային մողեսների պոպուլյացիաները: Նկարագրվել է արյան մակաբույծերով և էկտոմակաբույծներով վարակվածությունը՝ ելնելով սեզոնային և տարածքային առանձնահատկություններից:

Ժայռային մողեսներ – արյան մակաբույծներ – էկտոմակաբույծներ

Сравнивались популяции скальных ящериц *Darevskia nairensis* из территории Еревана (ущелье Раздан) и *D. raddei* из территории Гегарда. Описана зараженность экто- и кровепаразитами в зависимости от сезонных и региональных особенностей.

Скальные ящерицы – кровепаразиты – эктопаразиты

Two populations of *Darevskia nairensis* from Yerevan (Hrazdan canyon) and of *D. raddei* from Geghard are compared. The infection of blood parasites and by ectoparasites was described depending on seasonal and territorial characteristics.

Rock lizards – blood parasites – ectoparasites

Հայաստանում բնակվող *Darevskia* ցեղի ժայռային մողեսները հանդիսանում են հետաքրքիր և ուսումնասիրությունների համար խիստ բազմազան հատկություններով օժտված օբյեկտներ [13]: Մեր երկրի տարածքում այս մողեսները ներկայացված են 4 կուսածին (*D. armeniaca, D. unisexualis, D. rostombekovi, D. dahli*) և 4 երկսեռ (*D. raddei, D. portschinskii, D. valentini, D. nairensis*) տեսակներով, որոնք լայնորեն տարածված են երկրի ողջ տարածքում, զբաղեցնում են ամենատարբեր կենսախորշեր, առաջացնում սիմպատրիկ պոպուլյացիաներ և տարբեր հիբրիդներ, որը մեզ տալիս է այս կենդանիների ուսումնասիրման անսահմանափակ հնարավորություն:

Ժայռային մողեսների արյան մակաբույծներով և էկտոմակաբույծներով վարակվածության ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս տարբեր համեմատություններ կատարել, ելնելով նրանց մակաբուծային ընկալունակությունից: Հայտնի է, որ բացի մի շարք կենսական գործոններից, մակաբուծային վարակվածության վրա ազդում են նաև ոչ կենսական բազմաթիվ գործոններ, ջերմաստիճանը, խոնավությունը, լանդշաֆտը և այլն [8, 9, 14, 15]:

Վերջին ժամանակներս գիտության տարբեր բնագավառներում խիստ կարևորվում է էկոլոգիական ուղղվածությունը և այդ թվում շրջակա միջավայրի ազդեցությունը մակաբուծաֆաունայի ձևավորման վրա: Այսինքն, տարբեր կենսական և ոչ կենսական գործոնների ազդեցությունը տիրոջ մակաբույծներով վարակվածության աստիճանի և տեր-մակաբույծ համակարգի ամենատարբեր բնագավառների վրա: Նման աշխատանքներ տարբեր խմբերի մակաբույծների վրա կատարվել են Դոգելի [4], մի շարք հետազոտողների կողմից [4, 7, 12]: Սակայն եթե նման աշխատանք- ները վերաբերում են կարգաբանական տարբեր խմբերի պատկանող մակաբույծների, ապա արյան մակաբույծների վերաբերյալ աշխատանքները չափազանց թերի են [6, 10]:

Ինչ վերաբերում է սողունների, հատկապես ժայռային մողեսների արյան մակաբույծներով վարակածության կախվածությանը շրջակա միջավայրի պայմաններից, ապա նման աշխատանքներ գրականության մեջ գործնականում բացակայում են:

Այս աշխատանքում փորձում ենք պարզաբանել մակաբույծ-տեր փոխհարաբերությունները և 2 տեսակ ժայռային մողեսների (*D. nairensis* և *D. raddei*) մակաբույծներով վարակածության աստիճանը՝ կախված նրանց բնակության վայրից և սեզոնից:

Նյութ և մեթոդ: Աշխատանքի համար որպես նյութ են օգտագործվել 2011 թ. մայիս-հուլիս հավաքված ժայռային մողեսները: Հավաքը կատարվել է Երևանի Հրազդանի կիրճի (որտեղ հանդիպում է *D.nairensis* տեսակը) և Գեղարդի տարածքներից (որտեղ հանդիպում է *D. raddei*-ի տեսակը): Մայիս-հուլիս ամիսների ընթացքում յուրաքանչյուր պոպուլյացիայից կատարվել է 3-ական հավաք: Բռնվել են *D.nairensis*-ի 33 (17 էգ և 16 արու)՝ յուրաքանչյուր հավաքից 11 և *D. raddei* 30 առանձնյակ (15 արու և 15 էգ)՝ յուրաքանչյուր հավաքից 10-ական սեռահասուն առանձնյակ:

Կենդանիները համարակալվել են, նշվել է սեռը, չափվել է մարմնի ընդհանուր երկարությունը: Քսուքի համար անհրաժեշտ արյունը վերցվել է պոչից [17]: Արյունը կաթեցրել ենք առարկայակիր ապակու վրա և մեկ այլ ապակիով տարածել: Արյան և լյարդի վարակվածության համեմատության համար յուրաքանչյուր մողեսի լյարդից ստացել ենք պատրաստուկներ, որոնք համարակալվել են կենդանու արյան քսուքին համապատասխան: Ստացված քսուքները և լյարդի պատրաստուկները չորացվել են, ֆիքսվել մեթանոլով, որից հետո ներկվել Գիմզա-Ռոմանովսկու մեթոդով: Ներկված քսուքները դիտել ենք մանրադիտակի տակ՝ x 400 խոշորացմամբ: Յուրաքանչյուր քսուքում պատահական ընտրված դաշտերում հաշվել ենք 2000 էրիթրոցիտ և դրանցում եղած վարակված էրիթրոցիտների քանակը: Արյան բոլոր մակաբույծները, ըստ ձևաբանական տարբերությունների բաշխվել են վեց ձևի [1, 2, 5, 11], որոնցից 1-ին, 2-րդ և 6-րդ ձևերը պատկանում են *Hepatozoon sp.*-ին, իսկ 2-րդ, 3-րդ և 4-րդ ձևերը՝ *Karyolysus sp.*-ին: Կատարվել է նաև էկտոմակաբույծների՝ մողեսների տզերի (*Sauronyssus saurarum*) հավաք (ընտանիք գամազայիններ): Հավաքված բոլոր առանձնյակները գտնվել են պրոտոնիմֆայի փուլում [3]:

Արդյունքներ և քննարկում: Հավաքված *D. nairensis*-ի Հրազդանի կիրճից որսված 34 առանձնյակի վարակվածությունը ընթանում է տարբեր կերպ (աղ.1).

Աղ.1. *D. nairensis* տեսակի վարակվածության էքստենսիվությունն ու ինտենսիվությունը

Տարեթիվ	Քանակ (արու/էգ)	Վարակված առանձնյակների քանակը (արու/էգ)	Վարակման էքստենսիվությունը (արու/էգ)	Վարակման ինտենսիվությունը (արու/էգ)
11.05.2011	10 (5/5)	7 (4/3)	70% (40/30%)	138.1 (36.6/27.4)
27.05.2011	6 (5/1)	6 (5/1)	60% (50/10%)	147.8 (167.6/22)
15.06.2011	10 (5/5)	8 (3/5)	80% (30/50%)	152.5 (33.4/271.6)
05.07.2011	8 (2/6)	0	0	0

D. nairensis տեսակի երեք ամիսների ընթացքում հավաքված մողեսների վարակման էքստենսիվությունը կազմում է 38.23% (արու – 29.4%, էգ – 47.06%), ինտենսիվությունը՝ 112.3 (արու 73.35, էգ 151.6): *D. nairensis*-ի տեսակին պատկանող մողեսների վարակման ընթացքի փոփոխությունը երեք ամիսների ընթացքում արտահայտվում է հետևյալ կերպ (նկ.1).

Նկ.1. Վարակման ընթացքի փոփոխությունն ըստ սեզոնի

Ինչպես երևում է նկ.1-ից, մողեսների առաջին հավաքի ժամանակ վարակվածությունը եղել է բավականին բարձր ինչպես արյան, այնպես էլ լյարդի քսուքներում: Հաջորդ՝ մայիսի վերջին կատարված հավաքի արդյունքները ցույց են տալիս վարակվածության զգալի նվազում:

Վարակվածության ամենաբարձր աստիճանը դիտվել է հունիսի 15-ին հավաք-ված առանձնյակների փորձանմուշներում, իսկ արդեն վերջին հավաքի ժամանակ հավաքված առաձնյակների քուսքներում առհասարակ վարակվածություն չի գրանցվել (նկ.2):



Նկ.2. *D. nairensis* տեսակի էգերի և արուների վարակվածության համեմատությունը

Էգերի և արուների համեմատությունից երևում է, որ տարբեր ժամանակաշրջան-ներում շատ ավելի վարակված են եղել էգերը: Դա առավել արտահայտված է մայիսի սկզբի և հունիսի հավաքների ժամանակ, մայիսի վերջին էգերի և արուների միջև տարբերությունը կրճատվում է, իսկ արդեն հուլիսին երկուսի մոտ էլ դիտվում է վարակվածության մարում: Մակաբույծների 6 ձևերի համեմատությունը տալիս է հետևյալ արդյունքը (նկ. 3, 4).



Նկ. 3, 4. *D. nairensis* - ի արյան և լյարդի քուսքների վարակվածությունը վեց ձևերով

Արյան քուսքներում վարակվածություն չի դիտվել 1-ին և 2-րդ, իսկ լյարդում՝ 1-ին և 5-րդ ձևերով: 3-րդ, 4-րդ և 6-րդ ձևերով վարակվածությունը գրեթե նույնն է: Սակայն լյարդի քսուքում դիտվում է վարակվածություն 4-րդ ձևով: Դա կարելի է բացատրել նրանով, որ սա իրենից ներկայացնում է սպորավորների զարգացման սկզբնական փուլ, հետևաբար, հանդիպման հաճախությունը լյարդի բջիջներում պետք է լինի առավել մեծ:

D. raddei-ի ուսումնասիրված 28 առանձնյակի մոտ՝ կախված սեռից նույնպես դիտվում են նկատելի փոփոխություններ (աղ.2).

Աղ.2. *D. raddei* տեսակի վարակվածության էքստենսիվությունն ու ինտենսիվությունը

Տարեթիվ	Քանակ (արու/էգ)	Վարակված առանձնյակների քանակը (արու/էգ)	Վարակման էքստենսի վությունը (արու/էգ)	Վարակման ինտենսիվությունը (արու/էգ)
12.05.11	10 (5/5)	7 (4/3)	70% (70/30%)	20 (27.6/12.4)
06.06.2011	8 (4/4)	5 (2/3)	50% (20/30%)	10 (10/10)
26.06.2011	10 (6/4)	10 (6/4)	100% (60/40%)	116.6 (170.5/35.75)

D. raddei երեք ամիսների ընթացքում հավաքված մողեսների վարակման էքստենսիվությունը կազմում է 78,57 % (արու 80 %, էգ 76,92 %), ինտենսիվությունը՝ 51,57 (արու 79,87, էգ 18,85): Առաջին իսկ հայացքից պարզ է դառնում, որ *D. raddei*-ի վարակվածությունն անհամեմատ ավելի քիչ է, քան *D. nairensis*-ի մոտ: Ըստ սեռնի այս տեսակի վարակվածության փոփոխությունը երևում է գծապատկերի վրա (նկ.5).



Նկ. 5. Վարակման ընթացքի փոփոխությունն ըստ սեռնի

D. nairensis մողեսների մոտ մայիսի սկզբի վառ արտահայտված վարակվածությունն այստեղ բացակայում է: Այդ ժամանակաշրջանում վարակվածությունը շատ փոքր է: Հունիսի սկզբին այն գրեթե մարում է և իր գագաթնակետին է հասնում հունիսի վերջին: *D. raddei* մողեսի արյան քսուքների և լյարդի պատրաստուկների արուների և էգերի համեմատությունը արտահայտվում է հետևյալ կերպ (նկ. 6).



Նկ. 6. *D. raddei* տեսակի էգերի և արուների վարակվածության համեմատությունը

Գրեթե բոլոր օրինակներում արուների և էգերի վարակվածությունն ընթանում է միանման, բացառություն են կազմում վերջին՝ հունիսի 26-ի հավաքի արդյունքները, որտեղ արուների վարակվածության աստիճանը զերազանցապես տարբերվում է էգերից: Վարակվածությունը լյարդի և ծայրամասային արյան քսուքներում ընթանում է միանման: Մակաբուծային 6 ձևերով վարակվածությունը նույնպես միանման չէ և խիստ տատանվում է ինչպես արյան, այնպես էլ լյարդի քսուքներում (նկ.7, 8):



Նկ. 7, 8. *D. raddei* - ի արյան և լյարդի քսուքների վարակվածությունը վեց ձևերով

Նկ. 7, 8-ից երևում է, որ արյան և լյարդի քսուքներում 2-րդ, 4-րդ և 5-րդ ձևով վարակվածություն չի դիտվել, իսկ մնացած ձևերով վարակվածությունն ընթացել է գրեթե միանման: Այսպես, ուսումնասիրված երկու տեսակներն իրարից տարբերվում են վարակվածության զարգացման ընթացքով, սակայն երկու տեսակների մոտ էլ 6-րդ ձևով խիստ վարակվածությունը կարող է կապված լինել տեսակային առանձնահատկությունների կամ զարգացման այս փուլի երկարատևության հետ:

Ըստ գրականության տվյալների, կենդանական տարբեր խմբերի մոտ մակաբույծներով վարակմանն ավելի հակված են արուները (կախված նրանց մեծ ակտիվության և անդրոգեն հորմոնի իմունոսուպրեսոր հատկությամբ), քան էգերը [16, 18]: Մեր աշխատանքում այս պնդումը հակասական է. *D. nairensis* տեսակի մոտ առավել վարակ-ված են էգերը, իսկ *D. raddei* տեսակի մոտ՝ արուները: Ընդհանուր առմամբ, *D. nairensis*-ի պոպուլյացիան անհամեմատ ավելի վարակված է, քան *D. raddei*-ինը: *D. nairensis*-ի առավելագույն վարակվածությունն ընկած է մայիսի վերջից հունիսի կեսեր, իսկ *D. raddei*-ի մոտ՝ հունիսի վերջ: Տվյալ շրջանը համընկնում է այս երկու տեսակի բեղմնավորման ժամկետների հետ: Այսինքն, այդ ժամանակաշրջանում երկու տեսակների արուների մոտ դիտվում է բարձր ակտիվություն՝ հակառակ սեռի առանձնյակ գտնելու նպատակով: Եթե փորձենք այդ հանգամանքով բացատրել *D. raddei*-ի արուների առավել մեծ վարակվածությունը, ապա կառաջանա հակասություն կապված *D. nairensis* տեսակի հետ, քանի որ նման ակտիվ ժամանակաշրջանում նրանց վարակվածությունը զգալի ցածր է:

Արյան և լյարդի համեմատությունը ցույց է տալիս, որ վարակվածությունը երկու դեպքում էլ ընթանում է միանման: Դա բացատրվում է արյան մակաբույծներին բնորոշ կենսաշրջանով, երբ տեղի է ունենում լյարդային շիզոգոնիա, որին հաջորդում է մերոզոիտների անցումը ծայրամասային արյուն: Էրիթրոցիտներում տեղի է ունենում էրիթրոցիտային շիզոգոնիա և հեմոգրեգարինների հետագա զարգացում:

Այսպիսով, երկու տեսակի ժայռային երկսեռ մողեսների վարակվածության նման տարբերությունները մնում է միայն կապել նրանց ապրելավայրի և վերջիններիս բնակլիմայական պայմանների հետ.

Երևանը գտնվում է ծովի մակերևույթից 900-1300 մ, իսկ Գեղարդը՝ 1450 մ բարձրության վրա: Երևանի կլիման չորային է, այդ ժամանակաշրջանում օդի միջին ջերմաստիճանը կարող է հասնել մինչև 30⁰C-ի, իսկ Գեղարդինը՝ 18⁰C: Երևանի համեմատ բարձր է Գեղարդի տեղումների քանակը և օդի հարաբերական խոնավությունը: Երևանի լանդշաֆտը չոր կիսաանապատային է, Գեղարդինը՝ խոնավ տափաստանային: Այսինքն, այս դեպքում ավելի մեծ բարձրություններում և բարձր խոնավության պայմաններում վարակվածությունն ավելի փոքր է:

Երևանի հավաքած ողջ նյութը խիստ վարակված է եղել էկտոմակաբույծներով՝ մողեսային տզերով (*Sauronyssus saurarum*): Գեղարդի պոպուլյացիայում տզեր չեն հայտնաբերվել: Նյութի հավաքի ժամանակաշրջանը համընկնում է տզերի ձվերից պրոտոնիմֆաների դուրս գալուն, որոնք էլ հանդիսանում են ակտիվ սնվող փուլ և վարակման հիմնական աղբյուր:

Մեծ է նաև անթրոպոգեն՝ մարդածին գործոնի ազդեցությունը (արդյունաբերական թափոններ, քիմիական նյութեր, կանաչապատ տարածքների կրճատում), ինչը բերում է շրջակա միջավայրի ընդհանուր (օդի, հողի, ջրի) աղտոտման: Կենդանիների բնական կենսամիջավայրերի ամբողջականության խախտումն ու կրճատումը առաջ են բերում սթրեսային իրավիճակների, որը թուլացնում է իմունային համակարգը և ակտիվացնում մակաբույծներին: Երևանի տարածքը շատ ավելի աղտոտված է, քան Գեղարդինը: Դա էլ իր հերթին ցույց է տալիս արյան մակաբույծների կախվածությունը շրջակա միջավայրի պայմաններից:

Այսպիսով, ուսումնասիրության արդյունքներից պարզ է դառնում, որ մակաբուծային վարակվածությունն ուղղակիորեն կապված է էկոլոգիական պայմաններից և էկտոմակաբույծներից, իսկ սեռից կախվածություն մակաբուծությունը տվյալ աշխատանքում հակասում է մինչ այդ գրականության մեջ եղած տվյալներին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Հարությունյան, Թ.Կ.*, Ժայռային մողեսների (*Darevskia raddei* և *Darevskia portchinskii*) մակաբույծներով վարակվածությունը՝ կախված սեռից և տեսակից, *LXIII*, 2, 2011:

2. *Бейер Т.В., Селиванова Г.В.* Цитофотометрическое исследование количества ДНК в ядрах гемогрегарин из диплоидных и триплоидных скальных ящериц Армении. Цитология, *XI*, 739-743 ст., 1969.
3. *Беклемишев В.Н.* Определитель членистоногих, вредящих здоровью человека. М., Мысль, 308 с., 1958.
4. *Догель, В.А.* Общая паразитология. 3-е издание, переработанное и дополненное Полянским Ю.И. и Хейсиным Е.М., Л., Изд-во ЛГУ, 402 с., 1962.
5. *Красильников Е.Н.* Паразиты скальних ящериц Кавказа. Сб. научн. работ Волгоградск. пед. инст., *2*, 84-90, 1967.
6. *Подшивалов, А.А., Ни Г.В.* Паразиты крови птиц Оренбургской области. Материалы Меж рег. науч. конф. “Паразитологические исследования в Сибири и Дальнем Востоке”, Новосибирск, с. 149, 2002.
7. *Anderson L.L., Ford J.J., Melampy R.M.* Maintenance of pregnancy in rats on deficient diets. J. Reprod. Fertil. May; *38,* 1, 11-20, 1974.
8. *BajerA., Pawelczyk A.et al.* Factors affecting the component community structure of haemoparasites in bank voles (Clethrionomys glareolus) from the Mazury Lake District region of Poland." Parasitology, *122*, 43-54, 2001.
9. *Bennett Gordon F., Cameron Marilyn.* Seasonal prevalence of avian hematozoa in passeriform birds of Atlantic Canada.Canadian Journal of Zoology, 1974, 52, 10), 1259-1264, 10.1139/z74-167.
10. *Bennett G.F., Okia N.O., Ashford R.G., Campbell A.G.* Avian Haemoproteidae. II. Haemoproteus enucleator sp. n. from the kingfisher, Ispidina picta (Boddaert)., J Parasitol. Dec; *58*, 6, 1143-7, 1972.
11. *Beyer T.V. and Sidorenko N.V.* Karyolysus sp. (Haemogregarinidae, Adeleida, Apicomplexa): host-parasite relationships of persisting stages. J. Protozool. *31*, 513–517, 1984.
12. *Crofton* A model of host-parasite relationships. Dec; *63*, 3, 343-64, 1971.
13. *Darevsky I.S.* Systematics and ecology of rock lizards (Lacerta saxicola Eversmann) in Armenia [in Russian]. Zool. sb. AN Armenia SSR, *10*, 27-57, 1957.
14. *Forbes M., P.J. Weatherhead, et al.* Blood parasites of blue grouse: variation in prevalence and patterns of interspecific association." Oecologia, *97,* 520-525, 1994.
15. *Fuller C.A.* Population dynamics of two species of Eimeria (Apicomlexa: Eimeriidae) in deer mice (Peromyscus maniculatus): biotic and abiotic factors.J. Parasitol. *82,* 220-225, 1996.
16. *Lang, J.D.* Factors affecting the seasonal abundance of ground squirrel and wood rat fleas (Siphonaptera) in San Diego County. California, J. Med. Entomol., *33*, 790-804, 1996.
17. *Sevinç M., Urtah, U,S., Yldrmhan, H.S.* Morphological Observations on the Erythrocyte and Erythrocyte Size of Some Gecko Species, Turkey, Asiatic Herpetological Research *10*, pp. 217-223, 2004
18. *Tinsley R.C.* The effects of host sex on transmission success. Parasitol. Today,190-195, 1989.

Ստացվել է 11.03.2013

Հայաստանի Գիտությունների Ազգային Ակադեմիա
Национальная Академия Наук Армении
National Academy of Sciences of Armenia

Հայաստանի Կենսաբանական Հանդես
Биологический Журнал Армении
Biological Journal of Armenia

 Համառոտ հաղորդումներ *Краткие сообщения*   *Short communications*

Biolog. Journal of Armenia, 3 (65), 2013

APPLICATION OF MICROSATELLITE MARKERS FOR VARIETAL IDENTIFICATION GRAPE ROOTSTOCKS: PRELIMINARY ANALYSIS

DALLAKYAN M.V.[1], YESOYAN S.S.[1], HARUTYUNYAN F.A.[3], MELYAN G.H.[2], YESAYAN A.H.[1], HOVHANNISYAN N.A.[1]

1. Department of Ecology and Nature Protection, Faculty of Biology, Yerevan State University, bionellibiotech@yahoo.com; 2. Scientific Center of Viticulture, Fruit-Growing and Wine-Making; 3. Armenian National Agrarian University

In this study the possibility of application of SSR marker sets for grape rootstock identification in diverse genetic material was assessed. 65 rootstocks of 7 table grape varieties were investigated. The results of preliminary study prove the usefulness SSR marker sets for grape rootstocks identification and might be further optimized and studied in more details.

Grape – rootstock – microsatellite marker – genetic profile

Ուսումնասիրվել է միկրոսատելիտային մարկերների կիրառելիությունը խաղողի տնկի-ների մաքրասորտության որոշման համար: Ուսումնասիրվել է խաղողի 7 սորտի 65 նմուշ: Նախ-նական հետազոտությունների արդյունքները ցույց են տվել միկրոսատելիտային մարկերների կիրառելիությունը տնկիների նույնականացման համար և կարիք ունեն օպտիմացման ու հետագա ուսումնասիրության:

Խաղող – տնկի – միկրոսատելիտային մարկեր – գենետիկական պրոֆիլ

Изучена применимость микросателлитных маркеров для сортовой идентификации посадочного материала винограда. Проанализировано 65 образцов 7-и сортов винограда. Предварителньные результаты показали применимость микросателлитных маркеров для сортовой идентификации посадочного материала винограда и требуют дальнейшего изуче-ния и оптимизации.

Виноград – посадочный материал – микросателлитый маркер – генетический профиль

Grapevine (*Vitis vinifera* L.) is one of the economically important crops cultivated around the world. According to certain data sources, there are some 5,000-6,000 cultivars of *Vitis vinifera* are known globally (Alleweldt and Dettweiler 1994).

The fast vegetative propagation has supported widespread distribution of different cultivars in the world (Dion1977; Fregoni 1991). As a result some cultivars have more than 100 synonyms, and numerous homonyms also exist (http://www.genres.de/idb/vitis/). In addition, the different languages used in the east European countries produce different spellings of the same variety name, which may have caused double registering. Simultaneously accurate identification of accessions is a most important issue for the sustainable conservation, management and use of germplasm, the clarification of synonymy, homonymy, and misnaming is a significant problem in the grapevine collections that exist worldwide (Dettweiler et al. 2000a).

The identification of grape cultivars has traditionally been based on ampelography, which is the analysis and comparison of morphological characters of leaves, shoot tips, fruit clusters, and berries (Boursiquot and This 1996; IPGRI UPOV OIV 1997; Galet

2000). Some genetically related cultivars are morphologically very similar and difficult to differentiate by visual comparison (Aradhya et al. 2003). On the other hand, intravarietal clones can differ considerably in phenotype even though they have virtually identical DNA profiles (Vignani et al. 1996; Franks et al. 2002; Riaz et al. 2002).To overcome these limitation molecular biology approaches has been used as molecular markers and DNA barcodes to differentiate, characterize, and identify grapevine accessions. Microsatellite markers (Sefc et al. 2000; Aradhya et al. 2003; This et al, 2004) are favored among RFLP, AFLP or RAPD markers because of their combination of polymorphism, reproducibility, and their codominant nature (Sefc et al. 2001). GENRES081 was a European Union research project focused on the compilation, standardization, and exchange of information concerning grapevine genetic resources (Dettweiler et al. 2000b; This and Dettweiler 2003; http://www.genres.de/vitis/) was developed reference microsatellite profiles for true-to-type identification of grapevine accessions.

The aim of this study was to assess applicability of microsatellite markers for grape variety identification within genetically diverse rootstocks.

Materials and methods. Within collaboration with ''Maran'' wine making company and Scientific Center of Viticulture, Fruit-growing and Wine-making and under the project financed by Armenian Harvest Promotion Centre 65 mixed rootstocks of 7 raisin grape varieties were analyzed. The leaf samples were collected from Dalaril, Eraskhahun, Tandzut, Bmbakashat, Mec Armair, Vrein Artashat, Arevik regions. The leaves of grape verieties from living collection were used as references (Deghin Yerevni, Sev Kishmis, Karmir Icaptuk, Parvana, Marmari, Caradguyn Yerevni). DNA from leaves were extracted by using modified by us cetyl trimethylammonium bromide (CTAB) (Doyle & Doyle, 1987) with addition of 2% PVP to remove polyphenols. 50-100 mg of fresh tissue were homogenized using homogenizer Tissue Lyzer LT (Qiagen) to avoid cross contamination among samples. Extracted DNA quantity and quality were evaluated using Multiskan Microplate Spectrophotometer (Thermo Scientific). In addition, 10 µl of each DNA extract will be loaded and visualized on a 2% agarose gel. The following SSR primers were analyzed for grapevine cultivars genetic profiling and identification: VVS2 (Thomas and Scott, 1993), VVMD5, 7 (Bowers et al, 1996), VVMD25, 27, 28, 32 (Bowers et al, 1999), ZAG62 and ZAG79 (Sefc *et al,* 1999). These are di-nucleotide repeat sequence motifs with allele sizes ranging from 129 bp (the smallest with VVS2) through to 315 bp (the largest for VVMD36). Amplification were performed on standard PCR (Techne, gradient termal cycler) in 20 µl reactions in 96 well plates. For PCR the Type It Mcrosatellite Kit (Qiagen) was used added with 0.25 µM ofeach primer and 50 ng genomic DNA. PCR products will be analyzed in Qiaxcel system using DNA high resolution kit, by method OM700 by with injection time 5-7 minutes.

Results The preliminary results of the comparison of genetic profiles allowed dividing studied rootstocks into the three groups. The first group comprises 85% of the studied rootstocks and includes genetically identical to the reference varieties rootstocks.

The second group comprises around 15% where genetic profiles of studied rootstocks are differing from those of reference varieties. This proves that these rootstocks might be the clones of the varieties and cannot be further used for planting and production purposes, but might be interesting sources for breeding programmes. Within the third group the rootstocks with absolutely different genetic profiles were included.

So, the results of preliminary study proves the usefulness of SSR marker sets for grape rootstocks identification and might be further optimized and studied in more details.

REFERENCES

1. Alleweldt G, Dettweiler E (1994) The genetic resources of Vitis: world list of grapevine collections, 2nd edn. BAZ IRZ Geilweilerhof, Siebeldingen.
2. Aradhya MK, Dangl GS, Prins BH, Boursiquot JM, Walker AM, Meredith CP, Simon CJ (2003) Genetic structure and differentiation in cultivated grape Vitis vinifera L. Genet Res (Camb) 81:179–192.
3. Boursiquot JM, This P (1996) Les nouvelles techniques utiliser es en amper lographie: informatique et marquage. In: La viticulture a` l'aube du IIIe` me Miller naire. J Int Sci Vigne Vin hors ser rie, pp 13–23.
4. Bowers JE, Dangl GS, Vignani R, Meredith CP: Isolation and characterization of new polymorphic simple sequence repeat loci in grape (Vitis vinifera L.). *Genome* 1996, 39:628-633.
5. Bowers JE, Dangl GS, Meredith CP: Development and characterization of additional microsatellite DNA markers for grape. *Am J Enol Vitic* 1999, 50:243-246.
6. Dettweiler E, Jung A, Zyprian E, ToË pfer R (2000a) Grapevine cultivar MuË ller-Thurgau and its true to type descent. Vitis 39:63–65.
7. Dettweiler E, This P, Eibach R (2000b) The European network for grapevine genetic resources conservation and characterization. In: XXVth World Congress on Grape and Wine, Paris, June 2000, pp 1–10.
8. Dion R (1977) Histoire de la vigne et du vin en France des origins au XIX\gravee me sie` cle. Flammarion, Paris, p 768.
9. Doyle J, Doyle J (1990) Isolation of plant DNA from fresh tissue. Focus 12: 13-15.
10. Fregoni M (1991) Origines de la vigne et de la viticulture. Musumeci, Quart Italie, p 160.
11. Franks T, Botta R, Thomas MR, Franks J (2002) Chimerism in grapevines: implication for cultivar identity, ancestry and genetic improvement. Theor Appl Genet 104:192–199.
12. IPGRI, UPOV, OIV (1997) Descripteurs de la vigne (Vitis spp.). Union internationale pour la protection des obtentions ver gertales. Gene`ve,Suisse/Office international de la Vigne et du Vin, Paris, France/Institut international des ressources phytoger nertiques, Rome.
13. Riaz S, Garrison KE, Dangl GS, Boursiquot JM, Meredith CP (2002) Genetic divergence and chimerism within ancient asexually propagated winegrape cultivars. J Am Soc Hortic Sci 127:508–514.
14. Sefc KM, Regner F, Turetschek E, Glцssl J, Steinkellner H: Identification of microsatellite sequences in Vitis riparia and their applicability for genotyping of different Vitis species. *Genome* 1999, 42:367-373.
15. Sefc KM, Lopes MS, Lefort F, Botta R, Roubelakis-Angelakis KA, Iban˜ ez J, Pejic I, Wagner HW, GloË ssl J, Steinkellner H (2000) Microsatellite variability in grapevine cultivars from different European regions and evaluation of assignment testing to assess the geographic origin of cultivars. Theor Appl Genet 100:498–505.
16. Sefc KM, Lefort F, Grando MS, Scott K, Steinkellner H, Thomas MR (2001) Microsatellite markers for grapevine: a state of the art. In: Roubelakis-Angelakis KA (ed) Molecular biology and biotechnology of grapevine. Kluwer, Amsterdam, pp 433–463.
17. This P, Jung A, Boccacci P, Borrego J, Botta R, Costantini L, Crespan M, Dangl GS, Eisenheld C, Ferreira-Monteiro F, Grando S, Ib6cez J, Lacombe T, Laucou V, Magalhres R, Meredith CP, Milani N, Peterlunger E, Regner F, Zulini L, Maul E: Development of a standard set of microsatellite reference alleles for identification of grape cultivars. *Theor Appl Genet* 2004, 109:1448-1458.
18. This P, Dettweiler E (2003) EU-project GENRES ct96 no81: European Vitis database and results regarding the use of a common set of microsatellite markers. Acta Hortic 603:59–66.
19. Thomas MR, Scott NS: Microsatellite repeats in grapevine reveal DNA polymorphisms when analysed as sequencetagged sites (STSs). *Theor Appl Genet* 1993, 86:985-990.
20. Vignani R, Bowers JE, Meredith CP (1996) Microsatellite DNA polymorphism analysis of clones of Vitis vinifera 'Sangiovese'. Sci Hortic 65:163–169.

Received on 25.08.2013